

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ
«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ»
ՊԵՏՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԵՂԵՌՆԻ ԿԱՆԽԱԶԳԱՑՄԱՆ ԵՎ
ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ**

*ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
«ԴՂՐԱՏՈՒՆ»
հրատարակչություն*

*ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
«ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՄ»
հրատարակչություն
2022*

Հոդվածների և ելույթների ժողովածուն տպագրվում է
Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի»
պետհավատարմագրված
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝

Չ. Վ. ԲԱԼԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Կ. Հ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Եղեռնի կանխագագսման և գոյաբանական պայքարի
արտահայտությունն արևմտահայ գրականության մեջ
Գիտաժողովի նյութեր. –

«Դիզակ պյուս», Ստեփանակերտ, 2022, 118 էջ:

© Գրքում գետեղված հեղինակներ, 2022
© «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2022
© «Դպրատուն» հրատարակչություն, 2022

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՅԱԼ ԴԱՐԻ ՄԿԶԲԵՐԻՆ. ԲԱՑԱՀԱՑՏՈՒՄՆԵՐ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ

20-րդ դարի առաջին տասնամյակները Արևմտահայաստանի հայության համար սոսկալի և կործանարար տարիներ էին. համիդյան ջարդարարությանն ու բռնապետությանը հաջորդել են 1909, 1915, 1920, 1922 թվականների ջարդերն ու հայրենագրությունը: Այդ ամենը արտացոլվել է արևմտահայ գրականության մեջ, և գրականագետներ Հ. Ռշտունին, Վ. Գաբրիելյանը, Ս. Թովիչյանը, Կ. Դանիելյանը դրանք ներկայացրել են Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ռ. Որբերյանի, Ռ. Սևակի, Վ. Թեքեյանի. Մ. Զարիֆյանի, Երուխանի, Թլկատինցու, Լ. Բաշլյանի, Առանձարի ստեղծագործությունների մանրակրկիտ բնութագրումներում:

Բանալի բառեր¹ Հայություն, սպանդ, ողբերգական պատկերներ, Երուխան, Մատթեոս Զարիֆյան, համիդյան բռնապետության տարիներ, «Դյուցազնորեն», Փարիզ, գոյատևման խնդիր, Կիլիկիա:

19-րդ դարի 90-ական թվականները և 20-րդի առաջին տասնամյակները Արևմտահայաստանի հայության համար սոսկալի ու կործանարար ժամանակներ էին: 1895-96 և մինչ 1908 թվականները Համիդյան ջարդարարությանն ու դաժան ռեակցիայի, բռնապետության տարիներ էին՝ Դանիել Վարուժանի բնութագրմամբ. «հայությունը կ'խեղդվեր սուրի և սովի մղձավանջին մեջ»: Հայության սպանդը վերընթաց պատկեր է ունենում 1909, 1915, 1920, 1922 թվականներին. և մի ժողովուրդ, որ երջանկահաս ու փառապանծ հայրենիք էր կերտում խելքի և մտքի գործությամբ, բազուկի և կայծակնապալաց եռանդի արարչագործությամբ, արժանանում է արյունահեղության ու հայրենագրության, տարաբախտ կյանքի և անհանգիստ ու աղավաղված ապրելակերպի:

Արևմտահայ իրականության այսպիսի ողբերգական պատկերներին անդրադարձ կատարելու և գեղարվեստորեն ներկայացնելու դժվարագույն խնդիրն առաջին հերթին բաժին է ընկնում արևմտահայ գրողին, մտավորականին: Փաստերը վկայում են, որ տասնյակներով

արձակագիրներ ու բանաստեղծներ գրչի թեմա են դարձրել արևմտահայ մարդու ծանրագույն կենցաղի, տեղահանության ու հայրենագրության, թուրքական յաթաղանի բաժին դառնալու, օտար աշխարհում հաճելու նկարագրություններն ու պատմությունները:

Արևմտահայ գրականությունը գեղարվեստական խոսքի մեծագույն մշակներ ունի, ովքեր իրենց ստեղծագործություններով խորագին հիմքեր են նետել այդ գրականության զարգացման և բովանդակալից ապագա կերտելու համար:

Սույն հանձնառության կատարման համար առիթ եղավ թերթելու «Հայ դասականների գրադարան»-ի՝ արևմտահայ հեղինակների մի 5-6 գիրք, որոնք ներառում են 10-ից ավելի հեղինակներ՝ Սիամանթո, Մեծարենց, Վարուժան, Դուրյան, Պարոնյան, Երուխան, Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սևակ, Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան, Գ. Զոհրապ, Ե. Օտյան, Թլկատինցի, Առանձնար, Լ. Բաղայան և այլք, որոնք թեմատիկ, թե կատարողական տարբերություններով բովանդակում են արևմտահայ գրականությունը, որը հայ մշակույթի պատմության մնալուն, փայլատակող գոհարներից մեկն է:

Մեզ համար նույնքան դրվատանքի արժանի են այն գրականագետները, ովքեր ջանք չեն խնայել մասնագիտական խորությամբ քննելու և ներկայացնելու հիշյալ հեղինակների ստեղծագործությունները, որոնք, անշուշտ, ընթերցողի համար իմացական կողմնորոշիչ նշանակություն ունեցող երևույթ են:

Հիշենք այն գրականագետներին.

1. **ՀԵՎՏՈՐ ՌՇՏՈՒՆԻ.** Սիամանթոյի և Դանիել Վարուժանի երկերը կազմեց, առաջաբանները, ծանոթագրությունները և բառարանները գրեց, 534 էջ, Ե., 1979:

2. **ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ.** ա) Արևմտահայ պոեզիան 20-րդ դարի սկզբին (Բանաստեղծական չորս անհատականություն)՝ Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան, Երկեր: 478 էջ, Ե., 1981:

բ) Դանիել Վարուժան, Երկեր: Կազմեց, առաջաբանը գրեց, ծանոթագրեց, 576 էջ, Ե., 1984:

3. **ՍՏԵՓԱՆ ԹՈՓՅԱՆ.** Երուխան: Երկեր: Վեպ, նովելներ: Առաջաբան, 606 էջ, 1981:

4. **ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ.** Թլկատինցի, Լևոն Բաշայան, Առանձնար: Երկեր: Առաջաբան: Երեք դիմանկար, 624 էջ, Ե., 1982:

Այս եղանակով արևմտահայ բազմաթիվ գրողների կյանքի և ստեղծագործության վրա գրականագետները մասնագիտական լույս են սփռում ընթերցողին ճանաչ դարձնելու տրամադրությամբ:

Արևմտահայ գրականության ձևավորման ընթացքն առնչվում է հասարակական-քաղաքական պայմանների հետ: Գրականագիտությունն այդ գրականության զարգացման երեք շրջան է ընդունում.

ա) 1895-1908 թթ.՝ համիդյան բռնապետության տարիները, որի ընթացքում արևմտահայ մտավորականների մեծ մասը հեռանում է Թուրքիայի սահմաններից.

բ) 1908-1915 թթ., հաստատվում է Թուրքիայի սահմանադրությունը, Համիդը անկում է ունենում, տարագիր մտավորականների վերադարձ է տեղի ունենում, և գրականությունն ու մամուլը վերելք են ունենում.

գ) 1918-1922 թթ., զինադադարից հետո Պոլիս են գալիս ապրելու տենչով գրողներ՝ փորձելով գրականությունը հասցնել նախապատերազմյան վիճակին:

Սիամանթոն (Ատոմ Յարճանյանը) ծնվել է 1878 թ. Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում և այնտեղ է ապրում մինչև 13 տարեկան հասակը, հետո կյանքը նետել է եզերքից եզերք՝ Պոլսից Եգիպտոս, Ժնև, Փարիզ, Բոստոն և այլուր: Գարեգին Սրվանձտյանն է Ակնում բանաստեղծական անվան մկրտություն կատարել: Ժնևում, Փարիզում գրական նոր հոսանքների հետ է շփվում: Առաջին իսկ գործերով՝ «Դյուցազնորեն» վերնագրով (Փարիզ, 1902), Վարուժանի արտահայտությամբ՝ ճանաչվել է որպես «հոյակապ և հրաբորբոք տաղանդ»: Ծայրահեղ վատթար պայմանները, հիվանդությունը, հոր մահը, խոր սարսափն ու կարիքը արտասովոր լիցք ու եռանդ են տալիս երիտասարդին՝ ստեղծելու «Հայրդիներ»-ի երեք շարքը և «Հոգեվարքի և հույսի ջահերը» (Փարիզ, 1907): 1908-ին վերադառնում է Պոլիս տարագիր գրողների նման, իսկ 1909 թ. տեղափոխվում է Ամերիկայի Բոստոն քաղաքը, որտեղ էլ հրապարակում է «Հայրենի հրավեր» շարքը 1910 թվականին: 1909 թ. Կիլիկիայի հայկական ջարդերով ցնցվում է հայ իրականությունը, Սիամանթոն ծանր ապրումները փարատում է «Կարմիր լուրեր բարեկամես» գրքով, որտեղ սրվում է հայ ժողովրդի գոյատևման խնդիրը: Նա մերկացնում է Թուրքիայի և եվրոպական մեծ տերությունների քաղաքականությունը և անարգանքի բաժին դարձնելով ջարդարարներին՝ հաղթանակի կոչ է անում.

*Կրակեցե՛ք մինչև որ՝ Օտվուն վրա քնացող ռազմանավերն օտար,
Արդարության անդնդախոր իրենց քունեն թերևս թույլե մը արթննան...*
(158):

1913թ. Սիամանթոն մեկնում է Կովկաս, տեսնում Արարատյան դաշտը, Մասիսը, Էջմիածինը, Օշականը՝ իրագործելով անցյալի երազանքը:

Այդտեղ էլ հորինում է «Սուրբ Մեսրոպ» պոեմը, ջերմանում, ամրանում են կապերը Թումանյանի, Իսահակյանի, Շիրվանզադեի և արևելահայ ականավոր գործիչների հետ: 1914 թ. վերադառնում է Պոլիս, ինչպես արևմտահայ գրողների մեծ մասը, ընկնում է ծուղակը, և սկսվում է արևմտահայ մտավորականության բարբարոսական ջարդը:

Սիամանթոն մեծ ու բազմակողմանի բանաստեղծական ժառանգություն է թողել: Նա արևմտահայ պոեզիայի ինքնատիպ գաթաթներից մեկն է:

Նրա կյանքի պատմությունն ու գործն անմահացնող գրականագետ Հեկտոր Ռշտունին Գրականության և արվեստի թանգարանի՝ Սիամանթոյի ֆոնդի սևագրերից մի քերթվածք է վկայում.

*Եվ սպանեալ Արդարությունը Հայության,
Դժոխային աստվածներն իբր վրեժ
Իր կտրված ոսկի գլուխն իր ձեռքին մեջ,
Տիեզերքի մոխիրներովը՝ կարծես կուզե այս գիշեր
Մոլեգնորեն սա՝ անասնական մարդկությունը
մորկել... (11)*

Դանիել Վարուժանին (Չպուքքյարյան) բնութագրում են երկու գրականագետներ՝ Հեկտոր Ռշտունին ու Վազգեն Գաբրիելյանը, որոնք իրենց հմուտ բնութագրումներով ու վերլուծություններով լրացնում են միմյանց և Վարուժանին ներկայացնելու հարցում դատարկ տեղ չեն թողնում:

Վարուժանը ծնվել է 1884 թ. Սեբաստիայի նահանգի Բրգնիք գյուղում, որ մինչև 1915-ի եղեռնն ուներ 500 տուն հայ բնակիչ: Նա նոր էր ոտք դրել գյուղի դպրոցը, որ 1984-96 թթ. ջարդերը տարածվել էին Սասունից ողջ Արևմտահայաստան, նաև Սեբաստիա: Հայրը պանդուխտ էր Պոլսում, գնում է նրա մոտ, սովորում է Մխիթարյան նախակրթարանում, ապա՝ Քաղկեդոնի վարժարանում: Այդտեղ սեփական աչքով տեսնում է, թե ինչպես փողոցներում թուրք խուժանը մոր-

թում է անգեն ու խաղաղ աշխատանքով ապրող հայերին, անմեղներին բանտերն են լցնում:

Վարուժանի վկայությամբ՝ իրեն բանաստեղծ են դարձրել Դուրյանը և ծովագերքը:

1905 թ. հրատարակվում է նրա «Սարսուռներ» բանաստեղծությունների ժողովածուն, որի հիմնական բովանդակությունը «կյանքի տառապանքից ծնված վիշտն է և այդ վշտի ամոքման բաղձանքը» (Վ. Գաբրիելյան., 5):

1910-ին լույս է տեսնում նրա «Ցեղին սիրտը» գիրքը, որտեղ շունչ է առնում իրական հայրենիքի, տառապող ու երագող ժողովրդի կենդանի գոյությունը: Այդ գրքի սկզբում «Նեմեսիս» պոեմն է, որի քանդակագործի կերպարը հենց բանաստեղծի կերպարն է, որ մարմնավորում է ժողովրդի էությունը, որին ոգևորում և ըմբոստ պայքարի է տանում, իսկ Նեմեսիսի՝ վրիժառության աստվածուհու արձանը՝ խորհրդանշում է սույն գրքի նյութը, որի վերնագրերը խոսուն են՝ հազեցած ճշմարիտ գաղափարներով՝ «Անիի ավերակներու մեջ», «Հայրենիքի ոգին», «Ձոն», «Ջարդը», «Կիլիկյան մոխիրներուն», «Մարած օջախ» և այլն:

Հարգարժան գրականագետները մասնագիտական խորությամբ և պատասխանատվությամբ ներկայացրել են Վարուժանի ստեղծագործության բոլոր ժողովածուների՝ «Սարսուռներ», «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր», «Հացին երգը», նույնիսկ գրքերից դուրս մնացած բանաստեղծությունների թեմատիկ առանձնահատկություններն ու նրանց գաղափարական արժեքները, կարևորել են նաև հեղինակի արձակ էջերն ու նամակները:

Վարուժանի կյանքը կարճ եղավ՝ 31 տարի. 1915-ի ապրիլի 24-ին հայ մյուս մտավորականների հետ աքսորեցին և օգոստոսի 26-ին գազանաբար սպանեցին նաև Դանիել Վարուժանին:

«Վարուժանն իրոք հասավ պոեզիայի բարձունքը՝ «ապագայի մարդերուն» նվիրելով «հզոր երգ մը», որով մեր պատմական ընթացքի ճգնաժամին կանգնեց աշխարհի առջև իբրև հայ ժողովրդի վշտի և ցասման, արդարության և սիրո բոցաշունչ թարգման» (Հ. Ռշտունի, էջ 222):

«Վարուժանը արդիական բանաստեղծ է: Նրա պոեզիան նվաճել ու նվաճում է նոր ընթերցողների՝ երեկ, այսօր... վաղը» (Վ. Գաբրիելյան, էջ 18):

ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ մի հատորում հերթով բնութագրում է Ռուբեն Որբերյանի, Ռուբեն Սևակի, Վահան Թեքեյանի, Մատթեոս

Զարիֆյանի ստեղծագործությունները՝ կենսագրական տվյալներով հանդերձ, ուլքեր, լինելով Սիամանթոյի, Մեծաբենցի, Վարուժանի ժամանակակիցները, արևմտահայ գրականության, հատկապես պոեզիայի բնագավառում ինքնուրույն և տպավորիչ հետք են թողել: Նրանք ապրել և ստեղծագործել են տարբեր վայրերում՝ ստեղծելով հայրենասիրական գրականության արժեքավոր երկեր:

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ մինչև 1904 թ. ապրել է Թուրքիայում, ապա Աֆրիկայում և Ֆրանսիայում մինչև 1931թ., Ռուբեն Սևակը ժնկում ու Պոլսում ստեղծագործել է 1905-1915 թթ., Մատթեոս Զարիֆյանը Պոլսում ստեղծագործել է 1919-1924 թթ., Թեքեյանը սկսել է 90-ական թվականներից՝ ապրելով Պոլսում, Եվրոպայում ու Մերձավոր Արևելքի երկրներում մինչև 1945 թ.՝ դառնալով նաև Սփյուռքի բանաստեղծ:

Ռ. Որբերյանի «Հիշատակաց ծաղիկներ» (1893 թ.) առաջին գրքույկի մասին Վ. Գաբրիելյանը նշում է, որ նրանում «գերակշռում են մոայլ, թախծոտ, լալկան էջերը», իսկ 1894-1904 թթ. «Հակապատկեր»-ի բանաստեղծություններում «հայրենի տան, բնության ու կյանքի մասին խոհերն են», 1904-1920 թթ. «Ովասիս», (1920 թ.) ժողովածուում մի գաղափար է զարգացնում՝ Հայրենիք և գեղեցիկ կյանք, հայրենիքը ազատ տեսնելու բուռն ցանկություն:

«Ծփանքներ» պոեմում Բայրոնին դարձնում է ուղեկցող հերոս, «որպեսզի նա տեսնի հայության տառապանքները և իր հանձարեղ երգով մեզ ապավեն դառնա»:

Որբերյանի «Աղամին անեծքը» պոեմն էլ մի ձոն է մարդուն, մարդկային ըմբոստ ոգուն: Նա իր դարի հայրենասեր քաղաքացին դարձավ և իր գրչով նպաստեց ժողովրդի հայրենասիրական ոգու ամրապնդման գործին:

ՌՈՒԲԵՆ ՄԵՎԱԿԸ ստեղծագործել է 1907-1915 թվականներին: Մասնագիտությամբ բժիշկ էր, գրել է նաև շուրջ 150 բանաստեղծություն և պոեմ, 30-ի հասնող արձակ գործեր: Կենդանության օրոք լույս տեսավ միայն «Կարմիր գիրքը»՝ որպես արձագանք 1909 թ. Կիլիկյան ջարդի. Իր գրքին վերադիր արյան գույնը խորհրդանշում էր հայկական ջարդերը, ժողովրդի քաղաքական ճնշումները:

Հայերի ջարդերին նվիրում է մի շարք գործեր՝ «Ով իմ հայրենիքս», «Զանգակներ, զանգակներ», «Հայաստան», «Կիլիկյան երգեր»: Սևակը խիստ անհանգստանում և ասում է. «Ե՛րբ պիտի այս

ժողովուրդը ստրվի մարդկայնորեն կատղիլ» (13): Սևակի գործերը հատորում զբաղեցնում են 140 էջ:

Գրականագետ Վ. Գաբրիելյանը Սևակի ստեղծագործությունները հանգամանորեն բնութագրումներից հետո ամփոփիչ խոսք է ասում.

«Դարասկզբի ողբերգական դեպքերին ակնատես բանաստեղծը Սիամանթոյի, Վարուժանի, Թեքեյանի հետ միասին դարձավ այդ դեպքերի գեղագետ-տարեգիրը, հայրենասեր ու մարտնչող քաղաքացին, հրապարակախոսը, սրտացավ բժիշկը՝ բուն մասնագիտությամբ» (14):

Մի այլ խմբի երգերի համար էլ նշում է, թե «Սևակը նուրբ ու զգայուն քնարերգու է» (16):

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԸ գրական ասպարեզ է իջել 1901 թ. «Հոգևոր» գրքույկով: Իսկ հրապարակախոս, խմբագիր, ազգային ու մշակութային ճանաչված գործիչ Թեքեյանը 1910-ական թվականներին արդեն վայելում էր մեծ բանաստեղծի համբավը, որը հաստատվեց 1914 թվականի «Հրաշալի հարություն» ժողովածուով: Գրականագետը ինչ-որ խորհուրդ է տեսնում Թեքեյանի ծննդյան ու մահվան թվականների մեջ՝ 1878 թ. Արևմտահայաստանի ազատագրության հեռանկարի պատերազմը և մահը 1945-ին՝ Հայրենական մեծ պատերազմի վերջին տարում: Այդ ընթացքում ինչպիսի՞ն էր նրա կյանքը, կարդում ենք. «Պոլսում ծնված և օտար ավերում թափառած արևմտահայ մի զգայուն բանաստեղծի կյանք՝ լեցուն տազնապներով ու հույսերով, ցավով ու տառապանքով, ականատես 1895-96-ի, 1909-ի ու 1915-ի, 1920-ի ու 22-ի մահերի, տարագրության ու որբության մի ամբողջ Սփյուռքի:

Մեծերի մեծ ժամանակակիցը եղավ նա, Արփիարյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Զարդարյանի բարեկամն ու գրչակից եղբայրը, նրանց ոգևորությունների, կարոտների ու թռիչքների հավատարիմ արձագանքը, ապա՝ նրանց կորստի մորմոքն իր սրտում՝ տարագիր հայր Սփյուռքի անծայր տարածքում» (17):

Թեքեյանի ՀԱՅԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ մի ամբողջ ժողովրդի հոգեկան տվայտանքների, տրտմության և ուրախության, հուսալքության և հույսի արտահայտությունն է, իր բնութագրմամբ՝ նրա մեջ կան. «Փառքն ու արհավիրքը անցյալի, Ներկայի շվարումն ու ապագայի տեսիլքը...» (18): «Արարատյան դաշտին մեջ» շարքում կան հայրենական հողի, սրբազան վայրերի սարսուռը, պատերազմի, ջարդերի սարսափն ու ցավը, ողբը սպանվածների, որբերի նկատմամբ գուրջ և

կարեկցանք, ինչպես նաև զայրույթ ու բողոք բարբարոսների ու քար աշխարհի քար անտարբերության դեմ, «սրբազան ըմբոստության» քարոզ:

Թեքեյանը 20-րդ դարի խոհուն մտավորական էր, աշխարհն ու կյանքը խորապես ճանաչած ներհուն արվեստագետ, որ իր երգերում բացեց ոչ միայն իր՝ հայի սիրտը, այլև մարդու սիրտը, Մարդ՝ անձնական խորունկ ցավերով, սիրո տագնապներով ու հուզումներով, կյանքի և բնության մասին իմաստացած մտորումներով:

Թեքեյանը կերտել է նաև սիրո ու խոհական երգեր՝ «Մեր» և «Խոհ» շարքերով (էջ 241-313), սեր՝ աշխարհի ու մարդու նկատմամբ, սիրած աղջկա նկատմամբ, ով կարոտ ու մորմոք է բանաստեղծի հոգում, քաղցր հուշ, երանության զգացում, անուշ տառապանք:

Թեքեյանի բանաստեղծությունները, ազգային լինելով, միաժամանակ համամարդկային են, անձնական լինելով՝ մարդկային են: Ճակատագրի բերումով իր սերնդակիցներից երկար ապրեց, և արևմտահայ մեծ բանաստեղծը դարձավ Սփյուռքի ամենամեծ բանաստեղծը, և սփյուռքահայ պոեզիայի զարգացման ընթացքը պայմանավորվեց առաջին հերթին նրանով:

1918-22 թթ. Պոլսահայ պոեզիան ներկայացնում էին Վ. Թեքեյանը, Կ. Զարյանը, Հ. Սիրունին, Գ. Կառվարենցը, Լ. Էսանյանը և այլք: Այդ օրերի հայտնություն եղավ երիտասարդ **ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖՅԱՆԸ**, արևմտահայ վերջին քնարերգուն:

Զարիֆյանը կարճատև ստեղծագործական կյանք ունեցավ. 1916-ին նրա օրագիրը հայտնի դարձավ, 1919-20 թթ. հասարակությանը ճանաչ եղավ, և առաջին գիրքը լույս տեսավ 1921 թ.՝ «Տրտմության և խաղաղության երգեր» վերնագրով. Այդ խորագրի տակ կարելի էր դնել բանաստեղծությունները, արձակն ու օրագիրը, նամակն ու գրառումը: 1922-ին լույս է տեսել «Կյանքի և մահվան երգեր» գիրքը, իսկ 1924 թ. զարնանը նա այլևս չկար. Ասուպի կյանք, բայց և ասուպի լույս: Զարիֆյանը տառապում էր թոքախտով, պայքարում էր մահվան դեմ: Նրա երգերն այդ ցավից ծնված ճիչեր են՝ անկեղծ ու ճշմարիտ, կյանքի սիրով ու երագով բեռնավոր:

Զարիֆյանն անչափ շատ էր կարդում, նրա գրչի տակ են համաշխարհային անուններ՝ ՏՈԼՍՏՈՅ, ՀԱՅՆԵ, ՄԵՏԵՐԼԻՆԳ, ՇԵՔՍՊԻԵՐ, ՈՒՍՅՈՒՆ, ԲՈՂԼԵՐ, ՎԵՐԼԵՆ, ՎԵՐՀԱՐԸ և այլք:

Նա համարվում է արևմտահայ քնարեգության վերջին տաղանդավոր ներկայացուցիչը:

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ գիտական պատշաճությամբ քննության ենթարկվելու և արձակագիրներ թվատիկայով, Լևոն Բաշայանի, Առանձարի ստեղծագործությունները պատմվածքներ, քրոնիկներ, նամակներ, նորավեպեր: Նրանք 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հեղինակներ են, որոնք «ռեալիստորեն արտացոլել են թուրքական բռնապետական ռեժիմի պայմաններում ապրող արևմտահայության, մասնավորապես գավառահայության կյանքն ու կենցաղը, սովորույթներն ու մարդկային տիպերը» (3):

ԱՌԱՆՁԱՐԸ (Միսաք Գույումձյան) ծնվել է 1877 թ. Արևմտահայաստանի Թալաս բնակավայրում, առևտրականի ընտանիքում, կրթություն է ստացել Կարինում, Ֆելուճե գյուղաքաղաքում, հետո թողել է հայրական տունը, անցել Եվրոպա, ուսանել Մյունխենի և Ցյուրիխի համալսարաններում, մի կարճ միջոց՝ Եգիպտոսում: Ալեքսանդրիայի հայկական դպրոցում է դասավանդել, իսկ 1908 թ. տեղափոխվել է Ադանա և մինչև կյանքի վերջը դասավանդել, աշխատել ազգային վարժարանում որպես ուսուցիչ և տեսուչ: Այդտեղ էլ վախճանվել է 1913 թվականին:

1901 թվականից աշխատակցել է Թիֆլիսի «Մուրճ» ամսագրին՝ տպագրելով բոլոր նորավեպերը: Կ. Դանիելյանը նկատում է, որ Առանձարը ինչ գրում էր արևմտահայ կյանքի մասին, անողոր ռեալիզմով էր աչքի ընկնում: 1905 թ. լույս է տեսնում «Վշտի ծիծաղ» պատմվածքների ժողովածուն, որտեղ «թարգմանում էր արևմտահայոց սարսափելի ճակատագիրը»: 1902-1905 թթ.-ի նորավեպերը ներկայացնում էին Թուրքիայում ապրող հայության ազգային հոգեվարքի պահերը: Հայ ազգի նկատմամբ եղած կենդանական ատելությունն ու թշնամանքը, բռնությունները, մորթելու սովորույթը և արյամբ չհագնալու մոլեգնությունը և այս բոլորովին անպաշտպան հայերի կամավոր հնազանդությունը, խեղճությունը, տագնապն ու վախը Առանձարի պատկերած իրականությունը անմիջաբար կապում ու նույնացնում են Լենկթեմուրյան մղձավանջային օրերի հետ, խենթացած սեբաստացիների անձար ու ռոնացող թափորի հետ:

Առանձարի համար նաև չափազանց կարևոր խնդիր էր արևելահայ և արևմտահայ գրական-հասարակական մերձեցումը:

РЕЗЮМЕ

ЗАПАДНОАРМЯНСКАЯ РЕАЛЬНОСТЬ В НАЧАЛЕ ПРОШЛОГО ВЕКА; ОТКРЫТИЯ В СВЕТЕ ЛИТЕРАТУРОВЕДЕНИЯ

ЭДУАРД МКРТЧЯН

Первые десятилетия двадцатого века были пагубными годами для армян Западной Армении; за погромами и диктатурой гамидов последовали погромы и безгражданство 1909, 1915, 1920, 1922 гг. Все это отразилось в западноармянской литературе, и литературоведы Г. Рштуни, В. Габриелян, С. Топчян, К. Даниелян представили это подробно в произведениях Сиаманто, Д. Варужяна, Р. Ворберяна, Р. Севака, В. Текеяна, М. Зарифяна, Ерухана, Тлкатинца, Башальяна, Арандзара.

Ключевые слова: армянство, резня, трагические образы, Ерухян, Матеос Зарифян, годы диктатуры гамидов, «эпично», Париж, проблема выживания, Киликия.

SUMMARY

THE REALITY OF WESTERN ARMENIA AT THE BEGINNINGS OF THE LAST CENTURY. DISCOVERIES UNDER THE LIGHT OF LITERATURE

EDUARD MKRTCHYAN

The first decades of the 20th century were terrible and destructive years for the Western Armenians. Hamidian massacre and dictatorship were followed by massacres and statelessness in 1909, 1915, 1920, 1922. All that was reflected in Western Armenian literature, and literary critics H. Rshtunin, V. Gabrielyan, S. Topchyan, K. Danielyan presented detailed descriptions in their works of Siamanto, D. Varuzhan, R. Orberyan, R. Sevak, V. Tekeyan, M. Zarifyan, Yerukhani, Tlkatintsu, L. Bashalyan and Arndzar.

Key words: Armenians, massacre, tragic images, Yerukhan, Mateos Zarifyan, years of the Hamidian dictatorship, "Heroically", Paris, survival problem, Cilicia.

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԵՂԵՌՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄ /Գիտական-հրապարակախոսական էսսե/

Բնքնապաշտպանության առաջին և գլխավոր բաղադրիչն ազգային միաբանությունն է, որի առաջ անհիմաստ են դառնում իրարամերժության բոլոր պատճառները: Մեր դասական գրականության երևելիները՝ Պեշիկթաշյան, Վարուժան, Միամանթո, Զոհրապ, Թյկատինցի և ուրիշներ, իրենց ստեղծած գրականությամբ և կյանքով հաստատեցին այդ ճշմարտությունը:

Մեզ շրջապատող տարածքն ու միջավայրը «էն գլխից» պետք է թելադրեին, թե ինչպես ապրենք հայերս: Անգամ ձուկը, կլիմայական պայմաններից թելադրված, պաշտպանական միջոցներ է ունենում՝ սկսած գույնից, վերջացրած «շոշափուկներով»:

Իսկ մենք մարդ ենք՝ հին ու հնագույն մշակույթի կրողներ, որ պիտի վաղուց արդեն ունենայինք մեր ապահովության ու անվտանգության տարրական ձևերը, մշակված կանոնագիրքը, բովանդակային միջոցները, ազգային անխախտելի ծրագիրը, ուղին, վիճարկման ոչ ենթակա հետևությունը:

Բանալի բառեր՝ գրականություն, քերթություն, գրաբար, արևմտահայերեն, դասական, ազգային միաբանություն, զարթոնքի գաղափարը, պատկերային համակարգ, արդիականություն, եղեռնագոհ գրողներ, գեղագետ, առանձնահատկություններ, ժամանակի տարեգիր:

ԻԲՐԵՎ ՄԿԻԶԲ

Այսօր մենք ապրում ենք գրեթե այն իրականության մեջ, ինչպես հարյուր տարի առաջ, թշնամու սուրը՝ մեր գլխավերևում, և շարունակում ենք ամեն մեկս մեր ընտրած ճամփան հարթել՝ մոռանալով, որ բոլորս նույն ճանապարհի ուղևոր ենք, իսկ այդ ճանապարհը մեր ժողովուրդն է:

Մի՞թե այսքան անճարակություն կա մեր մեջ:

Երբ միաբան չենք, ուրեմն՝ Աստծո հետ չենք, այստեղից էլ՝ աղետները:

Ոչ մի պետություն իր շահից դուրս ոչինչ չի անում: Դու եղիր քո տերը, ուրիշին քեզ տեր մի կարգիր, դա ինքնակործանում է... Իր գավակներին, ինչպես, ասենք՝ Թումանյանին, Վարուժանին, Անդրանիկին, Սիամանթոյին, Նժդեհին, Մոնթեին, ազգն է ստեղծել՝ նրանցով վերածնվելու հավատով, ինչպես մեծ մտածողը կասեր, ուրեմն՝ պիտի ունկնդիր լինենք միայն ու միայն նրանց ներքին ձայնին, այլապես միշտ ու միշտ կհայտնվենք այն վիճակում, ուր հիմա գտնվում ենք:

Շատերն են սուր վերցնում, բայց Նժդեհ չեն...

Շատերն են գրիչ վերցնում, բայց Թումանյան չեն...

Իսկականը ոչ իսկականից տարբերենք ու ճշմարտությամբ առաջնորդվենք:

Երբ մենք չենք կարողանում ինքներս մեզ հաղթել, ուրիշին ո՞նց կարող ենք հաղթել: Շատ հաճախ ենք մոռանում, որ կյանքն անդունդի վրայով անցնող ճանապարհ է, և մեր միակ կամուրջը մեր ձեռքն է: Միմիայն: Որ եթե կա հույս, դա միայն դու ես: Որովհետև բոլոր աղետները, արհավիրքները, պատերազմները եղել են, կան ու լինելու են որպես շահերի բախում... Սա քննարկման ենթակա չէ:

Ազգային գրականությունը յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովրդի ծառայում է որպես ճանապարհային հոգևոր քարտեզ, իսկ մեզանում, լավագույն դեպքում, այն ընդամենը զվարճանք ու «պարապ վախտի խաղալիք» է: Դրանից չէ, արդյո՞ք, որ մեր ընթացքի խոտորումներն ու կորուստներն ավելի շատ են, քան ձեռքբերումները:

Նախ՝ պիտի վերջ տալ մեր գրականությունն անջրպետելուն, դա փաստորեն կոմունիստական «առաջնորդ լեզվաբանների» հնարած չարամտությունն է՝ մեզ մեր «ոչ խորհրդային» եղբայրներից հեռացնելու համար: «Հիմա, վերջապես, հայության երկու հատվածն էլ, - գրում է Պարույր Սևակը, - եկել են այլևս այն եզրակացության, որ ունենք մեկ և միասնական գրականություն՝ հայոց գրականություն, առանց «արևելա...» և «արևմտա...» երկփեղկումի»: Այս ճշմարիտ դիտարկումն ամրագրելուց հետո դարձյալ շարունակում ենք նորից ու վերստին նույն սխալը կրկնել: Բանականությունից հեռու է Կոմիտասին՝ «մեր երաժշտության Մաշտոցին», դիտարկել այդ «ճամփաբաժնում», կամ Նարեկացուն, կամ Չարենցին: Ժամանակը չէ՞, արդյոք, վերջապես, մեկ միասնական լեզվի ու գրականության մեջ

լինելու: Չէ՞ որ «Հայու լեզուն տունն է հայուն»/ Մուշեղ Իշխան/: Դա նույնպես կնպաստի ազգային միաբանությանը:

Աշխարհը մեզ ճանաչում է Նարեկացու՝ վերջերս Հռոմի Պապի կողմից Տիեզերական վարդապետ հռչակված մեր քերթության Մեծագույնի անունով: Իսկ հայ ուսանողները, թեկուզ մեր բուհում, որը Նարեկացու անունն է կրում, կարողանում են բնագրով՝ գրաբարով, կարդալ նրան, անշուշտ՝ ոչ բոլորը:

Ի դեպ, ասեմ, որ մեր բուհը միակն է հայ իրականության նմանատիպ հաստատությունների մեջ, ուր ընթացիկ ուսումնական տարվանից արդեն մասնագիտական բոլոր բաժինների ծրագրերում, խորացված ձևով, առանցքային տեղ է հատկացվել և գրաբարի, արևմտահայերենի ուսուցմանը:

Այս առումով մասնագիտական ծրագրերում նորությունները շատ են: Բայց թեմայից չչեղվենք: Դառնանք քննության առարկա խնդրին:

Ինչպե՞ս կարելի է Ծերենցի, Մկրտիչ Պեշիկթաշյանի, Հակոբ Պարոնյանի, Լևոն Շանթի, Երվանդ Օտյանի, Հակոբ Օշականի, Ջոհրապի, վերջապես ոսկեբերան Մեծարենցի կամ Դուրյանի, Մուշեղ Իշխանի, մյուս մեր գրիչների արվեստը գնահատել «արևելա» կամ «արևմտա» կարկատանային կցորդներով՝ դրանով իսկ խորապես վիրավորելով առաջին հերթին ինքներս մեզ ու մեր մեծերի ինքնությունը, մեր սուրբ գրերը ստեղծողին:

Ազգը, որ չի ապրում-առաջնորդվում իր գրականությամբ, դատապարտված է ոչնչացման: Ժողովրդի ողնաշարը նրա հոգևորն է: Եվ պատահական չէ, որ տասնհինգ թվին՝ մեր իսկ բուն հայրենիքում, մեր ազգի վերջը տալու համար ենիչերները, գերմանացիների հետ պլանավորած, դիմեցին եղեռնի իրականացմանը՝ առաջին հերթին գրողներին ենթարկելով վայրենի սպանդի: Վարուժան, Սիամանթո, Ջոհրապ, Սևակ, Թվկատինցի, Ջարդարյան..., մեր դասական այրերին, որոնց ստեղծած գրականությունը կարող է, իրավամբ, զարդարել ցանկացած առաջնակարգ ժողովրդի ազգային արժեքների պատկերասրահը՝ համաշխարհային արվեստի ամենաբարձր ընկալումներով:

**ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԶԱՐԹՈՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ
ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հայոց ջարդերը, սկսած Զեյթունյան ապստամբության շրջանից, հաջորդել են մեկը մյուսին՝ ծրագրված ձևով: Ավելի ուշ՝ քսաներորդ դարասկզբին, կազմակերպվել են անհամեմատ լայն ընդգրկումներով՝ Թալեաթի, Էնվերի, Զեմալի «Էռապետության» վերահսկողության ներքո, ինչպես ընդունված է ասել:

Զեյթունյան հերոսամարտը դարձավ մեր ժողովրդի ազատագրական պայքարի ամենահարուստ տարեգրություններից մեկը: Ժողովրդական զարթոնքը գեղարվեստական ուրույն մարմնավորում ստացավ հայ նոր քնարերգության հիմնադիր Մկրտիչ Պեշիկթաշյանի ստեղծագործություններում («Հայ քաջորդվույն», «Մահ քաջվորդվույն», «Թաղումն քաջորդվույն», «Հայ քաջուհին»):

Պեշիկթաշյանի արվեստը և քերթողական, և երաժշտական, և թատերական ասպարեզներում միանգամայն նորարական է ու գունեղ: Զրկանքների մեջ հայտնված ժողովրդի ծոցից ելած որդին փրկության ելք է տեսնում զենքի մեջ: Ճիշտ և ճիշտ՝ մերօրյա իրականությունը: Եվ քաջորդու բաղձանքը մեկն է՝ «Կուգեմ վառող և զնդակներ»: Հայ պատանու երակներում հոսում է ազգային անպարտ հերոսների արյունը: Նա երբեք չի կորցնում հաղթելու հույսը՝ անգամ ամենածանր կացության մեջ: Քաջորդին իր ներսում ուժ է գտնում հուսադրելու մորը.

*Դու գո՞վ խնդրես, մայր իմ անուշ,
Եկ, մի դողար, մոտեցիր հոս,
Անկաց աչոքդ դիտե գորդիդ,
Ու յուր վերքերն արյունահոս:
Թուրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն:*

Բոլոր ժամանակների մեր ամենախնթնատիպ պոետներից է Մկրտիչ Պեշիկթաշյանը, որի ստեղծագործություններն այժմ էլ չեն կորցնում իրենց թարմությունն ու արդիականությունը: Դրանք անգերազանցելի գլուխգործոցներ են, որ շարունակում են բարերար ազդեցություն թողնել ժամանակակից հայ քնարերգության զարգացման ընթացքի վրա՝ իրենց պատկերային կոտ համակարգով, բովանդակային խորությամբ, ամենանուրբ զգացմունքի ու ապրումի

չափազանց ինքնատիպ վերարտադրությամբ, ներկայանալի գունագեղությամբ, միշտ թարմ ու ուրույն մտածողությամբ.

Թէպէտ թռչնիկն ու հովն հայոց

Աւերակաց շրջին վրայ,

Թէև պղտոր փտակն հայոց

Նոճիներու մէջ կը սողայ,

Նոքա հառաչք են հայրենեաց,

Նոքա չերթան սրտէս ի բաց

(«Գարուն»):

Պեշիկթաշլյանի յուրաքանչյուր քերթվածք ունի պոետական խոսքի խիստ ուրույն ճարտարապետական կառույց՝ ասելիքի բովանդակային բազմազանությամբ: Բանաստեղծի տողերը ծնվում են ժամանակի ծանր իրադրություններում՝ իրենցում կրելով ժողովրդյան զարկերակի բաբախումները. «Վասն հայրենյաց մեռար, Դուն շատ ապրեցար»: Անընդհատ ճնշումների ենթարկվող ազգի բանաստեղծը ելքը տեսնում է հայոց միաբանության մեջ՝ խորապես գիտակցելով, որ «բանաստեղծությունը նույնպես այնպիսի ճշգրիտ հիշատակարան է, ինչպես պատմությունը» (Նալբանդյան): Ահա թե ինչու անգամ ամենագեղ «մատունք կուսին» ինչքան էլ «զարնեն փափուկ քնար», «ընդ աստեղոք» չեն ունենա «ձայն մը այնքան սիրուն, Քան զանձկալի Եղբայր անուն»:

Դժնդակ իրավիճակներում ապրած վաղամեռիկ Պեշիկթաշլյանն այդպես էլ չտեսավ իր առաջին գիրքը՝ «Մատենագրություն»-ը: Այն լույս տեսավ Պոլսում՝ գրողի մահից հետո, անվանի պատմավիպասան Ծերենցի խմբագրությամբ: Հետագայում մեծ գեղագետի ու մտածողի երկերը հրատարակվեցին ակադեմիկոս, նշանավոր արցախցի /հայոց պատմական Շոշ գյուղից/ Արսեն Տերտերյանի խմբագրությամբ (1947թ.), որը «կազմել, համեմատել և ծանոթացրել» էր անվանի գրականագետ Արամ Բնձիկյանը:

Այո, միանգամայն անվիճելի է սևակյան գիտական դիտարկումը. «Մ. Պեշիկթաշլյանն է հայ նոր քնարերգության սկզբնավորողն ու առաջին դասականը»:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՇԵՇՏԵՐԸ ԵՂԵՌՆԱԶՈՆ ՀՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Եղեռնական իրականության ճշմարտացի ու անսքող վերարտադրությունը ենթադրում էր ապրումների ու զգացողությունների

«անգեղարվեստ» վերարտադրություն, որը յուրօրինակ ու բացառիկ գեղարվեստականությամբ է մարմնավորվել հանճարների գործերում: Եվ զարմանալի չէ, որ հայոց բազմադարյան գրականության մեջ առանցքային է ողբի ու տրտունջի ժանրային արտահայտությունը: Այսպես.

*Կոտորա՛ճ, կոտորա՛ճ, կոտորա՛ճ...
Քաղաքներուն մէջ եւ քաղաքներէն դո՛ւրս,
Եւ բարբարոսներն արիւններով կը դատնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայէն,
Ագռաւներու բազմութիւններ կ'անցնին վերերէն,
Արիւնոտ բերաններով ու գինովի քրքիջներով...*

«Մահվան տեսիլք»

Սիամանթոյի քերթվածքների գեղագիտական առանձնահատկություններին դիմելն ուղղակի աններելի մեղքի է նման, երբ խոսքը եղեռնին է վերաբերում, նա «արվեստ չի անում», նա իր ամեն խոսքի մեջ Աստծուն է դիմում, եթե անգամ չի դիմում Աստծուն:

*Ես որք մըն եմ եւ ըմբոստ մը, մնաս բարյալ, կորուսեալներս
փնտռելու կերթամ...*

*Քու երգերէդ երգ մը տուր ինձ, երգ մը, ես երգելով կուգեմ
մեռնիլ...*

Վիճակի անելանելիության շեշտերը փոխում են բանաստեղծության բառերի սովորական ընթացքը, իմաստն ու նշանակությունը՝ ցույց տալով գազանաբարո ժամանակի գեհենական բնույթը.

Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ:

Հայրենի երկրի ավերածությունները բանաստեղծի հոգու ցավն ու տառապանքը դարձրել են անդուռ: Հայոց հնագույն մշակույթի օրրաններից մեկն էր փոքրիկ Ակնը, որն աշխարհին տվել է Քուչակ, Զոհրապ, Մեծարենց, Չոպանյան... Եվ ահա բանաստեղծի աչքի առաջ ոչնչանում է Էրզնիլը: Սրի են քաշվում մարդիկ: Ու այդ ամենի «հոտն առած» մեր մեծագույն մարգարեն՝ Ավետիք Իսահակյանը, հորդորում է Սիամանթոյին՝ չվերադառնալ Թուրքիա: Բայց նա հրաժարվում է, ասելով՝ պիտի լինեմ մերոնց կողքին... Գրեթե նույն պատասխանն է տվել Սիամանթոն նաև Հովհաննես Թումանյանին, որի հետ շատ էր մտերմացել՝ եթե հնար ունենայի, հոս կը կենայի: Գնաց ու գոհվեց: Իր մտերիմներից մեկին հղած նամակում Սիամանթոն գրել էր. «...Իմ ցավես առաջ, ցեղիս եւ ցեղիդ ցավեն խոսիմ: Բովանդակ ծաղիկ հայ երիտասարդությունը կերան բորենիները...»:

Ակամա աչքիդ առաջ է գալիս մեկ ուրիշ մեծի՝ Ռուբեն Սևակի կյանքը: Բացառիկ հանճարով օժտված մի հայորդի, ով հրաժարվեց ընդունել Չանկեր գյուղի ավագակապետի առաջարկը՝ քեզ, աքսորյալ ընկերներիդ հետ միասին, ստույգ մահ է սպասվում առաջիկայում, աղջկա հետ ամուսնացիր, մեծ հարստություն կտամ, ապրիր այստեղ. «Դու ես աղջկա կյանքը փրկել, այն այլևս քեզ է պատկանում»: Եվ նա պատասխան է սպասում Ռուբեն Սևակից, ով ժամանակին եվրոպական ուսմամբ բժշկի մասնագիտություն էր ձեռք բերել: Սևակը, ի պատասխան, միայն երկու բառ է ասում՝ խնդրում եմ մի ձի տրամադրել, որ ինձ արագ հասցնի աքսորյալ ընկերներին:

Բանաստեղծը, անշուշտ, կանխագույն էր ամեն ինչ, տեսնում էր սպասվող արհավիրքները: Եղեռնից դեռ շատ առաջ գրողներն ու մշակույթի, գիտության գործիչները, ինչպես, ասենք՝ Չոպանյանը, Անդրանիկը, Վարուժանը, շատ ուրիշներ, զգուշացնում էին ժողովրդին վերահաս աղետի մասին:

Ահա, թերեւս, Ռուբեն Սևակի անսխալ ձևակերպումը (1908 թ.). *«Ամբողջ Եվրոպայի մեջ աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչև ամենամութ ու խաւարին անկիւնները ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ, որ գտնուի տակաւին ՄԷԿ ՈՒՐԻՇ ԱԶԳ, որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր ստրկացած թրքահայերուս կեանքը... Տառապիլ ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուութի, բռնաբարութի, գետնաքարշ տապալիլ ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտիլ այնպիսի մէկ վայրկեանիդ, որ արիւն արցունք պիտի պոռտկար աչերէդ, մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար, որ զքեզ կը խեղդէ, մեռնիլ ու հոգեպէս մեռնիլ ու ապրիլ ձևացնել, ահա դերասանական ահռելիօրէն կեղծ կեանքը, որ մերը եղաւ այնքան երկար տարիներ: Արդ ինչպէ՞ս կ'ուզեք, որ այսպիսի պայմաններու մէջ ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չ'ըլլար ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը»:*

Գեղագետը ժողովրդի հոգևոր աշխարհի անփոխարինելի կենսագիրն է. նրա գրչի տակից ելած ամեն բառ դժոխային իրադրությունից դուրս տանող բազում ելքեր ունի: Ներքին կենսագրացողությամբ ու նյարդերով բանաստեղծն ապրում է արհավիրքների մոտեցումը, ինչպես, ասենք, բնության մեջ թռչունը կամ ձուկը, ձիերն են զգում հասունացող երկրաշարժը: Ահա Ռուբեն Սևակի հանճարեղ

կանխատեսումներից մեկը, ուր հեղինակը ոչ միայն բանաստեղծում է /բառը նրա էությունն է/, այլև ահագանգում է: Այսպես, «Հայաստան» քերթվածքում նա մի քանի տողում ոչ միայն ողբում է, այլև զարթոնքի հորդոր է հղում աշխարհին, որը, սակայն, անտարբերության մահացու նիրհի մեջ է: Ահավասիկ.

Ո՞վ կույա այսպես խշտակիս շեմքին.

– Քո՛ւյր, դարիպն է, բաց:

Կմա՞յք մը կ'անցնի դուրսեն լալագին.

– Սովն է, դուռըդ բաց:

Տապա՞րն է ջահջախ դրանքս կուրծքին.

– Ջարդն է, դուռըդ բաց:

Թշնամին չբավարարվեց հայկական բնաշխարհի բռնագավառում: Նա աշխարհի թողտվական աչքի առաջ շարունակեց հայոց հինավուրց ազգի արմատը մայր հողից կտրել-հանելու սև գործը: Քաղաքակիրթ Եվրոպայի հանցավոր լռությունն ակամայից վերածվել էր անխոս համաձայնության, որքան էլ «խոսք ելլել կուզե արյունը վազուն»:

Կրակ կը փսխե հողն ամենուրեք,

Գետերն արյունով, դիակով կուռչին...

Արդյո՞ք, հայերս շատ չենք հավատավոր նրանում, որ «գայլ ու գառնուկ սիրով կարածեն», արդյո՞ք, մեր ըղձանքը չենք ներկայացնում իբրև իրականություն, այն դեպքում, երբ աչքի առաջ ոչնչացվում է մի ամբողջ ժողովուրդ, քանզի «կյանքն անոնց է միայն», որ «կապրին ուրիշի մահով»...

Իր «Զանգակներ, զանգակներ» դիմառնական ողբերգում Ռուբեն Սևակի ձայնը շարունակում է խղճի դողանջը դարձնել լսելի մոլորակի բոլոր ծագերում.

Գույժ տվեք վաղվան, զի հասկը մեռավ:

Գույժ տվեք հայուն, զի ազգը մեռավ:

Որքան էլ հավաստենք, որ Սևակի ամեն խոսք զարթուցիչ է՝ ազգի ականջի տակ, այնուամենայնիվ, դարերի մութից դեռ չենք ելել: Վկան արդի մեր իրավիճակը: Անթույլատրելի է: Սուր դրեք, խնդրեմ, Վարուժանի, Սիամանթոյի, Սևակի ձեռքին, գերժամանակակից գենք տվեք նրանց, մի՞թե չեք տեսնում, թե ենիչերներն ինչպես են նրանց անվերջ խոշտանգում... Բսկ մենք հերթական գոհը դառնալու ժամանակավոր դիտորդներ ենք: Հավատում ենք դեռ

մեր դուռը «տապարով» ջախջախողին, նրանից խաղաղություն մուրում:

Այն պահից ի վեր, երբ քոչվորները ոտք են դրել հայոց հողերի վրա, մինչև այս վայրկյանը շարունակում են հայերիս կոտորածները, ավերն ու թալանը:

Արյունաբերու Սուլթան Համիդի ջարդերը, Ադանայի ջարդերը, Ջեյթունի ջարդերը, վերջապես 1915-ի Եղեռնը, որ մինչև հիմա շարունակվում է... Անգամ Արցախին հասան դրանք: Մեր բոլոր տարեթվերը մեր սեփական արյունով են ներկված: Թշնամու վայրենի վարքի մասին բավականին դիպուկ է նկատել Շահան Նաթալին. *«Թուրքը ֆեսով, թե գլխարկով, շավարով, թե տաբատով, շարիաթով, թե շվեցարական օրենքներով, արաբական, թե լատինական տառերով, նույն թուրքն է՝ ոճրագործ ու հայակեր: Ոչ միայն նույնն է, այլև ավելի նրբացած, լրբացած ու համայնակույ: Թուրքերին ուղղված մեր խաղաղասիրական քաղաքները մեզ կյանք չեն խոստանում, այլ միայն հայտարարում են խաղաղ մահանալու մեր համաձայնության մասին»:*

Գրողը ժամանակի անցուղարձերի ծանրության կրողն է /բարոմետրը/: Բառը վիճակ է փոխում: Հանճարաց հանճար Վարուժանը խաղաղություն է մաղթում աշխարհի բոլոր կողմերին/ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային/, գոչում է «Օրհնություն թող ըլլա», «Ծիլ ու ծաղիկ թող ըլլա», «Բերկություն թող ըլլա», «Սիրերգություն թող ըլլա»... Բայց բանաստեղծի հավատամքն, ի վերջո, նրան բաղձանքից տանում է դեպի իրականը, դեպի փրկության վերջնական վճիռը .

Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի.

— Ձեզի ընծա՜, հայ մարտիկներ —

Գրիչս եղավ անթրոց սրբոտերու հետցի...

— Ձեզի ընծա՜, քաջ մարտիկներ —

Եղեգնյա գրրչով վրբեժ երգեցի.

Ընդ եղեգան փող թո՛ղ ելաներ:

Միայն այսպես՝ քանի «դեռ հեռու է մինչև մարդը իր ճամփան» (Թումանյան):

ԻԲՐԵՎ ՎԵՐՋ

Մեր ազգի պարագայում չկա պաշտպանություն: Չկան իրական դաշնակիցներ կամ բարեկամներ: Կա միայն... **ինքնապաշտպանություն:** Այլ ուղի չունի հայ ժողովուրդը: Մա դարերի՝ հազար անգամ հա-

զար փորձված փորձն է ասում, որ ամեն հայ պետք է օղ անի ականջին, սրտին ու ձեռքին:

Ինքնապաշտպանության առաջին և գլխավոր բաղադրիչն ազգային միաբանությունն է, որի առաջ դատարկ ու փուչ են բոլոր այն պատճառները, որոնք կարող են առիթ լինել մեկ-մեկու նկատմամբ անհանդուրժողական լինելու համար: Հայ մարդու անհաշտվողականությունը հայ մարդու հանդեպ ուղիղ գծով նշանակում է, ոչ ավել, ոչ պակաս՝ բացարձակ դավճանություն հայրենիքին:

Մեզ շրջապատող տարածքն ու միջավայրը «էն գլխից» պետք է թելադրեին, թե ինչպես ապրենք մենք: Անգամ ձուկը, կլիմայական պայմաններից թելադրված, պաշտպանական միջոցներ է ունենում՝ սկսած գոյնից, վերջացրած «շոշափուկներով»: Իսկ մենք մարդ ենք՝ հին ու հնագույն մշակույթի կրողներ, որ պիտի վաղուց արդեն ունենայինք մեր ապահովության ու անվտանգության տարրական ձևերը, մշակված կանոնագիրքը, բովանդակային միջոցները, ազգային անխախտելի ծրագիրը, ուղին, վիճարկման ոչ ենթակա Հետևությունը:

Եզակի ազգ ենք երկու խնդրում ևս՝ մեկ, որ աշխարհում ամենից շատ մենք ենք դիմում «անցյալից, մեր պատմությունից դաս առնենք» արտահայտությանը, երկրորդ, որ ոչ մի դաս էլ չենք առնում դարեր շարունակ:

Երբ շրջապատված ես կայսրական նկրտումներով շնչող ավազակապետություններով, աշխարհի առաջ ժողովրդավարություն դրսևորելը կատարյալ ազգակործան հիմարություն է, ուղղակի՝ ախմախություն: Մեզ դրա համար անգամ ծափահարողներ կլինեն: Մանավանդ՝ թշնամիները: Իսկ մենք մտածում ենք, թե ուր ենք գնում մեծապաշտոն աթոռներ հեծած, պարզևավճարներ գրպանած...

Աշխարհում դեռ ոչ մի աթոռ քայլ չի արել տեղից, մեր հույսը մեր ոտքերի վրա պահենք:

РЕЗЮМЕ

ПРЕДОТВРАЩЕНИЕ ГЕНОЦИДА И БОРЬБА ЗА СУЩЕСТВОВАНИЕ В ТРУДАХ ЗАПАДНОАРМЯНСКИХ КЛАССИКОВ

ВАРДАН АКОПЯН

Первым и важным компонентом самозащиты является национальное единство, перед которым становятся бессмысленными все причины взаимоотрицания. Знатности нашей классической

литературы: Пешикташлян, Варужан, Сиаманто, Зорап, Тлкатинци и др., подтвердили эту истину созданной ими литературой и жизнью.

Окружающая нас территория и среда «изначально» должны были диктовать, как жить армянам. Даже рыба, исходя из климатических условий, имеет защитные средства, начиная с цвета, заканчивая «щупальцами». А мы люди- носители старой и древней культуры, которые уже давно должны были иметь элементарные модели безопасности и обеспеченности, разработанный свод правил, содержательные средства, неприкосновенную национальную программу, путь, неоспоримое выводы.

Ключевые слова: литература, стихотворство, грабар, западноармянской, классический, национальное единение, идея пробуждения, образная система, современность, геноцид писателей, эстетик, особенности, временная летопись.

SUMMARY

THE INTERNAL ABILITY OF PREMONITION OF TIME AND GENOCIDE IN ARMENIAN POETRY`S COSMIC PERCEPTION

VARDAN HAKOBYAN

The first and main component of self-defense is a national unity, before which all the reasons for contradiction become meaningless.

The notable figures of our classic literature, such as Peshiktashlyan, Varujan, Siamanto, Zohrap, Tlkatintsi and others, confirmed that truth with their created literature and life.

The area and environment around us should have dictated how Armenians should live "from the beginning". Even the fish, dictated by the climatic conditions, have protective measures, starting with the colour and ending with tentacles. And we are human beings, bearers of an old and ancient culture, who should have had long ago the elementary forms of our safety and security, the elaborated rulebook, substantive measures, the inviolable national programme, the path, the indisputable Consequence.

Key words: Literature, poetry, Western Armenian, classic, national unity, writers-victims of the genocide, aesthetic, features, chronicle.

ԶԻՆԱԻԴԱ ԲԱԼԱՅԱՆ

*Ար ՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների դոկտոր*

ՀԱՅՈՑ ՄԵԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՏԻԱՆ ԵՎ ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ «ՄՆԱԳՈՐԴԱԳ» ԵՐԿԸ

**Հակոբ Օշականի ծննդյան
140-ամյակին ընդառաջ**

*Յակոբ Օշական Ի. դարու հայ մշակույթի ամենաուշագրաւ
դէմքերէն է: Երեւոյթ մը ըստ ամենայնի...*

«Մնացորդաց»ը դիւցազներգաշունչ վէպ է...

Շուշիկ Տասնապետյան

*...Երբ ցեղը գրականութեան համար
գոհուեցաւ (քանի որ գրքերն ու գրողներն
էին, որ այս աղետը բերին), քաղաքացիական
քաջութիւն է հավաքել բեկորները, կենալ մեծ
փախուստի դեմ ու դիմանալ...*

Յակոբ Օշական

*Համաշխարհային դասականների՝ Մարսել Պրուստի, Ֆեոդոր
Դոստոևսկու, Օնորե Դը Բալզակի, Ռաբինդրանաթ Թագորի և այլ մե-
ծությունների շարքին անվերապահորեն դասվող, Հայոց Եռամեծար
հանճար Հակոբ Օշականի «Մնացորդաց»-ը հայ վիպասանության
անվիճելի բարձունքն է, ինչպես ինքը՝ հեղինակը, հայ քննադատույթ-
յան անմրցելի ու եզակի դեմքը:*

*Հայոց զարհուրելի Աղետից մազապուրծ բեկորների՝ Մնացոր-
դացի տիպական կերպավորումներն են Օշականի վեպի հերոսները՝
իրենց ամենօրյա բնագդով ոճրագործ, արյան ծարավ դահիճների՝
թուրքերի հարևանությամբ:*

*Արևմտահայության մնացորդաց բեկորներն ու նրանց բնակա-
վայրերը, ցեղային հատկանիշները, կորուսյալ բարքերը, անմեկնելի*

գեղեցկությունները կորստից փրկելու հարցադրումներն են ամբողջացված Օշականի վեպում՝ տրված նորովի, հոգեվերլուծական անմրցակից գրչով ու խորագննա ոճով, որն, ավա՜ղ, շարունակող չունեցավ հայ ամբողջական գրականության մեջ:

Բանալի բառեր՝ Պրոսիա, Սեդեռոգ, Հակոբ Օշական, գրականության պատմաբան, նորարարություն, «Համապատկեր արևմտահայ գրականության», մեծ աղետ, անչափելի հայրենասիրություն, Աղվոր, «Մնացորդաց»:

Հակոբ Բյուֆեճյան, 1920 թվականից՝ Հակոբ Օշական, ծնվ. 1883 թ., գյուղ Սեդեռոգ-Պրոսիա , մահ. 1948 թ. փետրվարի 17, Հալեպ:

Իր «Համապատկեր արևմտահայ գրականության» բարձրաքանդակ ուսումնասիրության բացառություն կազմող տասներորդ «Օշական՝ Օշականի մասին» կամ «Վկայություն» հատորում **հանձարեղ գրող, բարքագիր, գրականության պատմաբան, մեծ գրաքննադատ Հակոբ Օշականը**, «Մնացորդաց»-ի ստեղծման վարպետության մասին խոսելով, իրավամբ առանձնանշում է, թե իր «**վեպը կու գայ Տոսթոեւսկիէն, Թոլսթոյէն, Տիքընզէն, Պալգաքէն, Սթանտալէն, Մասսէ Փրուստէն, Ալմա Ծոյսէն, այսինքն՝ արեւմտյան արուեստին մեծագոյն վարպետներու թէքնիկէն, փառասիրութիւններէն, խառնարանէն**»¹:

Ահավասիկ, «Մնացորդաց»-ին է պատշաճում մեկնել վերոդիտված խորհուրդն իր անչափելի չափերով, խորքով և լայնքով, վիպականի և պատմականի պարույրված հղանքներով, գեղարվեստի իր վայելչությամբ, կոթողային հակակշիռով՝ նույնքան կոթողային «Համապատկեր...»-ի հարևանությամբ...

Վեպի արարման ժամանակաշրջանը 1930-1934-ական թվականներն են ընդգրկում, վայրը՝ Կիպրոսը: Պատումային շարժը, եղանակն ընթանում են երրորդ դեմքով, երբեմն՝ հեղինակային առաջին դեմքով:

«Մնացորդաց»-ը հարուստ է ինքնակենսագրական տարրերով, բազմապիսի շեղումներով, դեպքերի և դեմքերի խորագնին քննությամբ, մեկնություններով:

Ո՞րն է ականավոր վիպագրողի հավատո հանգանակը, փիլիսոփայական արքետիպը, վիպասքի ալֆան և օմեգան. լսենք բարքագիրն. «Ընդարձակ առումով մը, անիկա կը յատկանշէ ճիգը, որ նպա-

¹Յակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, Ժ., էջ 585:

տակ ունի փրկելու մեր ժողովրդին **մնացորդացը**. այսինքն՝ ինչ որ անոր բարքերէն ու ապրումներէն դեռ կը մնայ հողի երեսին, արժանի պահուելու»²: Բսկ այդ առաքելության երդումնավոր կատարողը, ըստ հեղինակի, պետք է լինի իր սերունդը:

Վեպի առաջին մասը ժողովրդյան այն տագնապալից ու առանձնադիտվող հոգեկերտվածքն է, որի ընդերքը համիդյան այլադեմ ու սարսափաբեր ռեժիմն ու դրանից բխող հալածանքներն են: «Գեղն է. գայն ակօտող կիրքերն են. դարերու արդիւնք եղող բարքերը...: Վեպին առաջին մասը նուիրված պիտի ըլլայ երկու ժողովուրդներու ճակատումին...: Միւսը այդ ժողովուրդներէն՝ թուրքն է, մեր գրակա-նութեան մէջ **քիչէ** յղացքէն տարբեր տեսնուած: Թուրքը՝ իր հողին ու տունին, իր կրօնքին եւ սնոտիքին, իր արինախաւսն ախորժակներուն եւ մշակոյթի մեծ հոսանքներուն մեջ»³:

Առանց երկմտելու ու փաստենք, որ ընդհարվելու վայրը պոլսամերձ շրջաններն են, Նիկիոյի հայկական գյուղարանքները: Կրօնքի բախումը միջանկյալ դատումներում է քննվում: Վեպի երկ-րորդ մասը Մեծ Աղետը պետք է ներկայացնէր, Պրուսա քաղաքի աքսորը դեպի անապատ, «**կրելու համար ազգերու ամենէն մեծ ոճիրը իր մտքին՝ ինչպէս սաղմին վրայ**»⁴, ավա՞ղ, այդ մասը երբեք չպետք է գրվեր, քանզի «**Աղէտի գրականացման անկարելիութիւնը,-** ինչպէս կնշեր ու կընդհանրացնէր օշականագետ Շուշիկ Տասնապետյանը,- **կը մնայ արեւմտահայ-սփիւրջահայ գրականութեան մեծագոյն հարցն ու յաճախանքը: Որովհետեւ Աղէտի գրականացումը «անգետեղելի արարք է»:** Բոլոր փորձերը Աղէտը պարագրկելու եւ մա՛նաւանդ գրականացնելու չեն յաջողած ցայժմ»⁵:

«Մնացորդաց»-ի առաջին՝ «Արգանդի ճամփով» բաժինը, անդրադարձ է մարդկային սեռին և ոճիրին, որն իր հերթին երեք գիր-քով է ամբողջանում: Վիպական գործողությունները տեղի են ունենում Նիկիո լճին մերձ հայկական գյուղերից մեկում: Կերպարների համա-կարգում իրենց բնավորության տիպական գծերով հանդես են գալիս Հաճի Աննան, իր ներքինիի հոգեբանությամբ և խառնվածքով տիպականորեն կերպավորված արվամուլ որդին՝ Մերոբ Էֆենդին, հարսը՝ Աղվորը, և նրա մայրը, երիտասարդ ծառան՝ Սողոմենց Սո-

² Մայրիկներու շուրհն տակ, էջ 13:

³ Նույն տեղում, էջ 14:

⁴ Նույն տեղում, էջ 15:

⁵ Տասնապետեան Շ., Յակոբ Օշականի վէպը, Պէրուք, 1994 (այսուհետև՝ Տասնա-պետյան Շ., Յակոբ Օշականի վէպը), էջ 74-75:

դումը, և նրա մայրը և ուրիշներ: Հաճի Աննան, իր տոհմը շարունակող-
ժառանգորդ ունենալու գերխնդրով տարված, հարսին գցում է Սողոմի
գիրկը: Վերջիններս, հայտնվելով մարմնական վայելքի մեջ, ինքնամո-
ռաց տրվում էին սիրո անմար կրակին՝ սեռի անթաքույց պահանջուն-
քին, մոռացած արտաքին աշխարհից եկող բամբասանքների կործանիչ
մեխանիզմի մասին: Հաճի Աննան վռնդում է իր չափերն անցնող ու սե-
ռի քմայքներին տրված Սողոմին:

Վեց գրքից է բաղկացած «Մնացորդաց»-ի երկրորդ մասը, որը
վերնագրված է **«Արյան ճամփով»**:

Օշականի հզոր գրչի տակ թանձրանիստ շերտերով վիպա-
կանացվում են համիդյան հայ ժողովրդին իր կործանիչ երախի մեջ
առած հրեշավոր դիկտատուրան, թուրքական ծանրաշերտ ու ապա-
կանված բանտերը, ազգային փոքրամասնության հանդեպ թուրքերի
մոլեռանդ կրոնամոլությունը-ֆանատիզմը:

Սողոմը ոչ միայն սիրո, այլև վենդետայի կործանիչ հրով
բռնկված, վերադառնում է գյուղ և հրի մատնում անիծյալ տունն՝ իր
բնակիչներով: Միակ փրկվողը ծոցվոր Աղվորն էր:

Քաղաքական վտանգավոր իրավիճակին համապատասխան՝
Սողոմը բանտ է նետվում Պրուսիայում: Օշականի վիպաշխարհում
հայտնվում են նոր կերպավորումներ՝ Կովկասից Մայր երկիր վերա-
դարձած հեղափոխական գործիչներ, որոնց մեջ «Մաթիկ Մելիքխան-
յանց» վեպի համանուն հերոսն ու իր ընկերը, որոնց չարչարանաց
ճանապարհն ու եղերական նահատակությունը մեծագույն ցավով ու
անափ դրամատիզմով են շաղախված Օշականի գրչի տակ՝ ցավա-
նախշված **«1915-ի եղեռնին նախատօնակը»** բառամոունչով:

Սողոմը օժտված էր երգեցողության բնատուր շնորհքով: Եվ
ահա Պրուսիայի բանտի հրամանատար «քոմանտան» փաշայի աղջիկը
սիրահարվում, զմայլվում է Սողոմի երգով: Սողոմն՝ պայմանով, որ
պետք է հավատափոխվի, ազատ է արձակվում բանտից: Սյուժեի
այսպիսի ավարտով է «Մնացորդաց»-ի երկրորդ մասը վերջանում, որն,
ավա դ, այլևս շարունակություն չի ունենում...

Այդուհանդերձ, Օշականը լավատեսությամբ և հավատով էր
լցված իր ստեղծագործության պսակի՝ «Մնացորդաց»-ի վերջին մասի
ավարտի մտքի հանդեպ և գիտակցությամբ՝ այդ տառապագիր,
անհաղթահարելի աշխատանքը հաղթահարելու նպատակադրության
և ճիգն ու խիզախումը իրագործելուն, և համոզված էր իր ձեռնարկի

մեծությամբ, «**Բայց ատիկա պատճառ չէ, որ ընդմիջտ հրաժարիմ զայն կրցածիս չափ նուաճելու երազեն**»⁶:

Բարձրաբերձ համարելով Օշականի վեպը՝ Շ. Տասնապետյանը նկատում է. «Իսկապէս, հեղինակի գրական-գեղարուեստական արտադրութիւնը իր գագաթնակետը կը նուաճէ «Մնացորդաց»ով: Վեպը կարծես իր աւարտին կը հասցնէ արեւմտահայ գրականութիւնը՝ որ արդէն իսկ ֆիզիքապէս դադրեր էր գոյութիւն ունենալէ 1920-ական թուականներուն: «Մնացորդաց»ի անաւարտ շարքը կարելի էր միայն հայ ժողովուրդի ապրած Աղէտէն ետք: Այս վեպին հետ, ինչպէս նաեւ անկէ առաջ, Օշական գրեց այլ վեպեր, վիպական շարքեր: Բայց «Մնացորդաց»-ով է, որ կը լրանայ օշականեան վիպական տիեզերքը»⁷:

Օշականը մարդկային հոգիների հոգիները պեղող արվեստագետ է, ներքին լարումները քննող, մարդկային բնագանցական, հոգեբանական անմեկնելի ու բարդ իրավիճակները տեսանող և մեկնող, սեռի և ոճի անատոմիան մանրակրկիտորեն ուսումնասիրող ու վերծանող բարոյագետ ու հմուտ բարքագիր, հերոսների հոգիների ծալքերն անուրանալի թերթող, «հոգիների խորաչափ» (Շ. Տասնապետյան, ամբողջը՝ ըստ ներքին տևողության ժամանակի, ինչպես նկատելի է Պրոստի ու Ջոյսի օրինակում):

Օշականին մոլի ճակատագրապաշտ պետք է ընդունել, այնքանով, որ՝ ըստ քննաբանի, մարդու ճակատի գիրը երբեք չի այրվում. «**երանի ճակտի գիրովը քաղողներուն**», ապա շտապով կավելացներ իր թեորեմը, թե «**ճակտի գիրով քաղողներ**» են իր զարտուղի կերպավորումները, «փրկուելիք մնացորդներ»-ը: Այդ շաղկապումը տեսանելի է Աղվորի և Սողոմի օրինակում, որոնք «**իրարու շղթայուած էին ճակատագրին անութեն**»⁸: Այդ շղթայումը երևում է նաև Սերոբի, Հաճի Աննայի, Մաթիկի ու իր ընկերոջ օրինակներում:

Օշականի սեռի մասին քննումները բարքերի մեկնության վերաբերյալ ամբողջացումներ են: Այդ ֆոնին հեղինակը կներկայացնի հայ գյուղը, «**լայն չափով մը բացուած թրքական ազդեցութիւններուն**»⁹: Նիկիո մարզի շուրջ բոլոր. «**բոլորն ալ՝ ինչպէս աքցանի մը թւերուն ձուածիրին մէջ, սեղմուած թուրքերու գիծերէն, կը կրեն զապուած, խոշտանգուած խստութիւն մը, որ կբացատրէ յաղթանակին ճնշումը, Բայց նոյն ատեն ցեղային հակազդեցութիւնը: Կարծօրէն, ամրապէս**

⁶ Մայրիկներու շուքին տակ, էջ 14:

⁷ Տասնապետյան Շ., Յակոբ Օշական վեպը, էջ 76:

⁸ Յակոբ Օշական, Մնացորդաց, Ա. հատոր, էջ 372:

⁹ Յակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, Ժ., էջ 152:

խարսխուած իրենց ժառանգութեանց խորը, անոնք ճկած են, նեղցած, խորտուբորտ ինկած, բայց չկասած (...) ու շինա՝ծ ինչ որ եղած է հին հայրենիքը, այսինքն՝ բնութենէն բռնի կորզուած, յաղթահարուած ընտելացումը քարին ու հողին, մարդուն ձեռքէն ձեւի ելած կառոյց կամ մշակոյթ»¹⁰:

Վեպը միաժամանակ աշխարհի, տիեզերքի ստեղծումն է ազդարարում. «... աշխարհը վիպասանով մը նուաճուած, անկէ խորաչափուած, անով անուանակոչելի իրականութիւն մըն է (...) ու այդ աշխարհը ԺԹ. դարու կէսերէն մինչեւ տարագրութեան դժոխքը երկարող մեր ժողովուրդին բարոյական ապրումներուն գումարը իբրեւ...»¹¹: Բարոյականը որպէս բարք հասկացություն պետք է ընկալել: Ասել կուզե՛ նաև այդ աշխարհը մինչև անհասանելի խորությունները պեղած-պաղա՞ծ...

«Մնացորդաց»-ով Օշական կը փառասիրէ փրուստեան ճարտարապետութիւն մը: Բնօրինակները կը մնան Փրուստը՝ «մեծ հիւանդը» եւ Տոսթօեսկին՝ «ղիւսհար վիպասանը, ահաւոր ու աստուածային...»¹²,- իրավամբ հատկանշում է Շ. Տասնապետյանը:

Բոլոր այդ կացությունները պտտվում էին սեռի և ոճի շուրջ. «Ինծի համար,- կըրհղի հեղինակը,- կեանքը կազմուած է էապէս արինէ եւ սերմէ»¹³:

Թե ինչու չգրվեցավ վեպի վերջին մասը՝ «Դժոխքը», Պրուսայի հայ բնակչության աքսորը-տարագրությունը՝ Ադետը, ապա այն խստագոյնս բարդ, բայցս պարզ է, կնշանակի «շիտկէ շիտակ քալել մահուան վրայ», և որ՝ ըստ հեղինակի՝ հայ ազգը պատրաստ չէր տակավին կարդալու իր վեպը..., քանզի Փարիզի տղաները կուրանան Օշականին, որ սրտի տագնապի նման կըհասկացվի...

«Դժոխքը», «Անշուշտ ամէնէն դժուար մասը պիտի ըլլայ անիկա, վասնզի միակ վիպող ուժը անբաւական է անոր պարագրկումին»¹⁴,- գաղտնաբար հեղինակը կավելացնի հետևյալը՝ փորձելով իր անկարողությունը մեկնել. «Ադետը՝ անհուն, բայց տարօրինակ կերպով միաձեւ, կը վրիպի արուեստագէտին պարագրկումէն, արուեստին պայմանը ըլլալով զանազանութիւնը (...): Հագարաւոր մղոն

¹⁰ Յակոբ Օշական, Մնացորդաց, Ա հատոր, էջ 45::

¹¹ Նոյն տեղում, էջ 130, 131:

¹² Յակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, Ժ., էջ 130 : Տե՛ս Տասնապետյան Շ., Յակոբ Օշականի վեպը, էջ 80:

¹³ Մայրիկներու շուքին տակ, էջ 21:

¹⁴ Մայրիկներու շուքին տակ, էջ 16:

երկայնքով ճամբու մը վրայ, գրեթե ամեն տեղ մարդեր են, որ կը մորթուին՝ իրարու նման պայմաններու տակ, եւ ուրիշներ՝ որոնք կը մորթեն»¹⁵:

Վեպի գլխավոր հարցադրումներից է թուրքի և հայի ճակատագրական բախումը՝ ամենից թուրք քաղաքի՝ Պրուսայի մեջ, որտեղ իր ամբողջ սարսափով ապրել է պատանի Օշականը: Այդ հզոր ջիղ ունեցող վեպում է, որ հեղինակը փորձում է ճշտել իր հարաբերությունը թուրքի հետ. «... Մեր հոգին մեծ ու խոր կապերով կը մնայ խառնուած անոր հոգիին: Ու չէ եղած վերլուծումը այդ հոգիին»¹⁶:

«Մնացորդաց»-ով Օշականը անշիջանելի գրչով կփորագրի կրոնափոխության-խալամացումի հարցը, թուրքի այլանդակ ու ոճրագործ, արյունատենչ ազգային որակները, մթագնված հոգեբանությունը՝ իր բոլոր դասերով, իր բոլոր ախտերով, իր կործանարար պետական սրբապիղծ ապարատով...

Այդ ամբողջ գեհեների տարափից՝ թափված տարաբախտ հայ ժողովրդի, նրա ցավամոռնչ որդու՝ Օշականի գլխին, ավելացան մեծ մտածողի սրտի տազնապները, վերջինը, որ մահացու էր, նրան գետնեց 1948 թ. փետրվարի 17-ի գիշերը: Նրա հուղարկավորության թափորը կազմում էր ավելի քան քսան հազար մարդ...

Հակոբ Օշականի՝ հանճարեղ արվեստագետի, անգուգական հայորդու մարմինը ամփոփում են Քարեն Եփեմի դամբարանին քով, ավա՞ղ, թողնելով նրա երազանքը անկատար՝ հանգչելու «Արարատի շուքին: Նույնիսկ առանց քարի: Ու առանց նշանի, գիրի: Բայց տաք հո՞ղը վրաս» իմ պապերուն արեան հանքերուն»...¹⁷: Հարկավ, հարկավ:

Օշականի անչափելի հայրենասիրությունը ամենայն սիրով ու ջերմեռանդությամբ, թախիծով սփռված է նրա էջերի երկանքին ու խորությամբ: Իր իսկ բնութագրմամբ՝ «Այս կատաղի սէրը անիկա ողբերգութեան մը նման պոցցուց իր հետը»¹⁸ կամ «Իրն է տարփազին պաշտամունքը իր ժողովուրդին, դարձած իր գրականութեան գոյութեան պատճառը, *raison d'être*-ը, ինչպես կ'ըսեն: Ի՞նչ որ բխած է իր ժողովուրդին խորագոյն ալքերէն ու հեռագոյն դարերէն – մեղք, ինչպես առաքինութիւն, տաղանդ, ինչպես հաստ բարբեր, տրտմութիւն, ինչպես երազանք – անոր համար կը կազմէ հաւատքի հանգանակի մը չափ

¹⁵ Մայրիկներու շուքին տակ, էջ 19-20:

¹⁶ Օշական Հ., Մնացորդաց, Ա հատոր, էջ 453:

¹⁷ «Վկայութիւն մը», Հալէպ, 1946, էջ 89:

¹⁸ Յակոբ Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Ժ., էջ 252:

ուծգին, անխռով մե հաւատքի հանգանակի մը չափ ուծգին, անխռով ստուգութիւն, արժանիք»¹⁹:

Անհերքելիորեն, Օշականի «Ես»-ի կենտրոնն իր պաշտած հայ ժողովուրդն է ու իր նվիրական գրականությունը, Եղիշէ Դուրյան պատրիարքի խոսքերով՝ **«իր երազներէն հալածական այս մարդը»** մենակ քայլեց իր տարօրինակ փառքի հետ, ինքզինքը իր գործին ամբողջականորեն նվիրելու այլամերժ պատրանքով... իսկ որ բնութագրական է՝ կրկնելով. **«Մեր գրականությունը՝ մեր հայրենիքն է»²⁰:**

Իրավամբ, ինչպէս կասեր Տասնապետյանը՝ **«Օշականի կեանքը նոյնացած էր գրականութեան հետ»²¹:**

Ինքն իր մասին՝ ամենաբնութագրականը պետք է ընդունել. **«սխալ չ'ըլլար իրեն համար ըսել, թէ սիրած է գրականութիւնը հին դարերու մենատրի մը կատաղութեամբ»²²,** ում համար **«արւեստը ուրիշ բան չէ եթէ ոչ բիրտեղացած պահ մը, ժամանակէն ու միջոցէն»²³:**

Քննելով արևմտահայ գրականության շրջաբաժանումների խնդիրը, դրանք երեք բաղկացուցիչ մասերում դիտելով (հեղինակի առաջին միտումը վերաբերում է ձևավորման ժամանակաշրջանին, երկրորդը՝ «հեթանոսական» շարժմանը, երրորդը՝ «մշակութային այն արդիւնատու բանավեճերին, որ բերում է Յակոբ Օշականը իր «Մաթիկ Մելիքխանեան» վեպով»)՝²⁴, գրականագետ Ս. Դանիելյանն ամբողջացնելով իր մտահանգումները, միաժամանակ հատկանշելով Օշականի երկերի մեթոդաբանական շերտերը՝ գրում է. «Յ. Օշականը համադրական եւ հակադրական լոյսի տակ ցոյց է տալիս արևմտահայ եւ արեւելահայ գրական զարգացումների ճակատագիրը, ինչն առաւել հետաքրքրական է արդէն այն փաստով, որ առաջին անգամ տեսնում ենք ե՛ւ ընդհանրութիւնները, ե՛ւ տարբերութիւնները գիտական հանգոյցներում: Ընդ որում՝ գեղարուեստական ոճերի հարցում Յ. Օշականը լաւագոյնս կիրառում է ե՛ւ գեղարուեստական ընկալման, ե՛ւ գիտական մեկնական ելակէտերը՝ ընդհանրական դարձնելով հայ գրականության զարգացումը 19-րդ դարի վերջից մինչեւ 20-րդ դարի

¹⁹ Նույն տեղում, էջ 243:

²⁰ Յակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, Դ., էջ 152:

²¹ Տասնապետյան Շ., Յակոբ Օշականի վեպը, էջ 9:

²² Յակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, Ժ., էջ 251-252:

²³ Յակոբ Օշական, Վկայութիւններ, «Մաշիկ Մուրք», , «Սիռն» ամսագիր, Մայիս-Յուլիս 1939, Երուսաղէմ, էջ 261:

²⁴ Դանիելեան Ս., Արևմտահայ գրականութիւն. Տիտանիկ թէ՞ շարունակականութիւն, Եր., Գասպրինտ, 2014, էջ 9:

40-ական թթ. սկիզբը: Սա մի ընդարձակ խաչմերուկ-քառս է, որը բացայայտում է Աբովեանով պայմանաւորուած, գրական գեղարուեստական «գուգակշիռ» կազմած ազգային երկու ճիւղաւորումները:

Մշակութային տարողունակ աշխարհում հայ գրականութիւնը արեւմտահայ նոր ու նորագոյն արժեքների շնորհիւ հարստացել եւ հարստանում է գաղափարներով, զուտ ազգային գնահատութիւնների տեղաշարժերի նորոգուած բովանդակութեամբ: Այն իւրատեսակ գրական շարժման համապատկեր է՝ համապատկերի շրջանակի մէջ:

Տիտանիկ, որը դեռ յամառում է այսպէս կողաշրջուած»²⁵:

Իսկ որպէս ճշմարիտ երկաթե ապտակ, բնանյութին հավելենք. «Այո՛, թուրքերը իրենք զիրենք ճանչնալու համար՝ Օշական պիտի՛ որ կարդան»²⁶:

Ամենայնով, խստագոյնս բարձր գնահատելով հայ և համաշխարհային վեպին ու նրա արդիական փիլիսոփայական մեթոդոլոգիային համահունչ ու համահավասար հանճարափայլ Հ. Օշականի երկերը՝ Զարեհ Մելքոնյանը գրում է. «Օշականի վեպերը եւ յատկապէս «Մնացորդաց»-ը, իւրայատուկ երեւոյթներ են մեր գրականութեան մէջ՝ թէ՛ որպէս ծաւալ, թէ՛ որպէս առաջադրութիւն, եւ թէ որպէս լեզուաոճային իրագործումներ: Կենցաղային-պատմական, բայց ո՛չ պատմավիպային՝ «Մնացորդաց»-ը ազգային-բարացուցական աննախընթացօրէն վիթխարի փորձ մըն է՝ արժանի մեծ գրականութիւններու: Մեր վիպագրութեան ընդարձակումի եւ տիրակալումի անգուսպ ճիգն է ան»²⁷:

РЕЗЮМЕ

КОНЦЕПЦИЯ АРМЯНСКО Й РЕЗНИ И РАБОТА «ОСТАТКИ» АКОПА ОШАКАНА

ЗИНАИДА БАЛАЯН

К числу великих представителей мировых классиков принадлежат: Марсель Пруст, Федор Достоевский, Оноре де Бальзак, Рабиндранат Тагор и другие величия; поэма «Остатки» трехпалого

²⁵ Նույն տեղում, էջ 9, 10:

²⁶ Տասնապետյան Շ., Յակոբ Օշականի վեպը, էջ 101:

²⁷ Մելքոնեան Զ., Մփիւռքահայ գրականութեան նուաճումները, ներկան ու ապագան, «Ազդակ» օրաթերթ, Պէյրութ, 10 (եւ 16) սեպտեմբեր, 1985, էջ 5:

армянского гения Акопа Ошакана- бесспорная вершина армянского прозаика, как и сам автор- непревзойденное и уникальное лицо армянской критики.

Останки спасшихся от страшной армянской катастрофы являются герои поэмы Ошакана в повседневной жизни по соседству с турками- злодеями с инстинктом жаждующих крови палачами: обломки останков западных армян и их поселения, племенные черты, утраченные нравы, неисчислимые красоты, вопросы спасения от потери обобщены в поэме Ошакана; дан по-новому, с непревзойденным психоаналитическим пером и хоральным стилем, который не имел продолжения в армянской целостной литературе.

Ключевые слова: Пруссия, Акоп Ошакан, Сеолез, литературный историк, новаторство, «Панорама западно- армянской литературы», большая катастрофы, безграничный патриотизм, Агвор, «Остатки».

SUMMARY

THE ARMENIAN GENOCIDE'S CONCEPT AND HAGOB OSHAGAN'S "REMNANTS" NOVEL

ZINAIDA BALAYAN

Among the world classics such as Marcel Proust, Fyodor Dostoyevsky, Honore De Balzac, Rabindranath Tagore and other great uncondition ranked ones, the Armenian triple genius Hagop Oshakan 's "Remnants" is the top of Armenian novel, as he - the author is the incomparable and unic Armenian critic.

The rest of Armenian terrific catastrophe are Remnant's typical characters of Oshagan novel, who are criminal by their everyday instinct, neighbouring bloodthirsty turk executioners. Western Armenian rest of remnants and their settlements, tribal characteristics, lost manners, the indecipherable beauties are the questions to save from the loss, formulated in Oshagan's novel, which are given in a new way with an unrivaled psychoanalytical pen and insightful style, which unfortunately had no continuation in whole Armenian literature.

Key words: Prussia, Hagop Oshakan, Seoleoz, literary historian, innovation, "Overview of Western Armenian Literature", great disaster, boundless patriotism, Agavor, "Remnants".

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆԻՅ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԲՈՒՐՊՈՒՐ. ՂԱՐԱԲԱՂ-ՇԱՄԱԽԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԽՄԲԻ ԲԱՐԲԱՌԸ ԱՐԵՒՄՏՅԱՆ ԱՆԱՏՈԼԻԱՅՈՒՄ

Բուրդուրը գտնվում է Արևմտյան Անատոլիայում: Բուրդուրի հայկական գաղթօջախը գոյություն է ունեցել մինչև 1915 թվականի Եղեռնը: Ըստ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ Բուրդուրի բարբառն ընդգրկվում է -ում ճյուղի՝ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի մեջ: Ավելի քան 300 տարի պահպանվել է բարբառը օտար միջավայրում:

Ըստ կարծիքների՝ բուրդուրցիները գաղթել են Ղարաբաղի տարածքից: Հնչյունաբանական, ձևաբանական և բառային կազմի քննությունից պարզվում է, որ բուրդուրցիները գաղթել են Սյունիք-Արցախի բարբառային տարածքից, ավելի կոնկրետ՝ պատմական Բաղք-Քաշունիք գավառից՝ Հադրութի, Կապանի և Գորիսի միջակայքից: Այսօր Բուրդուրի բարբառը համարվում է մեռած, քանի որ 1915 թվականին, ինչպես հայկական մյուս բնակավայրերը, այնպես էլ Բուրդուրի հայ բնակչությունը, ենթարկվել է տեղահանության և գենոցիդի: Բուրդուրցիների մի մասը գաղթել է Արևելյան Հայաստան, իսկ մյուս մասը՝ սփռվել աշխարհով մեկ:

***Բանալի բառեր՝** Բուրդուր, Արևմտյան Անատոլիա, բարբառ, Սյունիք-Արցախ, հնչյունաբանություն, բառապաշար, քերականություն, վիճակագրություն, գաղթ:*

Մուտք

Բուրդուրը գտնվում է Արևմտյան Անատոլիայում (այժմ Թուրքիա): Բուրդուրի հայկական գաղթօջախը գոյություն է ունեցել 1600-ական թվականներից մինչև 1915 թվականը: Ըստ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ Բուրդուրի բարբառն ընդգրկվում է -ում ճյուղի՝ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի մեջ:

Բուրդուրի բարբառի¹, բանահյուսության² մասին հայերեն գրականությունից բացի կան բուրդուրահայերի կենցաղին, տեղահանությանը և կոտորածին վերաբերող թյուրքերենով բազմաթիվ հոդվածներ, գրքեր³։ Բուրդուրի գաղթօջախի ձևավորման և անկման հետ կապված ուսումնասիրություն հայագիտության բնագավառում բացակայում է, իսկ թուրքական աղբյուրները յուրովի են ներկայացնում բուրդուրահայերին, նրանց կենցաղը, ժողովրդագրական հարցերը, գաղթօջախի անկումը։ Բարբառին վերաբերող նոր ուսումնասիրություններ նույնպես չկան, եղածները հիմնականում կրկնում են նախորդներին, որովհետև բարբառն դասվում է «մահացածների» շարքում։

Սյունիք-Արցախի բարբառային հատկանիշներով Արևմտյան Անատոլիայում եղել են շուրջ տասնհինգ գաղթօջախներ, որոնցից ոչ մեկը, ինչպես նշում են, այսօր չի պահպանվել, ինչպես՝ *Օդեմիշ, Անթալիա, Բոլու, Գասաբա, Դենիզլի, Դիյնար, Դովրեկ, Դուզե, Ջոնգուլ դադ, Էլ-Մալու, Էրեյլի, Իսփարթա, Նազիլլի, Քրքր-Աղաջ*։ «Թեև յիշեալ գաղթականութեան մեծագոյն մասը տաճկախօս դարձած է,

¹ **Աճառեան Հր.**, *Հայ Բարբառագիտություն*, Լազարեան ձեմարան արեւելեան լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեան, 1911, էջ 6, 61 (այսուհետև՝ **Աճառեան Հր.**, 1911), **Աճառեան Հր.**, *Հայերէն գաւառական բառարան* («Էմինեան ազգագրական ժողովածու», հատ. Թ), Լազարեան ձեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 1, 31, 34, 61, **Գաբիկեան Կ.**, *Տարագիրին Արմաղանը (Հեռատը վարպետիս՝ Հր. Աճառեանին), Թեոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», Տպագրութիւն Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, ԺԶ (1922) տարի, էջ 326 (այսուհետև՝ **Գաբիկեան Կ.**, 1922), **Աճառեան Հր.**, *Հայոց լեզվի պատմություն*, Պետական համալսարանի. հրատ., Յերևան, II մաս, «Հայպետհրատ», Երևան, 1951, էջ 437 (այսուհետև՝ **Աճառեան Հր.**, 1951), **Մկրտչյան Ն.**, *Բուրդուրի բարբառի ձևաբանությունը*, «Լեզու և գրականություն», 1966, թիվ 1, էջ 49-61 (այսուհետև՝ **Մկրտչյան Ն.**, 1966^ա), **Մկրտչյան Ն.**, «ՈԻՄ» ճյուղի մի բարբառ «ԿԸ» ճյուղի միջավայրում, «Պատմաբանասիրական հանդես», 1966, թիվ 1, էջ 239-246 (այսուհետև՝ **Մկրտչյան Ն.**, 1966^բ), **Մկրտչյան Ն.**, *Բուրդուրի բարբառը*, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, 236 էջ (այսուհետև՝ **Մկրտչյան Ն.**, 1971), **Ջանուկյան Գ.**, *Հայ բարբառագիտության ներածություն*, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 28-142, 162-192, **Աղապաշեան Պ.**, *Ներսէս Մկրտչյան, Բուրդուրի բարբառը*, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէրոյթ, 1973, Դ, 315-319։*

² **Մկրտչյան Ն.**, *Արևմտյան Անատոլիայի նորահայտ հայ բարբառներն ու բանահյուսությունը*, «Օրենք և իրականություն». հեղինակային հրատ., Երևան, 2006 (600 էջ), էջ 304-315։

³ Քանի որ այդ հարցերի քննությունը սույն աշխատանքի մեջ ընդգրկելու նպատակից դուրս է, ուստի հարկ չենք համարում ներկայացնելու ցանկը։

⁴ **Մկրտչյան Ն.**, 1971, էջ 7։

բայց երկու տեղ՝ այն է Պուրտուր և Էօտեմիշ, դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն»⁵:

Երիցս արժևորել է պետք բարբառների դերը հայապահպանման գործում, նույն նպատակով մոռացությունից փրկել է պետք տարագիր հայության կյանքին և գոյությանը առնչվող հոգևոր և նյութական արժեքները: Մենք կարծում ենք, որ ազգային ինքնագիտակցության պահպանումը կամ կորուստը նախևառաջ պայմանավորված է լեզվով: Եթե հայ ժողովրդի պատմության մեջ դեռևս կան մասնավորապես բարբառագիտությանը, գաղթօջախի պատմությանը, ցեղասպանագիտությանը վերաբերող բաց հարցեր, որոնք ժամանակին չեն լրացվել, ապա դրանք պետք է քննության առնվեն, հանգամանորեն հանրայնացվեն, արժևորվեն գոնե ուշացած «ներկայում»: Մույն աշխատանքն առաջադրված պահանջների սահմաններում է:

Բուրդուրի բարբառի համառոտ ակնարկ

Այս բարբառի ամբողջական քննությունը պատկանում է Ն. Մկրտչյանին («Բուրդուրի բարբառը», 1971): Բուրդուրի բարբառի ձայնավորներն են՝ **ա, ալ, ու, ուլ, օ, օլ, ի, է, ը**, ինչպես Գորիսի բարբառում: Գրաբարի բաղաձայններից բացի ունի **գ, կ, ք** և **ֆ** հնչյւթները: Երկբարբառները բացակայում են: **Հնչյունի հավելման** երևույթներից բնորոշ են՝ **ն** ձայնորդի միջնահավելում՝ **այնչափ > էնչանք, հիշոց > իշունց, հ-ի** նախահավելում՝ **ամաչել > հրմանչիլ, արբենալ > հարփիլ** և այլն: **Հնչյունի անկման, բաղաձայնների կրկնության, ձայնավորների ներդաշնակության, դրափոխության, ամփոփման** իրողությունները հիմնականում համանման դրսևորումներն ունեն Մյունիքի և Արցախի բարբառային միավորներում: Շեշտը վերջերթեր է:

Բուրդուրի բարբառում հոգնակին կազմվում է **-եր՝ տուն > տըներ, -ներ՝ սեղան > սեղաննի || սեղաններ, -նի բերան > պերաննի, -ան ձի > ծիյան, էշ > իշան, -ք բուրդուցիներ > բուրդուրցիք**: Հավաքականության քերականական իմաստով առկա են **-անք (-օնք, -ունք, -ընք, -ինք), -երք, -անիք** հոգնակերտները:

Բուրդուրի բարբառն ունի յոթ հոլով, նույնքան հոլովիչ⁶:

⁵ Աճառեան Հր., 1911, էջ 61:

⁶ Քերականական ձևերի մեծամասնությունը միատարր չէ և ունի տարբերակներ, այս մասին կարելի է տեսնել՝ Մկրտչյան, 1971, էջ 80-165, Մկրտչյան Ն., 1966^ա, էջ 49-61, Մկրտչյան Ն., 1966^բ, էջ 239-246:

	-ի(ը)	-ու	-օջ	-օր մր	-վա	-ան	-ց
Ուղղ.	էծ	քամի	տեր	քիր «քույր»	օր	թոմ/րը	հալըրանք ⁷
Մեռ.	էծի(ն)	քամու(ն)	տիրօջ(ը)	քիվօ(օ)ր	օրվա(ն)	թորևան	հալըրանց(ը)
Տր.	էծի(ն)	քամու(ն)	տիրօջը	քիվօր(ը)	օրվա(ն)	թորևան(ը)	հալըրանց
Հայց.	էծ(ը)	քամի(ն)	տիրօջ(ը)	քիվօր(ը)	օր(ը)	թորևան(ը)	հալըրանց
Բաց.	էծէն	քամուև անէ	տիրօջէն	քիվօրև անէ	օրէն	թորևէն	հալըրանց անէ
Գործ.	էծօվ	քամիօվ	տիրօջօվ	քիվօրօվ	օրօվ	թորևօվ	հալըրէնցօվ
Ներգ.	էծին մէջ	քամու միջին	տիրօջ միջում	քիվօր մէջ	օրում	թորան մէջ	հալըրանց մէջ

Բարբառի որոշիչ հոդերն են՝ **-ը՝ տուև > տօնը, -ն՝ քամի > քամին**: Ստացական հոդերն են՝ **-ս՝ մատնիս || մըտանիս** «մատանիս», **-դ || տ՝ մըտանիդ(տ), -ն(ը)՝ մըտանին**: Բուրդուրի բարբառի դերանունները հիմնականում նման են Սյունիք-Արցախի բարբառների համապատասխան ձևերին, **անձնական դերանուններն են՝ ես-յես, դու-տու || տու, նա-էն, մենք-մէնք, դուք-տուք, նրանք-ընդրանք, իրենք-ուրանք**՝

Հոլ.	I դեր	II դեր	III դեր	IV դեր
Ուղղ.	ես-մէնք	տու-տուք	էն-էնդրանք	նրք-ուրանք
Մեռ.	իւ-մէր	ջու-ձէր	էնդրան-էնդրանց	ուրան-ուրանց
Տր.	իւնձ-մեզ	քեզ-ձեզ	էնդրան-էնդրանց	ուրան-ուրանց
Հայց.	իւնձ-մեզ	քեզ-ձեզ	էնդրան-էնդրանց	ուրան-ուրանց
Բաց.	իւնձանէ- մեզանէն	քեզանէ-ձեզնէն	էնդրանէ-էնդրանցանէ	ուրանէ-ուրանցանէն
Գործ.	իւնձանօվ- մեզանօվ	քեզանօվ-ձեզնօվ	էնդրանօվ-էնդրանցանօվ	ուրանօվ-ուրանցանօվ
Ներգ.	իզկում- մեզկում	քեզանում- ձեզնում	էնդրանում-էնդրանցանում	ուրանում-ուրանցում

Ցուցական դերանուններն են՝ ես, էդ, էն, էստրանք, էնդրանք, էդրանք || ըդօնք || ըդանք: Բաղադրյալ ձևերը կազմվում են **տեղ** «տեղ» (էստեղ «այստեղ»), **հէնց** «պէս» (ըսըհէնց «այսպէս»), **մանց** «ձևով» (ըտմանց «այդպէս»), **չանք** «չափ» (էսչանք «այսչափ») և այլ բառերով: **Փոխադարձ դերանուններն են՝ ուրուր** «իրար», **միւմօնու** «մեկմեկու», **հարցահարաբերականներն են՝ վօնց, ինչ, վըր, օվ, իշթար** «ինչպէս», **ինչընէ** «ինչ կերպ», **ոււմ, ու/ումանց** «ոււմ», **քանը** «քանի» և այլն, **որոշյալ դերանուններն են՝ փըթավը** «բոլորը», **ամէնը, էմինը** «մյուսը», **բութունը,**

⁷ «Հորաքույր»:

սաղ «ամբողջ», **անորոշներն են՝** մինը, «մի», մեկը, ուրուշը, էսին «այսինչ», **ֆլանքաբար** «ումն մեկը» և այլն, **ժխտական դերանուններն են՝** օնչ օվ «ոչ ոք», վօչ մին «ոչ մեկը», **հեշմին** «ոչ մեկը»: Բուրդուրի բարբառն ունի երկու խոնարհիչ՝ **-ա, -ի:** Դերբայներն են՝ **անորոշ -իլ, -ալ (մ(ի)ը «մի»** ժխտական եղանակիչի հետ հանդես է գալիս որպես ժխտման վերաբերական՝ **ասիլ մը** «էլ մի ասա», **արգելական հրամայական խօսալ մը** «մի խոսիր»), **անկատար -ում || -ըմ,** հազվադեպ՝ **-իս, ապառնի՝ -ու, -ի,** վաղակատար՝ **-էլ, -ալ,** հարակատար՝ **-ած,** ենթակայական՝ **-օդ:** Բուրդուրի բարբառի համար նշվում է նաև «ժխտման կամ ըղձական դերբայը», որ կազմվում է անորոշից (լ-ի անկմամբ կամ առանց դրա ու օժանդակ բայի ժխտականով)՝ **կիրիլ չիմ, մնալ չիմ:** Օժանդակ բայերն են՝ **ներկա եմ-եմ || ըմ || իմ, ես-ես || ըս || իս, է-ա, ենք-ենք || ընք || ինք, եք-էք || ըք || իք, են-էն || ըն || ին, անցյալ էի-ի(մ), էիր-իր, էր-էր, էինք-ինք, էիք-իք, էին-ին:** Խոնարհման համակարգն ընդհանուր առմամբ համապատասխանում է Սյունիքի և Արցախի բարբառների համապատասխան ձևերին: Տարբերությունը անցյալ ժամանակաձևերում է. զուգահեռ առկա է **իդի** մասնիկով* կազմությունը, ինչպես **քիցում ի || քիցում ըմ իդի, կըրթալու վի || կըրթալում իդի:** **Իդի** մասնիկով զուգաձևությունը առկա է գրեթե բոլոր եղանակների անցյալ ժամանակաձևերում: Ահա խոնարհման ընդհանուր պատկերը՝

Մահմանական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Անկատար ներկա	Գիրում ըմ, -րս, -ա, -ընք, -ըք, -ըն	Գարթում ըմ, -րս, -ա, -ընք, -ըք, -ըն
Անկատար անցյալ	Գիրում ի, -իր, -էր, -ինք, -իք, -ին	Գարթում ի, -իր, -էր, -ինք, -իք, -ին
Կադակատար ներկա	Գիրել ըմ, -րս, -ա, -ընք, -ըք, -ըն	Գարթացել եմ, -ես, -ա, -ենք, -էք, -են
Կադակատար անցյալ	Գիրել ի, -իր, -էր, -ինք, -իք, -ին	Գարթացել ի, -իր, -էր, -ինք, -իք, -ին
Ապակատար ներկա	Գիրելու վեմ, -վես, -վա, -վենք, -վեք, -վեն	Գարթալու վեմ, -վես, -վա, -վենք, -վեք, -վեն
Ապակատար անցյալ	Գիրելու վի, -վիր, -վեր, -վինք, -վիք, -վին	Գարթալու վի, -վիր, -վեր, -վինք, -վիք, -վին
Հարակատար ներկա	Գիրած ըմ, -րս, -ա, -ընք, -ըք, -ըն	Գարթացած ըմ, -րս, -ա, -ընք, -ըք, -ըն
Հարակատար անցյալ	Գիրած ի, -իր, -էր, -ինք, -իք, -ին	Գարթացած ի, -իր, -էր, -ինք, -իք, -ին
Անցյալ կատարյալ	Գիրեցի, -եցիր, -եց, -եցինք, -եցիք, -եցին	Գարթացր, -ացըր, -աց, -ացընք, -ացք, -ացըն
Ըղձական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Գիրեմ, -ես, է(ի), -ենք, -էք, -են	Գարթամ, -աս, -ա, -անք, -աք, -ան

* Այն թյուրքերենի թերի օժանդակ բայի անցյալ կատարյալի մասնիկ է, որ կազմվում է *-i-* բայսահմըով և *-di, di, du, dü, -ti, ti, tu, tü* - անցյալ ժամանակի ածանցների և դիմորոշ ստորոգման ածանցների միջոցով: Բուրդուրի բարբառին փոխանցվել է *idi* տարբերակը:

Անցյալ	Գիրեյի, -եյրի, -եր, -եյինք, -եյիք, -եյին	Գարթայի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային
Պայմանական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Գրկիրեմ, -ես, -ե(ի), -ենք, -եք, -են	Գրկարթամ, -աս, -ա, -անք, -աք, -ան
Անցյալ	Գրկիրեյի, -եյիր, -եր, -եյինք, -եյիք, -եյին	Գրկարթայի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային
Հարկադրական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Պետք ա կիրեմ, -ես, -ե(ի), -ենք, -եք, -են	Պետք ա կարթամ, -աս, -ա, -անք, -աք, -ան
Անցյալ	Պետք ա կիրեյի, -եյիր, -եր, -եյինք, -եյիք, -եյին	Պետք ա կարթայի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային
Հրամայական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Կիրե՛, կիրեցե՛ք,	Կարթա՛, կարթացե՛ք

Բուրդուրի բարբառի նկարագրությունը լիարժեք չի կարող լինել առանց բառապաշարի: Ն. Մկրտչյանի վկայությամբ՝ գրաբարի հետ ընդհանուր բառերի թիվը շուրջ 1600 է, բարբառայինները և բարբառում ստեղծված կազմությունները՝ 200-ական, իսկ փոխառությունները՝ 3500 բառ: Առաջադրված խնդրի շրջանակում փորձենք զուգահեռել Բուրդուրի բարբառային բառապաշարը Գորիսի և Կապանի բարբառային միավորներին: «Բարբառային բառերի բառարանում» ընդգրկված 685 բառից մոտավորապես 207-ը ունի հնչյունական, իմաստային կամ առիասարակ բառիմաստային տարբերություն Գորիսի, Կապանի (մասամբ նաև Հաղուրթի) խոսակցական միավորներից, որ կազմում է ընդհանուր բառաքանակի 30%-ը: Այդ բառերից են՝ **անձական** «անձան հավ», **ահլու** «ահավոր», **աճահամ** «աղու», **ամբբիլ** «ամբարել», **անկերքք** «անատամ», **գանաթվօր** «արհեստավոր», **ֆոդած** «հոտած» և այլն: Եթե հնչյունական և մասամբ իմաստային տարբերություն ունեցող բառերն էլ հանենք և թողնենք միայն անձանոթները, ապա տարբերությունների թիվը մոտենում է մոտ 16%-ի: Դրան զուգահեռ Բուրդուրի բարբառի բառապաշարում բացի Սյունիք-Արցախի բարբառային տարածքին բնորոշ բառերից՝ **անձօթ** «անձայր», **յաղ անիլ** (յըղի տինել) «հեռացնել» և այլն, կան նաև շրջակա՝ արևմտյան խմբակցության բարբառային միավորներից անցածները, ինչպես՝ **աշիլ** «1. սպասել, 2. նայել», **օքմին** «ոմն», օշնել «ուշքը գնալ», **վարէն** «ցածից» և այլն, ինչպես և այնպիսի փոխառություններ, որոնք անձանոթ են Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի բարբառային միավորներին:

Այս համեմատության հիմքում, սակայն, խախտված է պատմահամեմատական մոտեցումը, այսինքն՝ մի կողմից գործ ունենք մեռած բարբառի տվյալների, որոնք գրառվել են մոտ 50 տարի առաջ, մյուս կողմից կենդանի բարբառային միավորների հետ, որոնք տարբեր ազդեցությունների տակ են գտնվում: Այդուհանդերձ, կարող ենք

կարծիք ձևավորել, որ բարբառային բառապաշարը շուրջ 300 տարվա մեջ չնչին փոփոխություններ է կրել և շարունակել է պահպանվել բարբառի ներքին օրինաչափությունների, բառապաշարի հիմնական շերտից եկող իմաստաբանական և բառակազմական կայուն համակարգի շնորհիվ:

Բուրդուրի բարբառի սերման հարցը

Ն. Մկրտչյանի հավաստմամբ՝ «Բուրդուրի բարբառը որոշ գծերով մոտ է դարաբաղյան միջավայրի «ուս» ճյուղի բարբառներին, սակայն հնչյունական ու ձևաբանական մի շարք առանձնահատկություններով (նաև բառապաշարով) զգալիորեն տարբերվում է նրանից»⁹: Այս աշխատությունից հետո Բուրդուրի բարբառին վերաբերող էական (նորություն պարունակող) աշխատանքներից թերևս նշելի է «Հայ բարբառագիտության ներածությունը», որտեղ որոշված է Բուրդուրի բարբառի խմբակցության պատկանելը: Գ. Ջահուկյանի կողմից կազմված հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, բնականաբար, հիմք չէր կարող լինել Ն. Մկրտչյանի կանխադրումների և մասնավորապես որոշ հարցադրումների համար:

Արդ՝ Ղարաբաղ-Շամախիի բարբառներից և խոսվածքներից որի՞ց է սերված Բուրդուրի բարբառը, պատմական ի՞նչ դրդապատճառներ են եղել Սյունիք-Արցախից դեպի Արևմտյան Անատոլիա գաղթի համար: Ն. Մկրտչյանը բաղդատել է Բուրդուրի և «Ղարաբաղի բարբառը»՝ ընդհանուր տարբերություններն ընդգծելու նպատակով: Բուրդուրին համեմատվող եզրը Կ. Դավթյանի «Ղարաբաղի բարբառի բարբառային քարտեզ» աշխատությունն է՝ մեկ ընդհանուր անվան տակ՝ «Ղարաբաղի բարբառ»: Իսկ Ղարաբաղը տարբեր բարբառներ ու խոսվածքներ ունի ոչ միայն իր տարածքում, այլև նրանից դուրս: Այստեղ գուգահեռներ չկան նաև Սյունիքի բարբառների և խոսվածքների հետ: Այսինքն՝ թեական են մնում՝ Սյունիքի՞ց, Արցախի՞ց, թե՞ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբին պատկանող բարբառային այլ տարածքից է սերված բարբառը, լեզվական ի՞նչ հատկանիշներ է ունեցել, և վերջապես՝ որո՞նք են բարբառային այն հատկանիշները, որոնք, շուրջ 300 տարի կտրված լինելով բնիկ տարածքից, արտալեզվական բազմաթիվ գործոնների առկայությամբ, առանցքային փոփոխությունների չեն ենթարկվել, հունարենի, թյուրքերենի խոր ազդեցությամբ գաղթօջախն

⁹ Մկրտչյան Ն., 1971:

այլլալեզու չի դարձել, անգամ չի ձուլվել արևմտյան խմբակցության հայ բարբառներին:

Առաջադրված հարցերը, անշուշտ, չեն կարող սպառիչ պատասխաններ ունենալ սույն հոդվածի համար նախատեսված սահմաններում: Բայց մենք հնարավորություն ունենք պատմահամեմատական մեթոդի օգնությամբ որոշ եզրահանգումներ կատարել կամ գոնե պատկերացում ունենալ, թե՛

1. Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի ո՞ր բարբառին կամ խոսվածքին է ավելի մոտ Բուրդուրի բարբառը:

2. Պատմաաշխարհագրական ո՞ր տարածքից և ի՞նչ հանգամանքների բերումով են բուրդուրցիները գաղթել:

Առաջին հարցին պատասխանելու համար մենք դիմել ենք վիճակագրական բարբառագիտությանը. հայերենի բարբառների համար բազմահատկանիշ (100 հատկանիշ) դասակարգմամբ տրված գույնաբանություններում դնել մի կողմից՝ Բուրդուրի, մյուս կողմից՝ Գորիսի, Հաղբուրթի, Շամախիի, Մարաղայի (Պարսկաստանից գաղթած լինելու վարկածի համար), Բոլնիս-Խաչենի (Ղարաբաղի բարբառի համար կենտրոն ընտրված), Կապանի խոսվածքների տվյալները, համեմատել տարբերություններն ու նմանությունները, ըստ քանակական և որակական կշռի որոշել, թե սրանցից որին է մոտ կամ որից է հեռու: Նախ կազմել ենք համեմատական տախտակ՝ ըստ բազմահատկանիշ դասակարգման տվյալների, որտեղ 100 հատկանիշները բաշխված են 4 մակարդակների՝ 25 բաղաձայնական հատկանիշ, 25 ձայնավորական, 25 անվանական, 25 բայական, ապա գնահատել յուրաքանչյուր հատկանիշի առկայությունը կամ բացակայությունը (+ կամ -, Դ կամ, ±) համեմատվող բարբառների համար (+ և +՝ 0, - և -՝ 0, + և -՝ 1, - և +՝ 1, Դ և +՝ 0,5, Դ և -՝ 0,5, ± և +՝ 0,5, ± և -՝ 0,5, Դ և Դ՝ 0, ± և ±՝ 0), որոնց արդյունքն ավարտվում է «տարբերություններով»՝ «արդյունք» (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ԲԱՐԲԱՐԱՐԱՆԻ ՀԱՏԿԱՆԱԿՆԵՐԻ (ՔՈՒՑԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆՇԱՆԱԳՈՐԾ ¹⁰																									Արդ
Բարբ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
Բուր							Դ	+				+			+		+								0,5

¹⁰ Համեմատական աղյուսակի համառոտություններն են՝ բաղ.-բաղաձայնական, բրդ.-Բուրդուր, Գոր.-Գորիս, տրբ.-տարբերություն, Հաղբ.-Հաղբուրթ, Շմխ.-Շամախի, Բլն.Խ.-Բոլնիս-Խաչեն, Մրդ.-Մարաղա, Կպն.-Կապան, ձայն.-ձայնավորական, անվ.-անվանական, բայ.-բայական: Կապանի խոսվածքը համեմատել, ճշտել ենք տեղաբնիկ Գրիշա Սեդրաթայի Սմբատյանի օգնությամբ (ծնվ. 1953թ., հոկտեմբեր, ք. Կապան-գ.Շիկահող):


[illegible]

[illegible]

Արդյունքները գծային հատվածների և երկրաչափական պատկերների միջոցով արագ գնահատելու համար ընտրել ենք տարբերությունների հարաբերությունը (աղյուսակ 2.), այսինքն փորձել ենք որոշել, թե համեմատվող բարբառը Բուրդուրը, որքա՞ն տարբերություններ ունի մյուս բարբառներից: Օրինակ՝ բարբառային 100 զուգաբանություններից Բուրդուրը Մարաղայից տարբեր է 30,5-ով, որից՝ 7,5 բաղաձայնական տարբերություն, 8՝ ձայնավորական, 7՝ անվանական, 8՝ բայական: Խորանարդիկներից յուրաքանչյուրը տարբերակիչ հատկանիշով որքան մոտենում է 100-ին, այնքան մեծ է նրա տարբերությունը Բուրդուրի բարբառից: Ըստ այդմ՝ Բուրդուրից ամենաշատ տարբերություններն ունի Շամախին՝ 31,5 հատկանիշով: Այսկերպ կարողանում ենք իմանալ նաև բարբառների մեջ առկա հնչյունական և ձևաբանական տարբերությունների քանակը:

Աղյուսակ 2.


Տարբերությունները Բուրդուրի բարբառից



	Գորիս	Հաղբուշ	Շամախի	Բոլնիս-Խաչեն	Մարաղա	Կապան
■ Բաղաձայնական-1	4,5	5	7	7,5	7,5	4
■ Զայնավորական-2	6,5	8,5	7,5	11,5	8	7,5
■ Անվանական-3	7	5,5	10	4,5	7	6
■ Բայական-4	6	7	7	6,5	8	5
■ Ընդամենը	24	26	31,5	30	30,5	22,5

Չնայած բարբառների տարբերություններն ընդգրկող աղյուսակում (աղյուսակ 2.) արդեն պարզ է դառնում, թե Բուրդուրի բարբառը մերձավորության ինչ աստիճան ունի համեմատվող բարբառների հետ, այդուհանդերձ, վիճակագրական արդյունքի՝ եզրակացության համար ներկայացնենք նույն կամ մոտ հատկանիշները պարունակող պատկերը (աղյուսակ 3.), որից պարզ է դառնում, որ Բուրդուրը սերվել է Կապանի տարածաշրջանի խոսվածքներից:

Ընդհանուր համեմատությունից կարելի է նաև ենթադրել Բուրդուր գաղթած հայրենակիցների պատմական տարածքը՝ նկատի առնելով ընդհանրությունների սահմանը՝ 70-ից ավել (Կապան՝ 79,5,



Գորիս՝ 76, Հաղրուլթ՝ 74): Գորիս-Կապան-Հաղրուլթ միջակայքը մասնավորապես համապատասխանում է պատմական **«Միս Բաղք, որ անուանում է Քաշունիք (Քաշաթաղ՝ Մ.Ք.)»** գավառին:

Բուրդուրի գաղթօջախի ձևավորման ժամանակաշրջանի հարցը

Բուրդուրցիների գաղթի ժամանակագրության մասին նախ իմանում ենք Հր. Աճառյանի «Հայ Բարբառագիտություն» աշխատությունից. Բուրդուրի և Օդեմիշի հայերը գաղթել են «մեկ երկու դար առաջ Ղարաբաղին հեռանալով»¹¹, ապա՝ Հր. Աճառյանին հղված մի նամակից, որտեղ նշվում է, թե ըստ բուրդուրցիների՝ իրենք գաղթել են երեք հարյուր տարի առաջ Ղարաբաղից¹²: Հետագայում, հավանաբար՝ այս վկայության հիմքով՝ ենթադրաբար, Հր. Աճառյանը գրում է. «Պուրտուր և Էոտեմիշ գաղթել են Ղարաբաղից ԺԷ դարում կամ ավելի ուշ»¹³: Ըստ այսմ՝ բուրդուրցիների գաղթը ժամանակագրորեն տեղադրվում է մոտավորապես 1600-1700-ականների միջակայքում՝ մասնավորապես 1600-ական թվականների առաջին քառորդում՝ «ըստ իրենց աւանդութեան»¹⁴: Այս հարցին հետագայում խորամուխ է եղել Ն. Մկրտչյանը. նախ գրում է, որ «այն հիմնադրվել է մոտ 1610 թվականին՝ Շահ-Աբասի բռնագաղթից խույս տված դարաբաղցիների կողմից»¹⁵, ապա պնդում, որ Բուրդուրի հայկական համայնքը ձևավորվել է 17-րդ դարի սկզբներին¹⁶։ Սյունիքից և Ղարաբաղից այստեղ գաղթած բնակչությամբ։ Այս տեսակետի համար հիմք է եղել բուրդուրցի բեյրութաբնակ Փիլիպոս Առաքյալի գրույցը, որտեղ վերջինս պատմել է, որ իրենց պապերը Թուրքիա են գաղթել Պարսկաստանից Շահ-Աբասի հատուկ թույլտվությամբ («Ֆերմանով») «մեծ սովից» հետո։ «Անշուշտ,- եզրակացնում է Ն. Մկրտչյանը,- խոսքը 1607 թվականի երկրորդ «մեծ սովի» մասին է, քանի որ առաջին «մեծ սովի» ժամանակ՝ 1577 թվականին, Շահ-Աբասի բռնագաղթը դեռևս տեղի չէր ունեցել»¹⁷։

¹¹ **Աճառեան Հր.**, *Հայ Բարբառագիտություն*, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, Սոսկուա-Նոր-Նախիջեան, 1911, էջ 61:

¹² **Գաբիկեան Կ.**, *Տարագիրին Արմաղանը (Հեռուոր վարպետիս՝ Հր. Աճառեանին), Թեոդիկ, «Ամենուն տարեցոյցը», Տպագրութիւն Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, ԺԶ (1922) տարի, էջ 326 (այսուհետև՝ Գաբիկեան Կ., 1922):*

¹³ **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, Պետական համալսարանի. հրատ., Յերևան, II մաս, «Հայպետհրատ», Երևան, 1951, էջ 437:

¹⁴ Գաբիկեան, 1922, էջ 326:

¹⁵ Մկրտչյան Ն., 1966, էջ 49:

¹⁶ Մկրտչյան Ն., 1971, էջ 6:

¹⁷ Մկրտչյան Ն., 1971, էջ 6: Այստեղ նշվում է, որ մինչև 1915 թ. Եղեռնը Առաքելյանի ընտանիքում պահպանվում էր Շահ-Աբասի «ֆերմանի» (հրամանի) պատճենը:

Արևմտյան Անատոլիայի հայկական գաղթավայրերի պատմությանն ու նկարագրությանն է նվիրված Հակոբ Քոսյանի «Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս (Զմիռնիյ վիճակին գլխաւոր քաղաքներն եւ Հայք)» արժեքավոր աշխատությունը, որում, սակայն, բացակայում են Բուրդուրի տվյալները: Ժողովրդագրական որոշ տեղեկություններ ենք քաղում այս գրքից, որ նշված տարածք՝ Արևմտյան Անատոլիա, գաղթել են Տաթևից, Շիշկերտից, Բեխից և այլ բնակավայրերից շուրջ 250-350 տարի առաջ: Պատմական Սյունիքի գյուղերից դեպի Արևմտյան Անատոլիա գաղթին անդրադարձել են նաև ուրիշ հեղինակներ: Մ. Հասարայանը գրում է, որ «սամանյան բանակի նահանջի ժամանակ (18-րդ դարի կեսեր Մ. Ք.) ոչ միայն Կապան-Ղափանից, այլև Սիսիանից, հատկապես Ախլաթյանից (ողջ Բնունիսը, Արևիսը), երևի նաև Բոնակոթի ահագին բնակիչներ գաղթեցին Թուրքիայի խորքերը, Բուրդուր, մինչև Իզմիր, Միջերգրականի ավերը, սարսափած տեղական խաների, բեկերի և քոչվորների վրեժխնդրությունից»¹⁸: Հարցն արժարժվել է նաև Գ. Սմբատյանի կողմից¹⁹. «Եվ Ղափանի գյուղերը ամայացան, անհետացան երկրի երեսից կամ կուլ գնացին դարավոր կաղնիներին»: Փաստորեն՝ 17-րդ դարից սկսած իսլամ դավանող ժողովուրդների ներթափանցումը դեպի Սյունիքի և Արցախի պատմական տարածքները²⁰ բնիկների տեղաշարժերի հիմնական պատճառն է եղել:

Գաղթի հետ կապված հարցերը՝ ենթադրված ժամանակահատվածում տարածաշրջանում տեղի ունեցած պատմական դեպքեր և այլն, անշուշտ, այլ՝ առավել հանգամանալից քննություն են պահանջում:

Այսպիսով՝ մինչև 1915թ. գոյություն է ունեցել Բուրդուրի հայկական գաղութը: Եղեռնից հետո բուրդուրցիները տեղահանվել են. մի մասը սպանվել է ճանապարհին²¹, մյուս մասը՝ սփռվել աշխարհով մեկ: 300 տարի օտար միջավայրում բարբառային հիմնական հատկա-

¹⁸ **Հասարայան Մ.**, Պատմահնագիտական ուսումնասիրություններ, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 147:

¹⁹ **Սմբատյան Գ.**, Կապան: Հետապնդող հիշողություն, Երևան, «Անտարես» հրատ., 2021, էջ 11-14: Գրքում բերված են նաև Զմյուռնիայի մերձակա Այդընի, Պալընտըրի, Էոտեմիշի շրջանների վիմագրերը:

²⁰ Այս շրջանի պատմական անցուղարձերի մասին կարելի է տեսնել նաև՝ **Կարապետյան Մ.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 125-126:

²¹ **Tahir K.**, *Bir Mülkiyet Kalesi*, 6 bas. (1 bas. 1977), İstanbul, 2011 s.158.

նիշները պահպանած Բուրդուրի բարբառն այլևս դասվում է հայերենի
վեռած բարբառների շարին:

РЕЗЮМЕ

БУРДУР: ДИАЛЕКТ МЕЖДУАРТНОЙ ГРУППЫ КАРАБАХ- ШАМАХ В ЗАПАДНОЙ АНАТОЛИИ

ՄԴԵՐ ԿՄԱՄԱՆԸ

Бурдур находится в Западной Анатолии. Армянское поселение Бурдур просуществовало до Геноцида 1915 года. Согласно многохарактерной классификации армянских диалектов, бурдурский диалект входит в карабахско-шамахинскую междиалектную группу. Диалект сохранился в чужой среде более 300 лет.

По некоторым данным, бурдуры мигрировали с территории Карабаха. Изучение фонологического, морфологического и лексического состава показывает, что бурдурцы мигрировали из диалектной области Сюник-Арцах, а именно из исторической провинции Баг-Кашуник, между Гадрутом, Капаном и Горисом. Сегодня бурдурский диалект считается мертвым, потому что в 1915 году, как и в других армянских населенных пунктах, армянское население Бурдура подверглось депортации и геноциду. Часть народа Бурдур мигрировала в Восточную Армению, а другая часть рассеялась по миру.

Ключевые слова: Бурдур, Западная Анатолия, диалект, Сюник-Арцах, фонетика, лексика, грамматика, статистика, миграция.

SUMMARY

BURDUR: THE DIALECT OF THE INTERDIARTIC GROUP OF KARABAKH-SHAMAKH IN WESTERN ANATOLIA

MHER KUMUNTS

Burdur is located in Western Anatolia. The Armenian settlement of Burdur existed until the 1915 Genocide. According to the multi-character classification of Armenian dialects, the Burdur dialect is included in the

Karabakh-Shamakhi inter-dialect group. The dialect has been preserved in a foreign environment for more than 300 years.

According to some information, the Burdurs migrated from the territory of Karabakh. The study of the phonological, morphological and lexical composition shows that the Bordurs migrated from the Syunik-Artsakh dialect region, namely from the historical province of Bagh-Kashunik, between Hadrut, Kapan and Goris. Today, the Burdur dialect is considered dead because in 1915, as in other Armenian settlements, the Armenian population of Burdur was subjected to deportation and genocide. Part of the Burdur people migrated to Eastern Armenia, and the other part scattered around the world.

Key words: *Burdur, Western Anatolia, dialect, Syunik-Artsakh, phonetics, vocabulary, grammar, statistics, migration.*

ԿԻՄ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԷՔԶԻՍԵՆՑԻԱԼ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ

Բոլշնիզմը հայրենագրկման ողբերգականությանը հակադրեց պրոլետկուլտի սին գաղափարաբանությունը՝ կիսատված հայրենիքը այսպես կոչված՝ երջանկության հանգրվանի վերածելով: Իսկ երբ պարտադրյալ երջանիկ ես՝ շինծու ինքնավստահ ես պատկերանում: Եղեռնագավակ խորհրդահայ գրողների մոտ այս ինքնաստեղծ վստահությունը մղեց «ընդլվման գրականության»: Ցեղասպանության ծանր պատկերներին զուգադիր ստեղծվեցին հուսահատ պայքարի ուշագրավ դրվագներ:

Այս առումով տրամաբանական էր վրեժի էքզիստենցիալ ընկալումը խորհրդահայ արձակում, հատկապես ստալինյան դա-րաշրջանի ավարտից հետո:

Բանալի բառեր՝ էքզիստենցիա, Եղեռն, սփյուռք, կարոտի գրականություն, խորհրդահայ գրականություն, «Երկիր Նաիրի», «Այրվող այգեստաններ», «Եղեգները չխոնարհվեցին», «Մոռեղան», «Բովտուն», Արցախ:

Հայոց ցեղասպանության անմիջական ականատեսի ու պարզապես ժամանակակցի էքզիստենցիալ ընկալումները ազգային ցավի տարածական ու խորքային շերտերում հաճախ նույնական են, իսկ ահա գեղարվեստական ընդհանրացումների առումով դրանք ունեն յուրահատկություններ, որոնց առանցքը անձնականի ու անանձնականի ընդգծված սահմանն է:

Հետեղեռնյան հայ էթնոտարածքի աշխարհագրական մասնատումը առավելապես տարածաշրջանային ցնցումների հետևանք էր՝ պայմանավորված Առաջին համաշխարհային պատերազմով: Ստեղծվեց հայկական նոր պետություն, սակայն Հայաստանի արևմտյան հատվածից բռնատեղահանված հայության մեծամասնությունը սփռվեց աշխարհով մեկ՝ իր հետ տանելով Էրզրի հանդեպ անափ կա-

րոտն ու վերադարձի հույսը, իսկ Մփյուռքում ձևավորված գրական հանրության համար հայրենագրկման պատկերներն ու հայրենական հուշերը դարձան Եղեռնի գեղարվեստական արտացոլման կենսանյութ:

Այսպես կոչված՝ *կարոտի գրականություն* կերտողները՝ Համաստեղ, Հակոբ Մնձուրի, Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Լևոն-Զավեն Սյուրմեյան, Վահան Թեքեյան, Մուշեղ Իշխան, Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց և ուրիշներ, կորուսյալ հայրենիքի կերպարը փորձում էին վերակերտել հենց արթուն հուշերի պատառիկներից: Օտար ափերում հանգրվանած հայի հայրենաբաղձությունն ավելի առարկայական էր, քան Խորհրդային Հայաստանում նորեն կենդանություն առած հայի կարոտը: Սա տրամաբանական ու օրինաչափ էր երկու հատվածների հայության կարգավիճակային տարբերություններով, ինչն արտահայտվեց նաև գեղարվեստական գրականության մեջ:

Լևոն-Զավեն Սյուրմեյանի և Գուրգեն Մահարու գեղագիտական որոնումներն, օրինակ, նույն նոստալգիկ դաշտում կայանալով հանդերձ, ունեն էքզիստենցիալ ընկալման առանձնահատկություններ: «Ձեզ եմ դիմում, Տիկնայք և պարոնայք» ինքնակենսագրական վեպը Սյուրմեյանի համար ցավի վերապրում հարուցող պատմություն է, որի մեջ հեղինակը մարմնավորում է ցեղասպանությունից մազապուրծ պատանու կերպարը: Այս նարատիվի մեջ չկա ընդվզումի խորհուրդ, և իրադարձությունների հերթագայությունը կառուցվում է զգայական ֆաբուլայի վրա: Ինչպես սփյուռքահայ մյուս գրողները, որոնց կերտած գրականությունն առավելապես նվիրված է վտարանդի հայության ճակատագրի համալիր քննությանը, Սյուրմեյանն էլ նույնպես գոյաբանական խնդիրները դիտարկում է սոցիալ-հոգեբանական հենքի վրա: Գրողը չի ապավինում դիմադրական բնագծի դրսևորումներին, ինչը ստեղծագործական ագրեսիվ տարածք կապահովեր, այլ հարազատ է մնում գաղթականի հավաքական նիհիլիզմին: Հասկանալի է, որ օտար ափերում հայը դարձյալ նույն քաղաքական ընկճախտի կրողն է, ուստի կյանքի դժվարությունների հանդեպ նրա հակազդումները չունեն այն ոգեշնչումները, որոնք ժառանգել են Եղեռնի ծանր հետևանքները կրող խորհրդահայ գրողները՝ Գուրգեն Մահարի, Խաչիկ Դաշտենց և այլն:

Մահարու հայտնի եռագրությունն այս առումով ավելի տիպական է: «Պատումի գեղարվեստական տարածությունը Մահարին հատկացնում է կործանվող Վանի պատմությանը՝ մինչև վերջին ճակա-

տագրական գիշերը, երբ հնադարյան ոստանը դատարկվում է վանեցիներից, երբ խուճապի մատնված բնակիչներն իրենց քաղաքի վրա կամար կապած սեւ ծիածանի տակով բռնում են գաղթի բյուրերի նահանջի ճամփաները: Դա, ինչ խոսք, բարդից էլ բարդ, ծայրահեղ շիկացած կետերի աստիճանին հասցված իրադրություն էր, որն իր անբեկանելի հրամայականն էր դրել առանձին անհատների, սոցիալական առանձին խմբերի, գործող ազգային կուսակցությունների առաջ՝ որոշելու իրենց դիրքը ընթացիկ եւ գալիք իրադարձությունների հանդեպ, գրում է գրականագետ Սուրեն Աղաբաբյանը¹:

Մահարու ինքնակենսագրական տվյալները բացարձակ եսակենտրոն չեն, դրանք աստիճանաբար անձնականից անցում են կատարում դեպի անանձնականի տիրույթ, որտեղ պատմությունը, իրադարձությունները, գաղափարական ամփոփումները շատ ավելի կարևորված են, քան զուտ մարդկային ողբերգությունը: Ինչքանով է արվեստագիտական այս թեզը պատճառաբանվում խորհրդային կարծրատիպերով. դժվար է սպառնալ ասել, բայց եթե հարցը փորձենք գնահատել, ասենք, Եղիշե Չարենցի գրական կոնցեպցիայի համապատկերին, ապա ակնհայտ կդառնա գաղափարայնացված պատմության արտուրդը:

Չարենցի «Երկիր Նաիրի»-ն մասնավորապես, ժանրային կոնկրետություն չունի. այն կարելի է նաև անվանել երգիծավեպ, որտեղ խարազանվում են հայ քաղաքական մտքի հավակնությունները, և որի պատճառով կորսվեց մի ամբողջ հայկական նահանգ: Կարծեք սա այն նախանյութն է, որով երկի գաղափարական հյուսվածքը պիտի պատվեր էքզիստենցիալ շղարշով, սակայն Չարենցը չի գնում դրան, նա «վերադառնում է Կարս՝ կրկին հեռանալու համար»: Հեռանալու՝ ո՞ր: Գրողի անդրտեղանքը պատասպարման վայր չէ, որտեղ կարելի է գնահատականներ հնչեցնել անցյալի ու ներկայի սխալների մասին և անձամբ մնալ ճշմարիտ: Այս շեշտումով միանգամայն բնական ենք համարում, որ Եղիշե Չարենցը, կոնցեպտուալ հարցերը հղելով ապագային, այդուհանդերձ, չի փորձում գոնե ի՛ր սեփական ժամանակի մեջ փնտրել դրանց պատասխանները: «Չարենցը «Երկիր Նաիրի»-ն գրելիս բոլշևիկյան ինքնախաբեության մեջ եղել»², - նկատում է գրականութ-

¹ Տե՛ս <https://groghutsav.am/2021/07/28/%d5%be%d5%ab%d5%ba%d5%a1%d5%bd%d5%6%84%d5%ab-%d5%b6%d5%b8%d6%80-%d5%bf%d5%a1%d6%80%d5%a2%d5%a5%d6%80%d5%a1%d5%af%d5%a8/>.

² Տե՛ս <http://www.arteria.am/hy/1328535111>.

յան տեսաբան Աշոտ Ոսկանյանը: Եվ նա յուրովի ճիշտ է: Ճիշտ է թերևս այն առումով, որ բոլշևիզմը հայրենագրկման ողբերգականութ-
յանը հակադրեց պրոլետկուլտի սին գաղափարաբանությունը՝
կիսատված հայրենիքը «երջանկության հանգրվանի» վերածելով: Իսկ
երբ պարտադրյալ երջանիկ ես՝ շինծու ինքնավստահ ու ուժեղ ես
պատկերանում:

Եղեռնագավակ խորհրդահայ գրողների մոտ այս ինքնաստեղծ
վստահությունը մղեց «ընդվզման գրականության»: Ցեղասպանության
ծանր պատկերներին զուգադիր ստեղծվեցին հուսահատ պայքարի
ուշագրավ դրվագներ: Ստեփան Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհ-
վեցին» վեպն այդ պայքարի գեղարվեստացված տարեգրությունն է,
որի բնաբանը գուցե թե կարելի է համարել նրա մեկ այլ ստեղծա-
գործության մեջ ոսկետառ փորագրված միտքը. «*Կյանքը տոնից է
սկսվում, և երանի նրան, ով կյանքը կվերջացնի իր տանը*»: Հայ ֆիդա-
յու ազատագրական պայքարի մի նպատակն էլ դա էր՝ մեռնել հայրենի
օճորքի տակ: Այս և հայդուկային մյուս՝ «*Ով գարկվեց՝ դավաճան է*»
կարգախոսներն առերևույթ ներհակ են, սակայն խորքային բովան-
դակությամբ իրար փոխլրացնում են: Ասել է թե՛ ֆիդայական
գոյապայքարի իմաստը կայանում է ապրելու և մեռնելու թաքուն ըդ-
ձանքի մեջ: Կիլիկիայի վերջնական անկումը 1921-ին՝ պիտի տեսնել
որպես Վանի, Կարինի, Սասունի կործանման սուբստանտ շարունա-
կություն: Եթե սա տրամաբանական է Առաջին համաշխարհային
պատերազմի հետևանքների համատեքստում, ապա նույնչափ
տրամաբանական է վրեժի էքզիստենցիալ ընկալումը խորհրդահայ
արձակում, հատկապես ստալինյան դարաշրջանի ավարտից հետո:

Այս սուբստանցը մասամբ բնորոշ է Խաչիկ Դաշտենցի
«Խողեղան» և «Ռանչպարների կանչը» վեպերին: Չխորանալով հիշյալ
երկերի ժանրային առանձնահատկությունների մեջ, որից հատկանշելի
է նյութի գեղարվեստականության և պատմականության արդյունավետ
համադրումը, կարևորենք մի շատ խոստուն հանգամանք, որին
հմտորեն անդրադարձ է կատարել անվանի գրող Մուշեղ Գալշոյանը:
Վերջինս, Դաշտենցի 70-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ
ելույթ ունենալով, նկատել է, որ Դաշտենցի ստեղծագործությունները
հասցեագրված «նամակներ» են, որոնք նա հղել է ոչ թե աշխարհի բոլոր
մարդկանց, այլ իր ազգականներին, կամ մեկ ամփոփ բառով՝ հային³:
Այս որակումը, սակայն, չի նեղացնում գրողի ասելիքի դաշտը: Ավելին՝

³ Տե՛ս http://ysu.am/files/13G_Hovivyan.pdf.

գիտական-տեսական բանաձևման շրջանակից դուրս գալով՝ ձևավորում է բոլորովին նոր համատեքստ, դառնում է ցեղասպանության քաղաքական մեկնաբանության ուրույն դոկտրին՝ ինչ-որ տեղ ընդունելի, ինչ-որ տեղ՝ վիճելի: Դաշտենցի մոտ ցեղասպանությանն առնչվող ստույգ դրվագները գեղարվեստանում են տոհմական կենսագրության կտրվածքով, ընդ որում գրողը նաև ներկայացված ժամանակի վերաբերյալ ենթատեքստային հարցականներ է առաջադրում: Անկախ նրանից, թե ով է ենթադրյալ հասցեատերը, կարելի է եզրակացնել, որ Դաշտենցի գրականության էքզիստենցիալ հիմնակետը խորհրդային գաղափարաբանությունն է եղել, կամ էլ, գոնե, նկատելիորեն այդ ազդեցության տակ եղել է:

Անկասկած, տվյալ գաղափարաբանության մի կրողն էլ Մուշեղ Գալշոյանն է: Նրա՝ ցեղասպանական թեմայով երկերը նույնպես միագիծ են, թեպետ գրողը դրանց անդրադառնում է առանձին պատմությունների ձևով: Հուշը դառնում է կենդանի պատկեր, երբ այն պահպանում է իր նախնական ցավը: Իսկ ցավի նախնականությունն առկա է Գալշոյանի ամենահայտնի երկերում՝ «Ձորի Միրոն», «Բովտուն», «Մարութա սարի ամպերը» պատմվածքաշար և այլն:

Եղեռնացավ գրականության նորաէջ ընթացքը տեղի է ունենում արցախյան գոյապայքարի խրամատներում: Հաղորդի ու Վանի կորուստը աշխարհաքաղաքական առումով զուցե թե նույնական չէ, սակայն ազգային ափսոսանքի տեսանկյունից անհնար է տարատեսակել: Ո՞րն է լինելու քսանմեկերորդ դարի էքզիստենցիալ ըմբռնումը. պատասխանը թողնենք նորօրյա գրողներին:

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ЭКЗИСТЕНЦИАЛЬНОГО ВОСПРИЯТИЯ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ПРОЗЕ СОВЕТСКО-АРМЯНСКИХ ПИСАТЕЛЕЙ

КИМ ГАБРИЕЛЯН

Большевизм противопоставил трагедию геноцида тщеславную идеологию пролеткульта, таким образом превратив разделенную родину в так называемую гавань счастья. А когда человеку заставляют быть счастливым, то он производит впечатление ложно уверенного в себе человека. Самосозданная уверенность советско-армянских писателей

привела к <<литературе восстания>>: наряду с тяжелыми образами резни создавались замечательные эпизоды отчаянной борьбы.

В этом смысле экзистенциальное восприятие мести в советско-армянской прозе было закономерным, особенно после окончания сталинской эпохи.

Ключевые слова: экзистенция, Геноцид, диаспора, ностальгия литературы, советско-армянская литература, Страна Наири, Пылающие сады, не преклонились камыши не наклонялись, Ходидан, Бовтун, Арцах.

SUMMARY

FEATURES OF THE EXISTENTIAL MOTIVE OF THE ARMENIAN GENOCIDE IN SOVIET ARMENIAN NARRATIVE

KIM GABRIELYAN

Bolshevism contrasted the tragedy of homeland deprivation with the ideology of the proletkult, turning the divided homeland into a so-called haven of happiness: And when you are forced to be happy you gain false confidence.

This false confidence among the post-Genocide Soviet Armenian writers led to a rebellious literature, with remarkable episodes of hopeless struggle alongside heavy images of the Genocide.

Thus it was natural to see vengeance as an existential motive in Soviet Armenian literature, especially after the post-Stalin period.

Key words: existence, Genocide, diaspora, literature of nostalgia, Soviet-Armenian literature, Land of Nairi, Burning Orchards, The Reeds Did Not Bow, Khodedan, Bovtun, Artsakh.

ՏԱԹԵՎ ՍՈՂՈՍՈՒՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԿՈՐՈՒՄՅԱԼ ՏԱՆ ԹԵՄԱՆ

ՍՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Միյուռքահայ գրականության ինքնատիպ երևույթներից է Մուշեղ Իշխանը, ով առանձնանում է իր հայապահպան գաղափարներով: Նրա պոեզիայի հիմնական կիզակետը կորուսյալ հայրենիքն է, այն վերագտնելու փափագը և չգտնումի տառապանքը: Գեղագիտական այս հարցադրումներն ամփոփված են Տան խորհրդի մեջ, որը և՛ կորցրածն է, և՛ հոգևորը, և՛ նա, որին անընդհատ ձգտում է բանաստեղծը:

Հոդվածում քննվում է հենց այս խնդիրը՝ տարբեր ընկալումներով:

Բանալի բառեր՝ Կորուսյալ հայրենիք, տան սեր, խորհրդանիշ, վերադարձի երազանք, բացարձակ արժեք, հոգևոր արժեք, հոգևոր տարածք, ժխտական միտում, տողատակ, ամբողջական հայրենիք, սնուցող երակ:

Արևմտահայ գրականության գաղափարագեղագիտական առողջ երակը շարունակական պահող հեղինակներից է Մուշեղ Իշխանը, ով իր սերնդակիցների մեջ առանձնանում է ինքնատիպությամբ ու հայապահպան ոգեշնչվածությամբ: Անցնելով Վահան Թեքեյանի ստեղծագործության քուրայով՝ նա ստեղծեց մնայուն արժեքներ, որոնց հիմնական կիզակետը կորուսյալ հայրենիքն է, այն վերագտնելու փափագն ու չգտնումի տառապանքը:

Իր սերնդակիցների նման Մուշեղ Իշխանը ևս գրականություն մտավ բավականին բարդ ժամանակաշրջանում, 15-ի նախճիքից հետո: Շատերը չկարողացան բառավորել իրականությունը, ցավը չափազանց ծանր էր, և գրվածքներն ավելի շատ ականատեսի դառն վկայություններ էին: Նա կարողացավ համադրել իրադարձություններն ու երազանքը, չճկվել ողբերգության տակ և բանաստեղծական աշխարհ ստեղծել. «Միյուռքը այդ տարիներուն, - մի առիթով գրել է Վահե Վահյանը, - չզոցված վերք էր տակավին, չպաղած զայրույթ, չհագեցած ոխ: Որբություն էր ան, ոճիրեն ավելցած մանուկներու շվարած բազմություն, որ դառնալե առաջ վաղվան հայը կկարոտեր պաշտպանության

ու խնամքին: Կորսված անուշություններու կարոտն էր Մփյուռքը, սիրտ արյունոտ վերհուշ: Տևական գրկանքներու և քարացած դառնություններու հետ ամենօրյա շփումեն տարօրինապես դյուրագրգիռ դարձած ջիղերու բորբոքումն էր երբեմն... դասալքություն էր նաև, եվրոպական ոստաններուն մեջ մանավանդ,- ուրացում և ուծացում: Նույն ատեն անդուլ մաքառում էր Մփյուռքը հացի և երդիկի չափ, նաև լույսի համար: Այս ամենը խորապես գիտակցելով և անընդհատ վերապրելով՝ զգայուն բանաստեղծը կերտեց իր ժողովածուները՝ «Տուներու երգը», «Կրակը», «Կյանք և երազ», «Ողջույն քեզ, կյանք», «Տառապանք» և այլն: Խորհրդանշական վերնագրերը հուշում են հեղինակի թեման և ամբողջացնում գլխավոր հերոսը՝ Հայն ու Հայաստանը:

Մփյուռքահայ գրականության մեջ նա մեծ հեղաշրջումների կարիք չունեցավ, քանզի այն ի սկզբանե ներծծված էր հայրենապատկության և արդեն իսկ սնունդ էր ստանում «ցեղային զգացողության ավազանեն»:

1936 թվականին Բեյրութում լույս տեսավ նրա առաջին ժողովածուն՝ «Տուներու երգը», որը բանաստեղծի այցեքարտը կարելի է համարել: Գրքում մի ամբողջ սերնդի հայրենական ըմբռնումն է երևան հանված, հեղինակը խոսում է պարզ ու ճշմարիտ, առանց ինքնախաբեության նշույլի, փորձում է կորուսյալ բնաշխարհից փրկել դաժան իրողությունների գիտակից և ենթագիտակից զգայությունները, որոնք տառապանքի լիարյուն նախադուռ են: Նկատելի է, որ Մ. Իշխանը գիրքը հրատարակում է ոչ այնքան անմիջական տպավորությունների ճանապարհով, որքան նյութի մարսված, կազմակերպված մշակումով: Խոսելով ժողովածուի մասին՝ Ս. Դանիելյանը գրում է. «Մեր բանաստեղծության մեջ «տունը» ընկալվել է հայրենի եզերք առարկայական վերադարձի իմաստով: Մուշեղ Իշխանը տեղաշարժում է ավանդական ընկալումների հունը՝ տան խորհրդի մեջ ներառելով մշակութային նշանակութեան արժեքներ՝ լեզու, պատմություն, կարօտի սևեռում, հաւատ: «Տունն» անընդհատ կրում էս քո մեջ, տանում հեռուները»¹:

Ժողովածուն բացվում է «Համերգ» բանաստեղծությամբ, որը կրկեսային հոգեբանությամբ համերգ է հիշեցնում. սյուժետային ատաղձը օտար աշխարհի մեծ քաղաքներն ընկած գաղթական հայն է, երկնաքերերի ճնշման տակ նրա մոլորված ընթացքը: Տունը դառնում է

¹Դանիելյան Ս., Մփյուռքահայ գրականության նուաճումները և զարգացման միտումները, Երևան, «Գասպրինտ» հրատ., 2015 (այսուհետև՝ Դանիելյան Ս.), էջ 314:

հենց մարդու խորհրդանիշը՝ տարաբնույթ, ողբերգական ու տառապալից ճակատագրով.

*Տուներ կան խեղճ, բազմատանջ, ուսը կքած, դուռը փակ.
Տուներ կան գորշ, հիւանդկախ, որոնց դէմ մարդ կուզէ լայ,
Եւ կան տուներ ալևոր, տարիներու բեռան տակ,
Որոնք մահական կը նային անդէն հանդարտ, անայլայլ²:*

Խիստ հագեցած քառատողը եղեռնից մագապուրծ հայության դիմագծի ամբողջացումն է, այդ իսկ պատճառով բանաստեղծի համար «քարացած վեպ է անբառ ամեն տուն», հավերժ կանգուն տուն, որի շնորհիվ միայն կարելի է հարատևել:

Տան գաղափարը Մուշեղ Բշխանի համար ստեղծագործական գլխավոր երակ է, հայության արմատը տան շարունակականության մեջ է, տունը դառնում է միասնության խորհուրդ, աշխարհով մեկ ցրված տների խորհրդանիշ: Վերադարձի, վերագտնումի երազանք կա Երկրից եկած, Երկիր կորցրած հայ մամիկի աղոթքում.

*Այ կը բավէ, Տեր Աստուած, մեր տունն ու տեղ դարձուր մեզ,
Թշնամիս իսկ մեզ նման ուրիշի դուռ չգտես...
...Ոչ հանգիստ կայ, ոչ ալ քուն ցուրտ յարկին տակ օտարին,
Այս, եօթն օրէն աւելի հիւր չպահես ոչ ոքին...³:*

Ավելորդ չեմ համարում նշել, որ Մուշեղ Բշխանը գաղթից հետո կորցրել էր մորը և նրան հանդիպեց երեք տասնամյակ հետո միայն: Բշխանն ամբողջ կյանքն ապրեց Հայաստանից հեռու: Օտարի տունը հեռացնում է մեզ մեր մեծ երազից, հին աղոթքներից, տոհմիկ սովորույթներից, վերադարձի հույսից, ծննդավայրը դառնում է Երկիր Նաիրի, որը կա և չկա, և որի մասին արդեն դառնաթախիծ տողեր են գրել Վահան Տերյանը, Վահան Թեքեյանը, Եղիշե Չարենցը: Անտուն զավակների տան փնտրտուքը դառնում է աղոթք՝ «մեզ արժանի ըրա, Տեր, մեր խրճիթին աննշան»:

Տան տեսիլի շուրջ են հյուսված «Պապենական տունեն գատ», «Սիրոյ տունը», «Անձանոթ հայրենի տուն», «Նոր շինվող տունը» բանաստեղծությունները: Այդ տեսիլները բազմազան են, երբեմն հիասթափությանը փոխարինում է հույսը, ի հայտ են գալիս հակասական զգացումներ՝ ափսոսանքի, նաև՝ երազի ու հպարտության, որը ծնվում է հեռավոր հայրենի հողի վրա բարձրացող տեսիլներից:

²Մուշեղ Բշխան, *Տուներու երգը*, Պէրյուք, 1936 (այսուհետև՝ Մուշեղ Բշխան), էջ 7:

³Մուշեղ Բշխան, էջ 16:

Եվ կարտասպի հոս իմ հեզին դառնորեն՝

Այսպես օտար, այսպես անմասն ու հեռուն՝:

«Հակադիր այս պատկերները որքան էլ տխուր շեշտերով հնչեն,- գրում է Վազգեն Գաբրիելյանը,- այնուամենայնիվ, հեռավոր տան տեսիլը մարմնավորում են որպես երազ ու հավատ: Օտար դռներին, թախիծի սև ժամերին, հոգնած ու հուսահատ թափառող բանաստեղծի համար վաղեմի կորուսյալ փառապանծ հեռավոր հայրենի տունը բերում է նրա սրտի համար խինդ ու լույս, խրոխտանք, կյանք ու հավատ, որպես հուշարձան անթաղ ու կորսված մեռելների, պիտի նորեն կյանքով, երգով ու ծիծաղով լցվի այդ տունը, և այդ տան առջևով անցնող մարդիկ պիտի իրար ասեն ժպտալիք.

- Այս է տունը մեր բանաստեղծին, որ երգեց

Տուներու երգն ու երկար տառապեցավ տարագիր...»⁵:

Տան հանդեպ ակնածանքն իր բարձրակետին է հասնում «Տան սերը» քերթվածքում, որտեղ հեղինակը բարձրաձայնում է իր՝ տառապանքի ու փորձությունների միջով հայտնաբերած ճշմարտությունը. միայն հայրենի տունն է մարդուն վերադարձնում իր գոյության իմաստը, տունը բացարձակ արժեք է, որին ածանցվում են մնացած բոլոր սերերը:

Եւ հիմա ես գիտեմ, որ փուճ է ամեն սեր

Գեղծիքով տառաքող սրտերուն մեջ մարդկանց,

Միայն դուն կեանքիս դէմ կը մնաս գերիվեր,

Ով տան սէր, մեծ հրայրք՝ ճշմարիտ եւ անանց՝:

Տունը ծննդավայրն է, հայրենիքը, պետությունը, տարագիր Մուշեղ Իշխանը ևս աշխարհի բոլոր հայերի նման տառապում է տան բացակայությունից: «Վահան Թեքեանի նման,-գրում է Ս. Դանիելյանը,-նա ևս լցուած է մշակութային պատկերաստեղծումով, քանի որ Հայաստանի գերիշխանութիւնը ճակատագրապաշտ էութիւն է, թէկուզ առանձնութեան պահերին այն կարող է լինել ծուխ, ցնորք, որից, սակայն, ազատում չկայ, և ինքդ քեզ հետ ես:

Հայրենիքը հրայրք է, սակայն կիրք, հրապոյր չէ. նրան կարելի է մօտենալ ճիշդ իդեալի երկիւղածությամբ, առաջին ու վերջին սիրոյ պէս»⁷: Հայրենի տնից հեռու, տան կարոտով մխացող բանաստեղծը երազանքի ու իրականության բախման կիզակետում գտնում է իր

⁴Նույն տեղում, էջ 23:

⁵Գաբրիելյան Վ., Մփոփախ աղբյուրներ, 1994, էջ 157:

⁶Մուշեղ Իշխան, էջ 61:

⁷Դանիելյան Ս., էջ 317:

յութօրինակ խորհրդանիշ տունը, որը հայոց լեզուն է, և հավատավորի երկյուղածությամբ նա սիրով մտնում է այդ տունը: Լեզուն դառնում է կորուսյալ եզերք, սուրբ տաճար ու երբեմնի տունդարձի ճանապարհի ուղենիշ: Եվ հայտարարում է բանաստեղծը.

*Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,
Կ'ըստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն
Եւ բորեանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ:*

*Քանի՜ դարեր եւ քանի՜ ճարտարապետ հանճարներ
Աշխատեցան անոր տալ վեհութիւն, գեղ ու պերճանք,
Քանի՜ գեղջուկ բանուորներ տքնեցան տիւ եւ գիշեր,
Որոնք թաղուած են հիմա մոռացութեան մութին տակ:
Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեւէ դարէ դար,
Իր ճրագները՝ միշտ լոյս, իր օճախին հուրը՝ վառ,
Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մատան:
Հո՛ն է միայն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին
Խաժամուժին մէջ օտար կորսնցուցած իր հոգին,
Անցեալն անհուն եւ ներկան, նոյն իսկ մի՞թ'ն ապագան...⁸*

Լեզուն անկորնչելի արժեք է, այն ջերմություն և ուժ է տալիս «աշխարհի չորս ծագերուն» հանգրվանած հային: Լեզուն ինքնության, ինքնաարտահայտման և ինքնահաստատման խորհրդանիշ է: Այն «մենքի» հետ լուծվելուց խուսափելու միակ միջոցն է: Նա ամեն մի հայի, մանավանդ «մնացորդաց» հայերի հոգևոր անձնագիրն է: Լեզուն ամենամերն է, որը դարեր շարունակ հղկել ու մշակել են բանաստեղծներն ու արվեստագետները, երգիչներն ու գեղջուկ բանվորները, ուսուցիչներն ու ճարտարապետները և այն հողմածեժ ու մթին դարերում վեր խոյացրել, որպես միակ անխորտակելի Տուն: Բանատողերի հեղինակը բացարձակացնում է լեզվի դերը՝ այն համարելով սփյուռքում հայորեն ապրելու միակ երաշխիք, միակ ոգեղեն ամրոց, հայ մնալու միակ գրավական: Ու պատահական չէ, որ գրական այս գոհարը Մուշեղ Իշխանը նվիրել է իր մեծ ուսուցչին՝ Վահան Թեքեյանին:

⁸Տե՛ս նույն տեղում, էջ 16:

Մուշեղ Իշխանի ստեղծագործության ակունքն ու սնուցող երակը երազի և իրականության բախումն է, նրա գրականությունը կարելի է համարել հայրենիք չտեսած ու անընդհատ հայրենիք պաշտող տարագիր սերնդի գրականություն: Երկու Հայաստանների՝ կորցրածի ու չտեսածի, պատկերներն անընդհատ իրացման ձև էին փնտրում, երկու նժարներն էլ կենսականորեն անհրաժեշտ էին: 1949 թվականին հրատարակած ժողովածուի վերնագիրը հենց այդպես էլ խորագրվեց՝ «Կյանք և երազ». կյանքը ծավալվում է անցյալի մեջ, երազը անցյալի ցավին դիմադրելու փորձ է: Տարբեր երկինքների տակ փնտրվող Տան ճանապարհը ձգվեց դեպի Խորհրդային Հայաստան, որը դարձավ և գայթակղություն, և փորձություն. գուցե սա է պատճառը, որ հեղինակը ժողովածուի մեջ ընդգրկված «Հայաստան» պոեմի համար բնաբան է ընտրել Հովհաննու ավետարանի հետևյալ տողը. «Երանի որոնց ոչ իցե տեսեալ եւ հաւատասցեն»: Երկրող համաշխարհային պատերազմից հետո մեծ հայրենադարձությունը կարոտի գրականությանը նոր երանգներ հաղորդեց, հարե՞նիքն այլևս իրական տարածք էր՝ կենդանի լեզվով, մշակությամբ, հայրենակիցներով, նույնիսկ պաշտոնական և ոչ պաշտոնական լուրերը հույս էին ներշնչում, թե Արևմտյան Հայաստանը ևս պիտի ներառվի խորհրդային սահմանների մեջ: Հույսի ու խաբկանքի, ոգևորության և հիասթափության բախման կիզակետի ծնունդ է վերոնշյալ պոեմը, կարծես գրված է չարենցյան էպիկական շնչով. ներկայի ու ապագայի հանդեպ նույն կասկածն ու տառապանքը.

*Հայաստան,
Ինչ ես իրօք հիմա դուն,
Շրջուն ոգի, թե խորարմատ գոյութիւն,
Երգի կտոր, հին հեքիաթ,
Իմ աչքերուս դեմ շողացող վառ տեսիլք,
Ծփուն պատկեր, կամ խնկաբոյր մագաղաթ,
Հանդերձյալի, թե այս կյանքին Հայրենիք,
Ինչ ես իրօք հիմա դուն...*

Հարցադրումը խորն է, կասկածն ու ժխտական միտումն ավելի շատ են. Տեր է կանգնելու Խորհրդային Հայաստանը Ոսկեմայր Անահիտից ստացած ժառանգությամբ: Բարդ և հակասական հերոս է ընտրել հեղինակը, բարձր է ընտրած նշաձողը, բայց պատվանդանին Հայրենիքն է, «արյան ահեղ տոնից» հետո

*Կկանչեմ քեզ, Հայաստան,
Բոլոր, բոլոր կարոտներու հրայրքով,*

Իբրև երկինք, իբրև լոյսի անհուն ծով
 Մայրական գիրկ, սպիտակ հարս դյութական,
 Իբրև ժպիտ, լռութիւն
 Եւ ծաղկավետ երանութեան իբրև տուն,
 Իմ հեռավոր Հայաստան,
 Կը լսես զիս, կը հասնի ձայնըս արդեօք քեզ...

Խորհրդային ժամանակաշրջանում պոետը Հայաստանում չտպագրվեց, տողատակերում թանձրացած անվստահությունը չվրիպեց խորհրդահայ մտավորականների ուշադրությունից, բայց Մուշեղ Իշխանի համար հայրենիքն ավելին էր, քան նյութական հասկացությունները, նրա մտածումների ծիրում ամբողջական հայրենիքի պատկերն է, որը, ցավոք, մնաց մտատեսիլ, հոգևոր Հայաստանի և իրական Հայաստանի նժարումներից ծնվեցին նրա հետագա քերթությունները՝ «Տառապանք», «Արևամար», «Իրիկնալույս», որտեղ ամբողջանում է աշխարհի ցավով տառապող մարդու կերպարը:

РЕЗЮМЕ

ТЕМА ПОТЕРЯННОГО ДОМА ПОЭЗИИ МУШЕГА ИШХАНА

ТАТЕВ СОГОМОНЯН

Одним из своеобразных явлений армянской литературы диаспоры является Мушег Ишхан, который выделяется своими проармянскими идеями. В центре внимания его поэзии – потерянная родина, желание вновь обрести ее и не найти. Эти эстетические вопросы обобщены в символе Дома, который и потерянный, и духовный, и то, к чему постоянно стремится поэт.

Ключевые слова: потерянная родина, любовь к дому, символ, мечта о возвращении, абсолютная ценность, духовная ценность, духовное пространство, тенденция отрицания, сноска, целостная родина, питающая жила.

SUMMARY

THE THEME OF THE LOST HOUSE IN MUSHEGH ISHKHAN'S POETRY

TATEV SOGHOMONYAN

Mushegh Ishkhan, who stands out for his pro-Armenian ideas, is one of the unic phenomena of the Armenian diaspora literature. The main focus of his poetry is the lost homeland, the longing to find it again, the suffering of not finding it. These aesthetic questions are summed up in the symbol of the House, which is both the lost and the spiritual, and the one to which the poet constantly strives.

This article discusses this issue from different points of view.

Key words: *Lost homeland, love for home, symbol, dream of a return, absolute value, spiritual value, spiritual space, negative tendency, under the line, complete homeland, supplying vein.*

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԱՀ վաստակավոր իրավաբան

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԸ
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱՐԱՐՔՆԵՐՈՒՄ
(ԵՂԵՈՆԱԶՈՀ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ)

Օսմանյան կայսրության ցեղասպան գործողությունները հայերի նկատմամբ սկսվել էին դեռևս 19-րդ դարի 80-ական թվականներից, բայց այն իր գագաթնակետին հասավ 1915-ի ապրիլ-մայիս ամիսներին: Պայմանականորեն Հայոց ցեղասպանության օր է համարվում 1915-ի ապրիլի 24-ը, երբ Կոստանդնուպոլսում ձերբակալվեց հայազգի մտավորականության ծաղիկը: Հայերի ցեղասպանությունն իրականացվեց մի քանի փուլերով: Նախ, թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափեցին և մաս-մաս ոչնչացրին: Այնուհետև, 1915-ի ապրիլի 24-ից մինչև 28-ն ընկած ժամանակաշրջանում ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների և մեծ մասին ոչնչացրին: Այդքանից հետո անպաշտպան և անօգնական կանանց, ծերունիներին և երեխաներին բռնատեղահանման քողի տակ ենթարկեցին զանգվածային ոչնչացման:

Թուրքական իշխանությունների հրամանների հիման վրա ձերբակալված ավելի քան ութ հարյուր հայ մտավորականներից 31-ը եղել են գրողներ, որոնցից երկուսը՝ կին՝ Ռեբեկա Մանտրճյան և Մարի Պեյլերյան, որոնք նույնպես քշվել են Անատոլիայի խորքերը և անլուր տանջանքներից հետո գազանաբար ոչնչացվել:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, հայկական հարց, Սան Ատեփանոյի պայմանագիր, Բեռլինի վեհաժողով. Ադանայի կոտորած, երիտթուրքեր, Առաջին համաշխարհային պատերազմ, կոտորած, եղեռն, եղեռնագոհի հայ գրողներ, դաշնակից պետություններ, տեղահանություն, ցեղասպանություն:

Նախքան հարցի իրավական կողմին անդրադառնալը, դիմենք նրա նախապատմությանը:

Դիվանագիտության պատմության մեջ հայկական հարցն ասպարեզ իջավ որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս՝ 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո:

Պատերազմի արդյունքում Թուրքիան տարածքային կորուստներ ունեցավ Բալկաններում և Թուրքահայաստանում: 1878 թ. փետրվարի 16-ին կնքված ռուս-թուրքական պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանին անցան Կարսը, Արդահանը, Բայազետը, Բաթումը: Պայմանագրում առաջին անգամ օգտագործվեց «Արևմտյան Հայաստան» եզրույթը, որի 16-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան պարտավոր է վարչական բարեփոխումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում ու ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից: Ռուսական զորքը 2 տարի պետք է մնար գրավյալ տարածքներում:

Պայմանագրով Անգլիան իր շահերը վտանգված էր տեսնում Ասիայում և Հնդկաստան տանող ճանապարհին, ուստի նույն թվականի հունիս ամսին հրավիրվեց Բեռլինի համաժողովը, որին, բացի Թուրքիայից և Ռուսաստանից, մասնակցում էին նաև Անգլիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան, Ֆրանսիան և Գերմանիան: Նոր պայմանագրով «Արևմտյան Հայաստան» եզրույթի փոխարեն օգտագործվեց «հայաբնակ վայրեր» եզրույթը: Ռուսաստանը զորքը դուրս էր բերում և որոշ տարածքներ վերադարձնում:

1908 թվականին երիտթուրքերը կեղծ լոզունգներով հեղաշրջում իրականացրին՝ էապես թուլացնելով սուլթան Համիդի իշխանությունը: Դաշնակցությունը կանգնեց երիտթուրքերի կողքին: Օսմանյան կայսրությունը հռչակվեց որպես սահմանադրական միապետություն:

1914 թ. հունվարի 26-ին կնքված ռուս-թուրքական պայմանագրի համաձայն՝ Թուրքիայի հայաբնակ վայրերը բաժանվում են 2 հատվածի, որոնց գլուխ կարգվում են եվրոպական 2 տեսուչներ, որոնք էլ պետք է հսկեին բարեփոխումների ընթացքը:

Հայկական հարցը Ռուսաստանի և եվրոպական մի շարք երկրների համար հարմար միջոց էր Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, Թուրքիայից զիջումներ և շահույթներ ստանալու համար: Վերջինս քաջ հասկանում էր դա և հայկական հարցից ձեռքազատվելու համար որդեգրեց «Երբ չեն լինի հայերը, չի լինի նաև Հայկական հարցը» կարգախոսը: Սուլթան Համիդի օրոք այդ քաղաքականությամբ զոհ գնաց ավելի քան 300.000 հայ:

Երիտթուրքերը քաջ գիտեին, որ իր պատմական հայրենիքում ապրող հայ ժողովուրդը սեպի պես խրված էր իրենց ծրագրերի մեջ՝ աչքի ընկնելով ռուսասիրությամբ և բացահայտ ռուսական կողմնորոշմամբ: Այդ մտավախությամբ, ինչպես նաև ցարական Ռուսաստանի և Եվրոպայի կողմից մշտապես բարձրացվող Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս

կազմող Հայկական հարցից հավերժ ձերբազատվելու համար, պետական մակարդակով որոշվեց բնաջնջել հայերին:

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության համար առիթ հանդիսացան ինչպես Բալկանյան թերակղզում, այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Կովկասյան ռազմաճակատում կրած խոշոր ռազմական պարտությունները, որոնց պատճառներից մեկն էլ թուրքերը համարում էին հայերի համագործակցությունը ռուսների հետ: Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վայրերում հայերի բնաջնջման հարցը քննարկվեց երիտթուրքական կառավարության պարագլուխների և մյուս գործիչների՝ 1915-ի փետրվարին կայացած գաղտնի խորհրդակցությունում, որտեղ ընդունվեց համապատասխան որոշում և կառավարությանը հանձնարարվեց իրականացնել այն բոլոր հնարավոր միջոցներով: Կազմվեց գործադիր կոմիտե և նշանակվեցին լիազորներ վիլայեթներում: Ստեղծվեց հայերի բնաջնջման կազմակերպություն՝ լայն ճյուղավորմամբ: Գործի դրվեց ամբողջ պետական մեքենան:

Թեկուզ Օսմանյան կայսրության ցեղասպան գործողությունները հայերի նկատմամբ սկսվել էին դեռևս XIX դարի 80-ական թվականներից, բայց այն իր գագաթնակետին հասավ 1915-ի ապրիլ-մայիս ամիսներին: Պայմանականորեն Հայոց ցեղասպանության օր է համարվում 1915-ի ապրիլի 24-ը, երբ Կոստանդնուպոլսում ձերբակալվեց հայազգի մտավորականության ծաղիկը: Հայերի ցեղասպանությունն իրականացվեց մի քանի փուլերով: Նախ, թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափեցին և մաս-մաս ոչնչացրին: Այնուհետև, 1915-ի ապրիլի 24-ից մինչև 28-ն ընկած ժամանակաշրջանում ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների և մեծ մասին ոչնչացրին՝ չինայելով անգամ Օսմանյան պառլամենտի հայ անդամներին: Այդքանից հետո անպաշտպան և անօգնական կանանց, ծերունիներին և երեխաներին բռնատեղահանման քողի տակ ենթարկեցին զանգվածային ոչնչացման: Բռնի տեղահանության ընթացքում հարյուր հազարավոր մարդիկ սպանվեցին թուրք զինվորների, ոստիկանների, հատուկ մահվան ջոկատների՝ քրդական և չերքեզական ավազակախմբերի կողմից:

Աշոտ Գաբրիելյանի և Արքմենիկ Նիկողոսյանի հեղինակությամբ 2015թ. հրատարակված «Եղեռնագոհ գրողներ» հանրագիտակ-անթոլոգիայի համաձայն՝ 1915թ. ապրիլի 24- 29-ը Կոստանդնուպոլսում թուրքական իշխանությունների հրամանների հիման վրա ձերբակալված ավելի քան ութ հարյուր հայ մտավորականներից 31-ը եղել են գրողներ, որոնցից երկուսը՝ կին՝ Ռեբեկա Սանտրճյան և Մարի Պեյլերյան, որոնք

նույնպես քշվել են Անատոլիայի խորքերը և անլուր տանջանքներից հետո գազանաբար ոչնչացվել: Հայ մտավորականների ոչնչացումը հայ ժողովրդին իր բնօրրանում բնաջնջելու համակարգված, դիվային ծրագրի մի մասն էր:

Ձոնվածների մեջ եղել են տաղանդավոր գրող-հրապարակախոս Ռուբեն Ջարդարյանը, գիտնական դոկտոր Նազարեթ Տաղավարյանը, կուսակցական գործիչներ Է. Ակնունին, Գ. Խաժակը, Հ. Ճանկուլյանը, մեծ քնարերգու Սիամանթոն, վիպասան և հրապարակախոս Սմբատ Բյուրատը, տաղանդավոր գրող Գրիգոր Ջոհրապը, դերասան Ենովք Շահենը, տաղանդավոր բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, գրող Երուխանը և շատ ուրիշներ:

Մինչ ձերբակալությունները հայ մտավորականներն այնքան էին խաբված Թալեաթի և նրա ընկերների շողոմ, փաղաքշական և մեղրածոր խոսքերով, որ երբ Բերայի ոստիկանները Խաչատուր Մալումյանին (Ակնունի) հրավիրեցին ոստիկանատուն, նա ապշած էր: Նրա այն հարցին թե Թալեաթը գիտի՞ այդ մասին, ոստիկանապետը ցույց տվեց ձերբակալման օրդերը՝ Թալեաթի ստորագրությամբ: Նա զարմացած պատասխանեց, որ քիչ առաջ Թալեաթի մոտ ճաշի էր, հապա ինչո՞ւ իրեն ոչինչ չի ասել: Տարաբախտ Ակնունի, ով ռեակցիայի օրերին Թալեաթին թաքցրել էր իր տանը: Բսկ երբ համոզվեց, որ դեպի սպանդ են տանում, դառնությամբ ասել է, որ չի ցավում մահվան վրա, քանզի այն մի օր պիտի գա, այլ ցավում է միայն նրա համար, որ թուրք սրիկաներից խաբվեցին:

Ջոհրապն Օսմանյան խորհրդարանի երեսփոխան էր, խոշոր հոետոր, ուժեղ գրչի տեր և հազվագյուտ իրավաբան: Ջոհրապը բազմաթիվ ջանքեր գործադրեց՝ հայ մտավորականների ձերբակալությունները կանխելու համար, սակայն նրա ջանքերն ապարդյուն անցան: Նա դիմեց պետական բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնցից շատերի հետ մտերիմ հարաբերությունների մեջ էր, այդ թվում՝ Թալեաթին (ինչպես նաև խորհրդարանի նախագահ Մայիդ Հալիմ փաշային, նրանք բոլորն էլ տալիս էին միայն դրական ու հուսադրող պատասխաններ): Մականյ, 1915 թվականի հունիսի 2-ին հերթը հասավ նաև Ջոհրապին: Այդ ժամանակ նա ակումբում խաղաթուղթ էր խաղում Թալեաթ փաշայի ու Հալիլ բեյի հետ: Դա տևեց մինչև կեսգիշեր, ապա Ջոհրապը ոտքի կանգնեց՝ տուն գնալու համար: Թալեաթ փաշան նույնպես ոտքի կանգնեց և համբուրեց նրան: Ավելի ուշ պարզվեց, որ դա մահվան համբույր էր, քանի որ դրանից առաջ Թալեաթը ստորագրել էր Ջոհրապի և մեկ այլ հայ պատգամավոր Վարդգես Սերենցյուլյանի ձերբակալման հրամանը: Հենց այդ գիշեր էլ Ջոհրապը ձերբակալվեց իր տանը և բռնեց աքսորի երկար ճանապարհը:

1915 թվականի հուլիսի 19-ի առավոտյան Զոհրապի ու Վարդգեսի վարձած հյուրանոցի առջև ձիակառքերով հայտնվեցին երկու ժանդարմներ: Նրանք բռնեցին դեպի Դիարբեքի տանող ճանապարհը: Սակայն նրանց վրա հարձակվում են զինված անձինք և սպանում նրանց:

Հաջորդ օրն Ուրֆայի շուկայում վաճառվեցին Զոհրապի ոսկե ժամացույցն ու մատանին: Թեև Զոհրապը գազանաբար սպանվել էր, բժիշկ Թահսինն իր զեկույցում գրեց, որ նրա մահվան պատճառը սրտի կաթվածն է: Զոհրապի հեղինակությամբ հրատարակված ստեղծագործությունները կազմել են 22 հատոր, որոնք թարգմանվել են 26 լեզուներով:

Զոհրապը հմուտ իրավաբան էր: Ժամանակակիցները վկայում են, որ նա իր ամբողջ փաստաբանական գործունեության ընթացքում ոչ մի դատ տանուլ չի տվել: Սուլթանական դատարանում միշտ պաշտպանում էր հանիրավի ամբաստանված հայերի, հույների, բուլղարների և այն այլազգի անմեղների դատը, որոնք սովորաբար հետապնդվում էին օսմանյան բռնատիրության դեմ ըմբոստանալու համար՝ հանուն իրենց ազգային ու մարդկային իրավունքների:

1915 ապրիլի 24-ին Վարուժանը գտնվել է այն մտավորականների ու հասարակական գործիչների շարքում, որոնք ձերբակալվել են թուրքական ոստիկանության կողմից: Նա շատերի հետ աքսորվել է Չանղըրը, որտեղ մնացել է կալանավոր: 26 օգոստոսի 1915 թ., որպես թե տեղափոխվելով Չանղըրից Այաշ, ճանապարհին նա դաժանորեն սպանվում է կազմակերպված դավադրությամբ՝ բանաստեղծ Ռուբեն Սևակի և երեք այլ աքսորականների հետ:

Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին իրավացիորեն գրել է, որ «Հեթանոս երգեր»-ի հեղինակ Վարուժանը պատկանում է նույնքան Արևմուտքին, որքան Հայաստանին:

Սևակը, որպես բժիշկ լինելով զինվորական ծառայության մեջ, 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալվել և բանտարկվել է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա աքսորվել Չանղըր:

Չանղըրում բուժել է թուրք ավագակապետ (չեթեջի) Արաբաջի Իսմայի աղջկան: Իսմայիլը նրան հորդորել էր իր աղջկա հետ ամուսնանալ ու իսլամություն ընդունելով փրկվել սպառնացող վտանգից, սակայն բժիշկը հրաժարվել է այդ խորհրդին հետևելուց: Չանղըրի չերքեզ փոխկառավարիչը, որ նրա բարեկամն էր, անգոր պատասխանել է, «Ես չեմ կրնար Պոլսն եկած հրաման մը չգործադրել»:

Վարուժանը և Սևակը գոհվել են ծաղկուն հասակում: Առաջինը եղել է 31, երկրորդը՝ 30 տարեկան:

Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Սևակի ճակատագրին է արժանացել նաև տաղանդավոր բանաստեղծ Սիամանթոն, ով, գտնվելով Եվրոպայում և լսելով ջարդերի մասին, հայտնել է, որ «Պիտի երթամ, իմիններս հոն են»:

Զերբակաված մտավորականներից սակավաթիվ մարդիկ են փրկվել: Դրանցից մեկն էլ հանրահայտ երգիծաբան Երվանդ Օտյանն էր:

Իրենց պատմական հայրենիքում բնակվող հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի կիրառած ցեղասպանության քաղաքականությունն առաջին անգամ միջազգային մակարդակով դատապարտեցին Անտանտի պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը՝ 1915-ի մայիսի 24-ի համատեղ հռչակագրով: Հռչակագիրն ազդարարում է, որ «Աբդոլ փերջին ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում կոտորածներ քրդերի և թուրքերի կողմից, Օսմանյան իշխանությունների բացահայտ թույլտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայկական կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Բիթլիսում, Մուշում, Մասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակա հարյուրավոր գյուղերի բնակիչները մորթվել են մինչև փերջին մարդը: Բուն Վանում հայկական թաղամասը պաշարման մեջ են առել քրդերը: Միննույն ժամանակ, Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը ձերբակալում և աներևակայելի ճնշումների է ենթարկում հայ ազգաբնակչությանը: Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կատարած այս նոր հանցագործությունները նկատի ունենալով՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները այսու հրապարակավ հայտարարում են Բարձրագույն դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածի:

Այս փաստաթղթից նկատելի է, որ դաշնակից երկրներն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վայրերում հայ բնակչության զանգվածային կոտորածները ոչ թե սովորական հանցագործություններ են համարել, այլ՝ ըստ էության, «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված նոր հանցագործություններ»: Միննույն ժամանակ, այդ նոր հանցագործությունների վկայակոչումը ցույց է տալիս, որ դրանց օբյեկտն ամբողջ աշխարհի մարդկությունն է, որի մի մասը պատմական հայրենիքում բնաջնջվող հայ ժողովուրդն էր: Հռչակագրում նշված միայն այն հանգամանքը, որ «Վանի շրջակա

հարյուրավոր գյուղերի բնակիչները մոռթվել են մինչև վերջին մարդը», հուշում է մեզ, որ երիտթուրքերի կառավարության նպատակը հայ ժողովրդի իսպառ բնաջնջումն է եղել (հանցագործության օբյեկտիվ կողմը):

Հռչակագիրն աներկբա հուշում է, որ հայկական կոտորածների անմիջական պատասխանատուները՝ թուրքական կառավարության բոլոր անդամները և տեղական իշխանությունները (հանցագործության սուբյեկտները), որոնք գործել են «բացահայտ թույլտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ» /(սուբյեկտիվ առումով՝ ուղղակի դիտավորությամբ), պետք է պատասխանատվություն կրեն իրենց հանցավոր արարքների համար:

Հռչակագրի իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ դաշնակից պետությունները հայկական կոտորածները որակել են ոչ միայն որպես մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված նոր հանցագործություն, այլև բացահայտել են մարդկության դեմ ուղղված այդ նոր հանցագործության հանցակազմը և նրա տարրերը: Հռչակագիրը, փաստորեն, առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ ազդարարեց աշխարհին՝ Օսմանյան կայսրության կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ (տվյալ դեպքում՝ հայերի) նոր հանցագործության կատարման և դրա կատարման մեջ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու նպատակով միջազգային աստիճանի ստեղծելու մասին:

1948 թվականից ցեղասպանությունը ՄԱԿ-ի կողմից ճանաչվել է որպես մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություն և պատժելի արարք, որի հանցակազմի իրավական սահմանումը տրվեց Կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

Ցեղասպանությունը ոչ թե սովորական մարդասպանություն է, այլ՝ հանցագործությունների հանցագործություն, և այն պայմանավորված է ոչ թե սպանված մարդկանց քանակով, այլ բացառապես տվյալ խմբին, ազգին, ցեղին, համայնքին ոչնչացնելու ցանկությամբ և վճռականությամբ:

Ամեն դեպքում հարց է ծագում՝ ավելի քան մեկ դար առաջ Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի արևմտյան հատվածի դեմ կատարված սպանող, վայրագությունները կարելի՞ է համարել որպես մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն, որպիսիք նշված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

«Գենոցիդ» եզրույթը կազմված է հունական «genos» (ցեղ, ազգ կամ տոհմ) և լատիներեն «cide» (սպանել) բառերից, ինչը բառացիորեն նշանակում է «ցեղի, ազգի կամ տոհմի սպանություն»:

Հայոց ցեղասպանության անպատժելիությունը ծնեց նոր ցեղասպանություններ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Հիտլերը, փորձելով արդարացնել իր հանցավոր գործողությունները հրեաների և սլավոնական բնակչության նկատմամբ, լկտիությամբ հայտարարել է, որ ներկայումս հայերի կոտորածների մասին որևէ մեկը չի հիշում: Միգուցե նման մտքերով էին ներշնչված ազերի թուրքերը, երբ Խորհրդային Միության նախօրյակին Սումգայիթում, Կիլովաբադում, Բաքվում և Ադրբեջանի հայաշատ ու հայաբնակ այլ վայրերում շարունակեցին իրենց ցեղասպան գործողությունները, որոնց անպատժելիությունից ոգևորված՝ 1992-ի ապրիլի 10-ին գազանային մեթոդներով իրականացրին Մարաղայի արյունալի սպանողը, որին զոհ գնացին գյուղի շուրջ 100 կանայք, երեխաներ և ծերեր:

Թուրքական պատմագիտության այն կեղծ տեսակետը, թե իբր 1915-ին «ցեղասպանություն» հասկացությունը գոյություն չունենալու պատճառով Կոնվենցիան հետադարձ ուժ ունենալ չի կարող, գուրկ է առողջ տրամաբանությունից: Նախ, ինչպես նշեցինք, ցեղասպանությունը նոր հանցագործություն չէ, այն Լեմկինը չի ստեղծել, պարզապես Լեմկինն իրերն իրենց անունով է կոչել և ընտրել ամենաճիշտ եզրույթն արդեն իսկ գոյություն ունեցող անանուն հանցագործությանն անուն տալու համար՝ առաջին հերթին նկատի ունենալով հայերի հանդեպ կատարված ցեղասպանությունը: Այդ առումով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն իր հատուկ հետազոտության մեջ նշել է, որ «ցեղասպանություն» բառն առաջացել է վերջերս որպես նեյտրալ (նորաբանություն), որը բնորոշում է հին հանցագործությունները: Ուստի Կոնվենցիան հետադարձ ուժ ունի և լիովին կիրառելի է Հայոց ցեղասպանության համար: Դրա հիմնարար օրինակ կարող է ծառայել հրեական կոտորածների («Հոլոքոստ») դատապարտումը Միջազգային Ռազմական դատարանի կողմից (Նյուրնբերգյան դատավարություն): Վերջինիս կանոնադրությունում ամրագրված է, որ պատմի ենթակա են մարդկության դեմ ուղղված այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են «պատերազմից առաջ կամ դրա ընթացքում քաղաքացիական բնակչության հանդեպ կատարված սպանությունները, ոչնչացումը, ստրկացումը, աքսորումը և այլ դաժանությունները կամ հետապնդումները քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով»: Եվ պատահական չէ, որ Նյուրնբերգյան դատավարությունում Մեծ Բրիտանիայի կողմից գլխավոր մեղադրող Շուկրոսը հայերի դեմ կիրառված ոճրագործությունները բնութագրել է որպես «մարդկության դեմ կա-

տարված հանցագործությունների համար պատասխանատվության իրավունքի Նյուրնբերգյան նորմերի հիմքերից մեկը»:

Միջազգային իրավունքը ցեղասպանություն հանցագործության համար վաղեմության ժամկետ չի նախատեսում: Այդ է վկայում 1968-ի փետրվարի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիան, որը մասնակից պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել ամեն մի օրենսդրական կամ այլ միջոցներ, որպեսզի ազգային օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը և այլ սահմանափակումները չկիրառվեն փաստաթղթերում թվարկված հանցագործությունների համար հետապնդման և պատժի դեպքերում: Կոնվենցիան մարդկության դեմ ուղղված հանցագործությունների թվին է դասում ցեղասպանությունը: Հաշվի առնելով, որ այս կոնվենցիան վկայակոչում է 1948-ի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, նշանակում է, որ 1966-ի կոնվենցիան 1948-ի լրացումն է, որն էլ ցեղասպանության հանցագործություններով օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքի հարցում վերջակետ է դնում: Թուրքական պետությունն առաջիններից մեկն է, որ վավերացրել է 1948-ի Կոնվենցիան:

Պատմական արդարության համար մղվող պայքարը պարտություն կրել չի կարող: Ազգերն իրենց համար կենսական նշանակություն ունեցող իրավունքները նվաճում են պայքարի միջոցով:

РЕЗЮМЕ

СОСТАВ ГЕНОЦИДНОГО ПРЕСТУПЛЕНИЯ В ДЕЯНИЯХ МЛАДОТУРОК

ВЛАДИМИР ОВСЕПЯН

Геноцидные действия Османской империи в отношении армян начались еще в восьми-десятих годах 19-го века, однако они достигли своей вершины в апрель-май месяцах 1915 года. Условно начало армянского геноцида можно считать 24-ое апреля 1915 года, когда в Константинополе был арестован цвет армянской интеллигенции. Геноцид армян осуществлялся в нескольких этапах. Прежде всего призванную в турецкую армию армянских мужчин изолировали и полностью уничтожили. Потом, в период с 24-ое апреля по 24-го мая арестовали свыше 800 представителей армянской интеллигенции. После этого беззащитных и

беспомощных женщин, стариков и детей, под видом перемещения подвергли массовому уничтожению.

Среди арестованных на основании приказов турецких властей более чем 800 представителей армянской интеллигенции были 31 писателей, из которых 2 женщины - Ребека Сантрчян и Мари Пейлерян, которые тоже были изгнаны в глубь Османской империи и зверски убиты.

Ключевые слова: Западная Армения, армянский вопрос, Сан-Стефанский мирный договор, Берлинский конгресс, резни в Адане, младотурки, Первая мировая война, союзные государства, резня, армянские писатели- жертвы геноцида, переселение, геноцид.

SUMMARY

THE CRIME OF GENOCIDE IN THE ACTIONS OF THE YOUNG TURKS (Writers – Victims of Genocide)

VLADIMIR HOVSEPYAN

The genocidal actions of the Ottoman Empire against the Armenians began as early as the 80s of the 19th century, but it reached its peak in April-May 1915. April 24, 1915, when the flower of the Armenian intellectuals was arrested in Constantinople, is conventionally considered the day of the Armenian Genocide. The Armenian Genocide was carried out in several stages. First, the Armenian men conscripted into the Turkish army were disarmed and destroyed. Then, in the period from April 24 to 28, 1915, more than 800 Armenian intellectuals were arrested and most of them were destroyed. After that, defenseless and helpless women, old people and children were subjected to mass extermination under the guise of forced displacement. By the order of Turkish authorities, the arrested 800 intellectuals 31 were writers, from those two were women-Rebecca Santrjyan and Mary Pelleryan, who were displaced to deep Anatolia and after silent suffering were cruelly killed.

Key words: Western Armenia, Armenian question, Treaty of San Stefano, Berlin Assembly, Adana massacre, Young Turks, First World War, massacre, Genocide, Armenian writers-victims of genocide, allied countries, displacement, genocide.

ՄՇԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ

Ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ որբերից ոմանք դարձել են Արցախում կրթության գործի կազմակերպիչներ, արժանացել պետական պարգևների և հասարակական հարգանքի: Նրանք նվիրվել են Արցախում հայապահպանության վեհ գործին, ամենայն պատասխանատվությամբ զբաղվել մանկավարժությամբ և փայլուն կերպով կատարել մատաղ սերնդի դաստիարակության, կրթման կարևոր առաքելությունը, իրենց հայրենասիրական ու քաղաքացիական պարտքը: Մասնակցելով Հայրենական մեծ պատերազմին՝ իրենց սաներին անձամբ տվել են թերևս ամենակարևոր դասը՝ միշտ պատրաստ լինել հայրենիքի պաշտպանության վեհ գործին:

Բանալի բառեր. արմենոցիդ, Արևմտյան Հայաստան, որբեր, մանկատուն, ուսուցիչ, Հայրենական մեծ պատերազմ, հայրենիքի պաշտպանություն, Արցախ:

Արմենոցիդի՝ հրեշավոր քաղաքականությունից մազապուրծ մեր բազում հայրենակիցներ, Հայաստանի արևմտյան շրջաններից ապաստան գտնելով հայրենիքի արևելյան մասում և Անդրկովկասի հայաշատ վայրերում, հետագայում դարձան արժանավոր քաղաքա-

¹Լիբանանցի արաբ իրավագետ, պատմաբան Մուսա Բրենսը 1960-ական թվականներին սկսեց մանրամասն ուսումնասիրել Հայոց ցեղասպանության ծրագրման և գործադրման ամբողջ պատմությունը և ֆրանսերենով պատրաստեց գիտական ծավալուն (ավելի քան 600 տպագիր էջ) ուսումնասիրություն: Իր աշխատության մեջ Բրենսը պարզաբանեց 1915 թ. հայերի զանգվածային կոտորածների ցեղասպանական բնույթը և ցույց տվեց պետությունների անտարբերությունն ու մեղսակցությունը: 1967 թ. Մուսա Բրենսը Փարիզում մասնակցեց ոճիրների կանխարգելմանը նվիրված միջազգային գիտաժողովին, որտեղ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կազմակերպված ոճրագործություններին տվեց նոր անվանում՝ **արմենոցիդ** (հայասպանություն): Ի տարբերություն Լեմկինի, որը, ստեղծելով գենոցիդ (ցեղասպանություն) տերմինը, ցանկանում էր ցույց տալ ողջ մարդկությանը սպառնացող վտանգը, Մուսա Բրենսը կոնկրետացրեց հասկացության շրջանակը և դրան տվեց էթնիկ բնութագրում: Արմենոցիդ տերմինն ունի ոչ միայն լեզվաբանական, այլ նաև քաղաքական կողմ, որը նպատակ ունի մատնացույց անել հայերի՝ որպես էթնոսի ոչնչացումը:

ցիներ և իրենց ավանդն ունեցան Խորհրդային Հայաստանի զարգացման գործում: Նրանք անմասն չմնացին նաև Արցախի հայ ազգաբնակչության հայապահպանության հույժ կարևոր առաքելությունից, լծվելով հանիրավի Մայր Հայաստանից պոկված հայրենի եզերքի մատաղ սերնդի դաստիարակության գործին: Այդ թեման ժամանակին արծարծել ենք վերապրածներից մեկի ժառանգ Վ. Աթանեսյանի մտահղացմամբ²: Սույն հրապարակմամբ վերստին անդրադարձել ենք ցեղասպանությունից մազապուրծ մի խումբ որբերի արցախյան գործունեությանը, որպեսզի ցույց տանք մեր ժողովրդի փյունիկի պես հառնելու և ապրելու աննկուն կամք դրսևորելու ունակությունը: Եղեռնից մազապուրծ որբերի մահվանը և կյանքի փորձություններին հաղթելու կամային որակներն ավելի ցայտուն են երևում նրանց ապաստան տված ու կրթած որբանոցների մասին պատմական տեղեկությունների համապատկերի վրա, ուստի այն վերարտադրելու նպատակով կատարել ենք նաև համապատասխան պատմական էքսկուրս: Այդ թեմային անդրադարձել են Հայաստանի ու Սփյուռքի ուսումնասիրողները³: Հայ որբերին ապաստան տված որբանոցներին և արտասահմանյան երկրների բարեգործական ձեռնարկումներին անդրադարձած

² **Հարությունյան Մ., Աթանեսյան Վ.**, անձնական օրինակով իրենց սաներին տվեցին թերևս ամենակարևոր դասը «Կաճառ» (ԳԳԿ-ի տարեգիրք): Գիրք 7 (83-84), 2013, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 140-164:

³ **Մելիքսեթյան Հ.**, Արևմտահայերի բռնազաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը, Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Եր., 1975, **Ավետիսյան Մ.**, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2009, **Կիրակոսյան Մ.**, Պետական և հասարակական հաստատությունների որբախնամ գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում 1918 -1920 թթ., է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2011, **Անտոնյան Մ.**, Ցեղասպանության որբերի հանդեպ հոգածության սոցիալական գիծը, Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում, ԵՊՀ հրատարակչություն, 2015, **Նույն տեղում**, Բնքնության խեղումից մինչև ուժացում. հայ որբերի «անվտանգության ապահովումը» ցեղասպանության տարիներին, «21-րդ դար», N 5 (75), 2017, էջ 103-116, **Դանիելյան Է.**, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), Ե., «Մեկնարկ», 2017, «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ., միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու/ Խմբագիրներ՝ Հ. Մարության, Ն. Մարգարյան, Ե.: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020, **Hovannisian R. G.**, *The Republic of Armenia*, v. 1, Berkeley-L. A.-L, 1971:

հեղինակներից մեջբերել ենք այն դրվագները, որոնք կարող են պատկերացում տալ այն դժվարին ճանապարհի մասին, որն անցել են մեր եղեռնազարկ հայրենակիցները մինչև կյանքում իրենց տեղը գտնելը:

Այս նյութը հրատարակության պատրաստելիս օգտվել ենք Երանուհի Սողոյանի⁴, Էմմա Հովսեփյանի⁵ հրապարակումներից, Գ. Աղասարյանի ու Ռ. Հովսեփյանի ուշագրավ գրքից⁶, ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմում զոհված հայազգի մարտիկների հուշամատյանից⁷ և այլ նյութերից⁸: Հողվածի աղբյուրագիտական հիմքը Հայաստանի ազգային (ՀԱԱ)⁹ և «Կաճառ» գիտական կենտրոնի (ԿԳԿԱ)¹⁰ արխիվների համապատասխան ֆոնդերի նյութերն են, որոնց մեծամասնությունը Շուշիի՝ 2020 թ. նոյեմբերի 8-ի հանձնումից հետո, դժբախտաբար, մնացել է թշնամու վերահսկողության տակ:

Հայաստանի արևմտյան նահանգներում և Օսմանյան Թուրքիայի հայկական շրջաններում հայ ազգաբնակչության զանգվածային ու դաժան կոտորածների պատճառով ծնողներից, մյուս հարազատներից ու կերակրողից զրկված հարյուր հազարավոր երեխաների անհապաղ փրկությունը դարձել էր ամենահրատապ հարցերից մեկը: Ժամանակին աղետյալ հայ ժողովրդին հնարավորինս ու ինքնակամ օգնել են Ամերիկան, Անգլիան, Նորվեգիան, Շվեդիան և այլ երկրներ: Հատկապես շատ են տեղեկությունները Ամերկում¹¹ ծավալած մարդասիրական օգնության, մասնավորապես որբանոցների ստեղծ-

⁴ **Սողոյան Ե.**, Ալեքսանդրապոլի որբանոցները, «Հետք», 17 մայիսի, 2010 թ.:

⁵ **Հովսեփյան Է.**, Փաստաթղթեր Հայաստանում Ամերկումի կրթական գործունեության վերաբերյալ, ԵՊՀ «Հայագիտության հարցեր» հանդես, N 3, 2014, էջ 192-210:

⁶ **Աղասարյան Գ., Հովսեփյան Ռ.**, Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում (1941-1945), Ս., «Դիզակ պլուս», 2005, էջ 94-95, 97-98, 231-232:

⁷ Հուշամատյան, հ. 4-րդ, խմբ. խորհուրդ՝ գեներալ-մայոր Ռ. Մ. Կարապետյան և ուրիշն., Երևան, «Գիտություն», 2005, էջ 135:

⁸ Կարո Դավթյան (կենսամատենագիտություն), կազմ. և խմբ.՝ Ա. Յ. Սարգսյան, Ս., ԱրՊՀ հրատ., 2004, էջ 3-5:

⁹ ՀԱԱ, ֆ. 39, գ. 1, գ. 2, թ. 17, ֆ. 105, գ. 1, գ. 2853, թ. 153, ֆ. 122, գ. 1, գ. 175, թ. 4, ֆ. 122, գ. 1, գ. 190, ֆ. 122, գ. 1, գ. 489, թ. 44, ֆ. 199, գ. 1, գ. 22, թ. 20-21:

¹⁰ ԿԳԿԱ, ֆոնդ հմ. 41 (Սուրեն Աղաբեկի Կարապետյանի ֆոնդ), գ. N 12, թ. 73:

¹¹ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատուց կոմիտեն (Ամերկումը) կազմավորվել է 1918 թ. այդ տարածաշրջանում տակավին 1915 թվականից գործող ամերիկյան բարեգործական հաստատությունների՝ հայկական և սիրիական նպաստամատուց կոմիտեների միավորմամբ: Ինչպես հայտնի է, արմենոցիդից հրաշքով փրկված հազարավոր հայ որբերի խնամքի համար այդ կոմիտեները բազմաթիվ որբանոցներ էին պահում Միքիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Գոստանդոնուպոլսում և այլ վայրերում: Կոմիտեների միավորումն Ամերկումին, ըստ երևույթին, ընձեռեց ավելի արդյունավետ և նպատակառոտ դժգոհություն հնարավորություն: Ամերկումն իր գործունեությունը Հայաստանում դադարեցրել է 1931 թվականին:

ման, դպրոցների ու հիվանդանոցների բացման, սննդամթերքի, հագուստի ու դեղորայքի հայթայթման և այլ բարեգործությունների մասին, որոնց շնորհիվ իրական մահից փրկվել են հազարավոր հայ երեխաներ: Նույն առաքելությունն են իրականացրել նաև այլ բարեգործական մարմիններ: Ինչպես արձանագրվել է ՀՀ խնամատարության և աշխատանքի նախարարության 1919 թ. հունվարի 15-ի տեղեկագրում, երկրի տարածքում գործող 45 որբանոցներում և այլ որբախնամ հաստատություններում ապաստան գտած 6123 որբերի խնամքն իրականացնում էին ինչպես կառավարությունը, այնպես էլ բարեգործական մի շարք հաստատություններ¹²: Դրանցից Եղբայրական օգնության կոմիտեն ստեղծվել է կաթողիկոս Գևորգ Բ-ի 1914 թ. դեկտեմբերի 28-ի կոնդակով՝ պատերազմի պատճառով գաղթական դարձած հայրենակիցներին օգնելու նպատակով: Գործունեության միայն առաջին ամսում կոմիտեն առաջնորդարանի բակում և Վաղարշապատում կերակրել է շուրջ 150 հազար գաղթականների, հիմնադրած որբանոցներում ապաստան տվել բազմաթիվ կարիքավորների: Մոսկվայի հայկական կոմիտեն ստեղծվել է 1914 թ. Հոկտեմբերի 26-ին և հիմնականում օգնել պատերազմից տուժած հայ կամավորներին և գաղթականներին, բացել որբանոցներ: Կոմիտեն 1915-ին մտել է Ռուսաստանի Կարմիր խաչի ընկերության կազմը և գործել մինչև 1918 թ. մարտը: Հատկանշելի է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, որը հիմնադրվել էր 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում և մինչև 1921 թ. նյութական աջակցություն ցուցաբերել ինչպես հայ մտավորականներին ու արվեստագետներին, այնպես էլ Առաջին աշխարհամարտի և հատկապես արմենոցիդի հետևանքով Արևելյան Հայաստանում ու Թբիլիսիում ապաստանած գաղթականներին, բացել ծերանոցներ, անվճար սննդակայաններ, որբանոցներ: Բացառապես Հայաստանի տարածքում գործած և մի շարք հայանպաստ բարեգործական հաստատություններ միավորած «Անգլիան հայ փախստականներին» բրիտանական կազմակերպությունը (Անգլիումը) նույնպես օգնել է կոտորածներից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներին:

Թվարկված բարեգործական հաստատությունների կողմից որբերի խնամակալության նշանակությունն ակնհայտ է այն տխուր փաստի հաշվառմամբ, որ անապաստան ու փողոցներում զիշերող

¹²ՀԱՍ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 20-21:

որբերի թիվը Հայաստանում արդեն հասել էր 20 հազարի սահմանագիծը¹³:

Ամերկումի որբախնամ գործունեությունը կանոնակարգված բնույթ է ստացել Առաջին հանրապետության տարիներին և շարունակվել անգամ Հայաստանի խորհրդայնացումից հետո: Ըստ այն ժամանակվա մամուլի հրապարակումների՝ Ամերկումն ուներ 7 որբանոց, որոնց խնամակալության տակ էին 16000 որբեր¹⁴: ՀՀ կառավարության հետ պայմանագիրը կնքվել էր 1919-ի ապրիլի 12-ին, որով Ամերկումը ստանձնել է Հայաստանում և Վրաստանում գտնվող բոլոր հայ որբերի խնամքն ու դաստիարակությունը: Այդ պայմանագիրը վերջնական չի եղել: Կողմերի քննարկումների շնորհիվ պարբերաբար շտկվել կամ փոփոխվել են դրա որոշ դրույթները: Դա պայմանավորված էր հայրենիքի, հարազատ ժողովրդի պատմության ու մշակույթի նկատմամբ լիարժեք պատկերացումներ ունեցող ապագա քաղաքացիներ կրթելու և դաստիարակելու հայկական կառավարության լուրջ մտահոգությամբ: Նույն մտահոգությունը հանգեցրել է հայ-ամերիկյան տարաձայնությունների նաև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո¹⁵: Անգամ անընդհատ թարմացվող պայմանագրերը չէին կանխում դրանց զանազան դրույթների երկուստեք խախտումները, երկկողմ բողոքներ ու մեղադրանքներ հնչեցնելը, այդուհանդերձ, փոխադարձ զիջումների, միմյանց օգնելու պատրաստակամության շնորհիվ տարաձայնությունները հարթվում էին: 1922-1924 թթ. Ալեքսանդրապոլում գործող

¹³ Հմմտ.՝ **Թաթոյան Ռ.**, *Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները*, «Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, էջ 328, 337:

¹⁴ Տե՛ս Ամերկումի սուրհանդակ. Որբանոցները, «Խորհրդային Հայաստան», N 27, 1924թ.:

¹⁵ ՀՀ Շիրակի մարզի Հայագիտական կենտրոնի գիտաշխատող Գարինե Ալեքսանյանի կարծիքով՝ ամերիկացիները որբանոցների սաներին պատրաստում էին ամերիկյան կյանքի համար, նրանք, փաստորեն, ստեղծել էին փակ համակարգ: Երեխաները դրսի աշխարհի հետ չէին շփվում: Ամերկումի գործունեությունն այդ տարիներին միսիոներական էր, հստակ նպատակ էր հետապնդում, և դա շատ էր անհանգստացնում Հայաստանի իշխանություններին: Ամերիկյան կառավարությունը, ստանձնելով որբերի հովանավորության գործը, նպատակ էր հետապնդում հետազայում լավագույն սաներին տեղափոխել Ամերիկա: Որբերի առաջին քանակակազմը տեղափոխվել է 1922 թ.: Հետագայում այս գործընթացը կասեցվել է Ալեքսանդր Մյասնիկյանի պահանջով: Երեխաների տեղափոխումը դադարեցվել է:

մասնավոր որբախնամ այլ կազմակերպությունները՝ ամերիկյան «Բորգ» ընկերությունը¹⁶, նորվեգացի միսիոներուհի Կատարինե Բոդիլ Բյորնի¹⁷ «Լուսաղբյուր» որբանոցը փակվեցին միսիոներական գործունեության մեղադրանքով:

Արդեն մայիսի 1-ին Ամերկումին են հանձնվել 90 որբանոց, 11 հիվանդանոց՝ շուրջ 14 հազար որբերով: Ամերկումը պարտավորվել է իր միջոցներով պահել ու դաստիարակել թե՛ Հայաստանի տարածքում, թե՛ նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր որբանոցների որբերին, իսկ ՀՀ կառավարությունն իր հերթին պարտավորվել է Ամերկումին տրամադրել շենքեր ու շինություններ¹⁸ և հնարավորինս չխառնվել նրա ներքին աշխատանքներին:

Ալեքսանդրապոլում Ամերկումի որբախնամ լայն գործունեության համար հիմք է հանդիսացել 1919 թ. մայիսի 22-ին քաղաքագլուխ Լևոն Սարգսյանի և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի տեղի ներկայացուցիչների միջև կնքված պայմանագիրը Ալեքսանդրապոլի որբանոցները կոմիտեին հանձնելու վերաբերյալ¹⁹11: Որոշման վերանայումից հետո կառույցին տրվել է գործելու որոշակի ազատություն՝ իր հայեցողությամբ կազմակերպելու աշխատանքն անգամ Մոսկվայի Հայկական կոմիտեին, Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը պատկանող մանկատներում: Ըստ որոշ տեղեկությունների՝ Հայաստանում առաջին որբանոցը բացվել է 1915 թ. նոյեմբերի 20-ին, Ալեքսանդրապոլում՝ «Երիտասարդական միության» ջանքերով, որի կառավարումը մեկ տարի անց ստանձնել է «Միացյալ

¹⁶ 1920-ականների սկզբից այն Հայաստանում զբաղվել է որբախնամ աշխատանքով, սակայն միսիոներական լայն քարոզչության պատճառով ՀԽՍՀ լուսժողկոմատի պահանջով 1923 թ. հունվարի 15-ին դադարեցրել է իր գործունեությունը և հեռացել:

¹⁷ Հայտնի է նաև որպես մայր Կատարինե (1871-1960), որն ականատես է եղել Հայոց ցեղասպանությանը: Միսիոներական կազմակերպության կողմից ուղարկվել էր Արևմտյան Հայաստան և գործել խարսերդում ու Մուշում: Աղետի տարիներին խնամել ու մահից փրկել է հարյուրավոր անօթևան հայ կանանց և երեխաների, 1917-ին որդեգրել է երկու տարեկան հայ որբուկ Ռաֆայելին: 1920-1930-ականներին Բոդիլ Բյորնը հայ երեխաներ է խնամել Միրիայի, իսկ 1922-1924-ին՝ նաև Ալեքսանդրապոլի 33 սան ունեցող որսանոցներում:

¹⁸ Ցարական Ռուսաստանը Կարսում և Ալեքսանդրապոլում, իր գորբերի տեղակայման համար, կառուցել էր վարչական, սանիտարաբժշկական, ոստիկանական շենքեր, գորանոցներ, վառելիքի և զինամթերքի հսկայածավալ պահեստներ, լվացքատներ, բաղնիքներ, ճաշարաններ ու հացաթխման կետեր, էլեկտրամատակարարման կայաններ և այլ քարե շինություններ, որոնք էլ հազարավոր որբ մանուկների համար դարձան ապաստարաններ:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2853, թ. 153:

ընկերությունը»²⁰: 1916-ի ապրիլի 25-ին բացվել է «Միացյալ ընկերության երկրորդ որբանոցը», նույն և հաջորդ տարիներին որբանոցներ են հիմնել նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը²¹, Ալեքսանդրապոլի գաղթականաց դպրոցի ուսուցչական խումբը²², Լոնդոնի Կարմիր խաչի ընկերությունը²³ և այլն: 1915-1917 թթ. Ալեքսանդրապոլում բացվել է 8 որբանոց²⁴, որտեղ ապաստան են գտել 500 արևմտահայ որբ երեխաներ:

Ըստ Շիրակի մարզի Հայագիտական կենտրոնի գիտաշխատող Կարինե Ալեքսանյանի ուսումնասիրությունների՝ մինչև 1917 թ. Ալեքսանդրապոլն ընդունել և ճանապարհել է 85-95 հազար գաղթականներ: Բուն Ալեքսանդրապոլում 1917 թ. նրանց թիվը հասել է 25754-ի: 1919 թ. Հունվարի տվյալներով՝ Ալեքսանդրապոլի գավառում ապաստանել են Եղեռնից մազապուրծ 31989 հայ Արևմտյան Հայաստանից և 2372 հայ գաղթականներ նախկին Ռուսական կայսրության տարածքից: Սակայն որոշ ժամանակ անց ակնհայտ է դարձել, որ Հայաստանի նորաստեղծ կառավարությունը, թեև ջանքեր է գործադրել, ի վիճակի չէր սեփական ուժերով լուծելու օրեցօր ավելացող գաղթականության

²⁰ 1916 թ. փետրվարին Ալեքսանդրապոլի մի քանի ընկերություններ՝ «Եղբայրական օգնությունը», «Երիտասարդական ընկերությունը», «Օրիորդաց կոմիտեն» և «Բարեգործական ընկերությունը» միացել և ստեղծել են մեկ միասնական վարչություն, որը համակարգել է աշխատանքները և առկա միջոցների օգտագործումը:

²¹ 1916 թ. հունիսի 7-ին Բասենի Բաշքեյ գյուղից Ալեքսանդրապոլ տեղափոխված որբերի համար իր առաջին որբանոցն է բացել Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղը: 2-րդ որբանոցը ընկերությունը բացել է 1916 թ. հունիսի 27-ին, որտեղ խնամքի համար ընդունվել են 108 որբեր Սասունից: Երկու որբանոցներն էլ բացվել են Բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի նախագահ Հակոբ Նաչվանքյանի ջանքերով:

²² Իր որբանոցներն է բացել նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից պատերազմից տուժածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն: Կոմիտեին պատկանող առաջին որբանոցը բացվել է 1916 թ. ապրիլի 1-ին: Ղեկավար է նշանակվել Հովսեփ Միրզոյանը, իսկ վերահսկողությունը հանձնվել է Ալեքսանդրապոլի գաղթականական դպրոցի ուսուցչական խմբին: 1916 թ. հուլիսին նույն խմբի և Միրզոյանի վերահսկողությամբ բացվել է երկրորդ որբանոցը: Մինչև 1917 թ. սկսել է գործել կոմիտեի բացած երրորդ որբանոցը:

²³ 1917 թ. հունվարի 15-ին Լոնդոնի Կարմիր խաչի տիկին Ռոբինզոնի անվան կոմիտեի միջոցներով 8-12 տարեկան 40 սասունցի որբերի համար Ալեքսանդրապոլում մի նոր որբանոց է բացվել, որն անվանվել է «Ռոբինզոն»:

²⁴ Ալեքսանդրապոլում գործող ութերորդ որբանոցը հատկացվել է զուտ քոստոտության պատճառով գլուխները սափրածներին, զատվել է մյուս որբանոցներից և ոչ մի առնչություն չի ունեցել նրանց հետ:

խնդիրները: Ծանր իրավիճակում հայտնված Հայաստանին օգնության ձեռք է մեկնել Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն: 1919 թ. ապրիլի 28-ին Փարիզում մի կողմից՝ Ամերիկյան օգնության վարչության ներկայացուցիչ Հերբերթ Հուվերի, մյուս կողմից՝ Փարիզի հայկական պատվիրակության ներկայացուցիչ Պողոս Նուբարի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի միջև կնքվել է մի համաձայնագիր, որով նախատեսվում էր կանխել սովի հետագա տարածումն ամբողջ Հայաստանի տարածքում:

Ամերիկյան կողմը պարտավորվել է 5.000 տոննա ալյուր ուղարկել Հայաստան, ստեղծել սննդակայաններ, բացել հիվանդանոցներ, շրջիկ բուժկայաններ, ստանձնել գաղթականների և տեղի չքավոր բնակչության խնամատարությունը, կազմակերպել որբերի հավաքագրումն ու որբանոցների բացման աշխատանքները:

1919 թ. հունիսի 1-ին Բաթումում խաբիսի են գցել ամերիկյան 2 բեռնանավ՝ մոտ 10 հազար տոննա ցորենով և 619 տոննա լոբի ու սիսեռով, որը գնահատվում էր 2 միլիոն դոլար: Չորս օր անընդմեջ գնացքներով սննդամթերքը տեղափոխվել է Հայաստան: Հունիսին կատարվել է եւս 3 առաքում՝ 11 հազար տոննա պարենամթերքով: Դա նշանակալի աջակցություն էր դժվար կացության մեջ հայտնված Հայաստանին: Ամերիկումը մինչ այդ տարբեր բնակավայրերում գործող մանկատները կենտրոնացրել է Ալեքսանդրապոլում, Երևանում, Դիլիջանում, Էջմիածնում և ներկայիս Ստեփանավանում: Գյումրիում որբանոցներ դարձան «Կազաչի պոստ», «Պոլիգոն», «Սևերսկիե կազարմի» զորանոցները, ինչը հնարավորություն է տվել հավաքագրել նոր որբերի: Միայն նշված զորանոցներում խնամքի տակ է առնվել 17 հազար երեխա²⁵: Երևանում այդ թիվը հասել է 14 հազարի: Մանավանդ

²⁵Ըստ գիտաշխատող Կարինե Ալեքսանյանի՝ նշված կայաններում 1920 թ. սեպտեմբերի դրությամբ պահվում էր 20 հազար որբ: Նրանց տրամադրության տակ կար 170 շինություն, ինչը դյուրացնում էր նրանց խնամքի և կրթության գործը: «Կազաչի պոստի» և «Սևերսկիե կազարմի» որբանոցներում տեղավորված էին աղջիկները, իսկ «Պոլիգոնում»՝ տղաները: Հանրային կրթության նախարարության ստացած զեկուցագրերից երևում է, որ «Պոլիգոնի» 10 որբանոցներում և դրանց կից դպրոցներում որբերի համար լավ պայմաններ են ստեղծվել, ուսելիքը եղել է բավարար, հագուստներն ու անկողինը՝ մաքուր, երեք հիվանդանոցներում առանձին պահվել են ծանր, վարակիչ և արդեն կազդուրվող հիվանդները, ինչը նպաստել է մահացության թվի նվազմանը: Ամերիկյան որբանոցները շահեկանորեն տարբերվել են պետության խնամքի տակ գտնվող որբանոցներից իրենց հնարավորություններով ու միջոցներով:

սկզբնական շրջանում անբավարար էր սպիտակեղենը, երեխաների գրեթե կեսը քնում էր հատակին, զորանոցների տանիքները կաթում էին, պատուհանները ապակիներ չունեին, եղան Ախուրյան գետում փոքրիկներին լողացնելիս խեղդվելու դեպքեր: Վիճակի քիչ թե շատ բարելավումից հետո ՀՀ կառավարությունը հետ է ընդունել 25 մանկատուն և 1 հիվանդանոց, իր ուժերով բացել ևս 5 նոր որբանոց: 1920-ի սեպտեմբերի 17-ի տվյալներով՝ Ամերկումի հաստատություններում գտնվող որբերի թիվը 21 հազար էր: Ամերկումի տրամադրության տակ է դրվել 7298 դեպատին հոդ, որը մշակվել է սաների ձեռքերով: Որբերը հանրակրթական առարկաներից զատ սովորում էին զանազան արհեստներ, օտար լեզուներ: Դպրոցները համեմատաբար ապահովված էին դասագրքերով, գրենական պիտույքներով, բանիմաց մանկավարժներով: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում սաների արհեստագործական կրթությանը: Տղաները, մասնավորապես, սովորում էին նկարչություն, աստղագործություն, դերձակություն, կոշկակարություն, թիթեղագործություն, կազմարարություն, հյուսնություն, վարսավիրություն, երկաթագործություն, կավագործություն, փականագործություն: «Պոլիգոնի» որբերն ունեին թատերական ինքնագործ խումբ, ընդհատումներով հրատարակում էին շաբաթաթերթ, սիրահոծար մասնակցում մանկական երգչախմբի պարապմունքներին և այլն:

Իգական սեռի աշակերտները հմտանում էին ամեն կարգի տնային գործերի մեջ: Երեխաները օրվա մի մասն անցկացնում էին դպրոցում, մյուս մասը՝ արհեստանոցներում: Հանգստյան օրերին դպրոցներում և արհեստանոցներում պարապմունքներ չկային, և որբերը զբաղվում էին որբանոցներում մաքրություն անելով, հետևում անձնական հիգիենային և այլն: Որբանոցների ղեկավարներից մի քանիսն ամերիկացիներ էին: Ալեքսանդրապոլի որբանոցները կառավարում էին միստր Յարոյը²⁶, Միշելը, Ֆատկենը, Ֆեգելը, Ֆիլիպը, տիկին Աշխենը, օրիորդ Սանդուխտն ու Սաթենիկը: Վերջիններս չէին ամուսնացել՝ իրենց նվիրելով որբ երեխաների դաստիարակության գործին: Որբանոցներից մեկի տնօրենի տեղակալի պարտականությունները ստանձնել էր Մկրտիչ Աճեմյանը՝ ռեժիսոր Վարդան Աճեմյանի հայրը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Ամերկումի որբախնամ գործունեությունը վերստին օրինականացվել է: 1921-ի

²⁶ Ե. Յարոյը Ամերկումի կովկասյան ճյուղի տնօրենն էր:

օգոստոսի 13-ին կատարվել է Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցների պաշտոնական վերահանձնումը Ամերկումին: Տարածայնությունները Հայաստանի կառավարության և Ամերկումի միջև միայն դաստիարակության և դպրոցներում դասավանդվող առարկաների ու դասավանդման մեթոդների շուրջ էին:

Հայհեղկումի, ապա 1923-ին՝ Անդրֆեդերացիայի ժողովուրդների որոշումներով Ամերկումի գործունեությունը վերցվել է հսկողության տակ՝ այն սահմանափակելով զուտ բարեգործությամբ: Կրթության և դաստիարակության գործը ստանձնել է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը: 4.500 աշխատակիցների վրա տարածելով խորհրդային աշխատանքային օրենսդրությունը՝ նրանց պարտադրել են ընդգրկվել արհմիություններում:

1923 թ. հունվարին Ամերկումի խնամքի տակ գտնվող որբանոցներում ընդգրկված էին 21.635 որբեր, այդ թվում՝ որբանոցներին կից մանկապարտեզներում, դպրոցներում, դպրոց-արհեստանոցներում, մանկավարժական տեխնիկումում, բուժքույրերի դասընթացում 20.367 սովորողներ:

Միայն «Պոլիգոնի» որբանոցներին կից գործել է 10 դպրոց՝ 104 ուսուցիչներով և բարձր դասարանն ավարտած 25 աշակերտ-ուսուցիչներով, որոնք դասավանդում էին 5305 աշակերտների, այդ թվում՝ 3.519 տասից-տասնչորս տարեկան երեխաների²⁷: «Պոլիգոնը» համարվել է որբանոցների կենտրոնը: Հենց այստեղ էլ կազմակերպվել է 11-ամյա դպրոց, որի հիմքի վրա 1925 թ. ստեղծվել է մանկավարժական ուսումնարանը: «Պոլիգոնի» որբանոցը նաև սպորտի լավագույն օջախ էր, գործել են բասկետբոլի, ֆուտբոլի, լողի և այլ խմբակներ: Որբերի ֆիզիկական դաստիարակության գործը գտնվել է որբանոցների ղեկավարության կողմից 1920 թ. Կոստանդնուպոլսից հրավիրված Վահան Չերազի ձեռքում: Բարձրագույն կրթությամբ, բազմակողմանի զարգացած, մի քանի օտար լեզուների տիրապետող Չերազը լավատեղյակ էր սկաուտական շարժմանը և նրա նախաձեռնությամբ «Կազաչի պոստում» ստեղծվել է սկաուտական կազմակերպություն, որում ընդգրկվել են տարբեր տարիքի 180 որբեր:

Ալեքսանդրապոլի որբանոցներում կարևորվել է նաև որբերի հոգևոր դաստիարակությունը: Եկեղեցական խորհրդի միջնորդությամբ և ամերիկյան կառավարության համաձայնությամբ որբանոցների հոգևոր դաստիարակ է նշանակվել քահանա Տեր Հովսեփ Հարություն-

²⁷ ՀԱՍ, ֆ. 122, ց. 1, գ. 489, թ. 44:

յանը: Վերջինս որբերի շրջանում հոգևոր դաստիարակության գործը լավագույն կերպով կազմակերպելու համար արժանացել է Ամերիկյան կառավարության ոսկե խաչին: Իսկ թեմի առաջնորդի և երեսփոխանական խորհրդի միջնորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանի 1922 թ. նոյեմբերի 11-ի 643 կոնդակով նրան շնորհվել է ոսկյա լանջախաչ և ծաղկե փիլոն կրելու իրավունք:

1927-ի ապրիլի 25-ին՝ Չեկայի (Արտակարգ հանձնաժողովի) բռնությունների դեմ կազմակերպված ցույցերի հետ կապված, զենք և արգելված զրկանություն գտնելու պատրվակով խուզարկություններ են կատարվել «Պոլիգոն» և «Կազաչի պոստ» որբանոցների պահեստներում, որին հետևել է 27 մարդու ձերբակալությունը: Անգամ նման պայմաններում Ամերկումը, հանուն երեխաների, շարունակել է աշխատել: 1926 թ. հունվարին Ամերկումի խնամքի տակ էին դեռևս 8.234 որբեր²⁸: Մինչև 1929 թ. Ամերիկյան խնամակալության տակ գտնվող մանկատները ամսական դրսից ստացել են 150 հազար դոլարի օգնություն, որը շարունակվել է դրանից հետո անգամ՝ ամսական 100 հազարի չափով: Տասնյակ հազարավոր որբեր՝ շնորհիվ Ամերկումի, ոչ միայն փրկվել են, այլև համեմատաբար ապահով անցկացրել 20-րդ դարի 20-ականների սկզբի սովը, ստացել բավական լավ կրթություն, տիրապետել լեզուների, վարժվել արհեստներում, ծանոթացել քաղաքավարության, բարեկրթության կանոններին: Նրանցից շատերը դարձել են մեր երկրին պիտանի, իսկական քաղաքացիներ:

Երբ 1927-1929 թթ. բացվել են Լուկաշինի անվան մանկաձային ֆարիկան ու Տեքստիլ կոմբինատը, արդեն չափահաս դարձած որբերի մի մասն աշխատանքի է անցել այնտեղ: Ուսումնասիրողներից Կարինե Ալեքսանյանի մատուցմամբ՝ «Այդ թվերին որբանոցների ղեկավարությունը սկսեց քիչ-քիչ որբերին դուրս թողնել: Ու շատերի համար դա վերածվում էր ողբերգության: Նրանք, ճիշտ է, կրթված էին, արհեստներ գիտեին, սակայն չգիտեին, թե ինչ բան է իրական կյանքը, չկար աշխատանք, և շատերը սկսեցին գողությամբ գրավել, փողոցներում մուրացկանություն անել: Սա, իրոք, հոգեբանական մեծ հարված էր շատ որբերի համար: Փաստորեն հազարավոր որբերից շահում էին նրանք, ովքեր հարազատներ ունեին և կարող էին վերադառնալ նրանց մոտ: Ամենայն հավանականությամբ, շահեկան դրության մեջ են եղել նաև Ամերիկա տեղափոխված որբերը, որոնց մասին պատմությունը լռում է, սակայն

²⁸ ՀԱՄ, ֆ. 39, ց. 1, գ. 2, թ. 17:

շատ-շատերը հայտնվել են շոկի մեջ, երբ լքել են որբանոցի սահմանները»²⁹:

Ահավասիկ, նման ոչ դյուրին պայմաններում են հասունացել եղեռնագարկ եղած մեր հայրենակիցների որբերը, որոնցից յուրաքանչյուրի որբանոցային դեգերումների մասին ստույգ տեղեկություններ մեզ հայտնի չեն, բայց Հայաստանի ազգային արխիվում մեր պրպտումների արդյունքում հաջողվել է պարզել Արցախում նրանց հայտնվելու հանգամանքներն ու շարժառիթները:

1924 թ. Լենինականի որբանոցների մի խումբ սաներ, որոնք ստացել էին մանկավարժական կրթություն, «Սովետական Հայաստան» թերթում³⁰ կարդալով Ինքնավար Լեռնային Ղարաբաղի լուսժողովուր Արշավիր Քամալյանի կոչը, ուղևորվում են Ստեփանակերտ՝ ստանձնելու ուսուցչի ծանր ու պատասխանատու պարտականությունը: Արևմտյան Հայաստանում ցեղասպանությունից մազապուրծ որբերը թեն սնվել և կրթվել են Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Բարեգործության շնորհիվ, բայց պատանի հասակից սկսած մնացին իրենց հայրենի երկրի նվիրյալ քաղաքացիները: Նրանք դարձան ԻԼՂ-ում կրթության գործի կազմակերպիչներ, արժանացան պետական պարգևների և հասարակական հարգանքի:

Ցեղասպանությունից մազապուրծ և որբի դառը ճակատագիրը կրող այդ մարդիկ ուժ են գտել իրենց մեջ նվիրվելու Արցախում հայրենապահպանության վեհ գործին: Ինչպես ցույց են տալիս ստորև բերված կենսագրական տեղեկությունները՝ արևմտահայ որբերն Արցախում մանկավարժությամբ են զբաղվել ամենայն պատասխանատվությամբ: ԼՂԱՄ-ի լուսժողովուր Արշավիր Քամալյանի կոչը, որ գուցե կարիքից էր դրդված³¹, բայց հեռատես քայլ դուրս եկավ: Եկել է

²⁹ <http://hetq.am/arm/news/44812/aleqsandrapoli-orbanocnery.html> (ներբեռնումը՝ 12.11.2022 թ.):

³⁰ «Խորհրդային Հայաստան», NN 151, 195, 197, 1924 թ. («Ինքնավար Լեռնային Ղարաբաղի առաջին և երկրորդ աստիճանի աշխատանքային դպրոցների համար հարկավոր են ուսուցիչներ: Ցանկացողներին խնդրում ենք դիմել Ստեփանակերտ, Լուսժողովմատ, հայտնելով իրենց պայմանների մասին մինչև սեպտեմբերի 5-ը: Լեռնային Ղարաբաղի Լուսժողովմատ» բովանդակությամբ հայտարարությունը տպագրվել է թերթի մի քանի համարներում):

³¹ Արցախում կրթության գործը կարգավորելու համար Ա. Քամալյանը համագործակցել է Հայաստանի լուսժողովմատի հետ: Արխիվային մի վավերագրից հայտնի է դարձել, որ Արցախի ուսուցիչներ Հմայակ Բաբայանը, Սուրեն Ղուկասյանը, Լևոն Մովսեսյանը, Եսթեր Մովսեսյանը մասնակցել են Լենինականի ամառային դասընթացներին, որոնց ծախսերը հոգացել է Լեռնային Ղարաբաղի լուսժողովմատը (ՀԱՄ, ֆ. 122, ց. 1. գ. 175, թ. 4):

այդ իրողությունը փաստելու, կարևորելու, նշանավորելու պահը: Որպեսզի մեկ-երկու տասնամյակ անց Արցախում մոռացության չմատնվեն այն արևմտահայ որբերը, որոնք հեռավոր գյուղեր ուսուցչության են եկել, նվիրվել իրենց գործին, վայելել սաների սերն ու հարգանքը, կրթել ու դաստիարակել հայրենիքի արժանի զավակներ ու քաղաքացիներ: Որպեսզի հավիտյանս հիշվի, որ արևմտահայ Կարո Դավթյանն է կազմել Արցախի բարբառի քարտեզը, որ նրա ակադեմիական արժեք ունեցող աշխատությունը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը, որ այդ գիրքը գրվել է Ստեփանակերտում: Հանուն հոգևոր, մշակութային արժեքների պահպանման ու հանրահռչակման:

Թուրքիայի կողմից պետականորեն կազմակերպված ցեղասպանությունից փրկված որբերից Գևորգ Աբրահամյանը, Գեղամ Անթելեպյանը, Տոնական Գալստյանը, Մեղրակ Գասպարյանը, Վարդ Գասպարյանը, Կարո Դավթյանը, Սալաթ Դավթյանը, Հարություն Եղիազարյանը, Վեհանուշ Թերզիբաշյանը, Հովհաննես Մինասյանը, Սարգիս Ոսկերչյանը, Մուշեղ Տերյանը և ուրիշներ, դրականորեն արձագանքելով ԼՂԻՄ լուսժողկոմի հայտարարությանը²⁸, 1924 թ. և հաջորդ տարիներին անվարան եկան Ստեփանակերտ՝ համալրելու Արցախի մանկավարժական ընտանիքը: Նրանք փայլուն կերպով կատարեցին Արցախում մատաղ սերնդի դաստիարակության, կրթման իրենց կարևոր առաքելությունը, ինչը գնահատվեց ըստ արժանվույն. ոմանք արժանացան վաստակավոր մանկավարժի կոչման:

Կատարելով իրենց հայրենասիրական ու քաղաքացիական պարտքը՝ նրանք նաև մասնակցեցին Հայրենական մեծ պատերազմին և անձնական օրինակով իրենց սաներին տվեցին թերևս ամենակարևոր դասը՝ միշտ պատրաստ լինել հայրենիքի պաշտպանության վեհ գործին:

Ոչ բոլորի անուններն ու գործունեությունն են մնացել հիշողության մեջ կամ արժանացել հիշատակության: Օրինակ, հայտնի

²⁸ 1925 թ. ապրիլի 25-ին Լուսժողկոմ Ա. Քամալյանը դիմել է Հայաստանի իր պաշտոնակցին. «Նկատի ունենալով, որ Ղարաբաղը մասնագետ դասատուների մեծ կարիք ունի և Հայաստանի պետհամալսարանն այս տարի ընթացավարտներ պիտի ունենա, ուստի խնդրում եմ գյուղատնտեսական և պատմագրական բաժնավարտներից երկուական հոգու ուղարկել Ղարաբաղ աշխատելու» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գործ 190 [Գրագրություններ Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմատի հետ Պետհամալսարանի ընդունելության կարգի, դասընթացներ կազմակերպելու և դասագրքեր առաքելու մասին], թ. 16):

է ցեղասպանությունը վերապրած ու Արցախի ուսուցչության եկած երիտասարդներից մեկի անունը՝ Վարդան, որը 1928-ին հիվանդացել է և մահացել Ստեփանակերտում: Նրա ազգանունը, ցավոք, չհաջողվեց գտնել: Ժամանակին իրենց Արցախի կրթական գործին նվիրած մանկավարժների ժառանգները դարձել են նրանց արժանի հետևորդները. Հովհաննես Մինասյանի թոռ Վահրամ Աթանեսյանը՝ լրագրող, արձակագիր, ԱՀ ԱԺ չորրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Հարություն Եղիազարյանի թոռը՝ Հովիկ Մուսայելյանը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանաստեղծ ու խմբագիր, Կարո և Սալաթ Դավթյանների թոռը՝ Արա Պողոսյանը՝ ՊԲ շտաբի բաժնի պետ, և այսպես շարունակ: Որբանոցից Արցախ եկած ու մանկավարժությանը նվիրված վերապրածներից Սեդրակ Գասպարյանն ապրել է Մարտակերտի շրջանի Չայլու գյուղում, Գևորգ Աբրահամյանը՝ նույն շրջանի Թալիշ գյուղում, որոնք, ցավոք սրտի, բռնազավթված են ոսոխի կողմից: Մուշեղ Տեյյանի թոռն աշխատել է «Ազատություն» ռադիոկայանում, մի ժամանակ Մոսկվայի թղթակցային բյուրոյի ղեկավարն էր: Վեհանուշ Թերզիբաշյանը հայտնի արվեստաբան, հանգուցյալ Վահրամ Թերզիբաշյանի քույրն է, ԼՂ-ից տեղափոխվել, երկար տարիներ ուսուցչուհի է աշխատել Երևանում: Կան նաև այնպիսիները, ինչպես, օրինակ, Վարդ Գասպարյանը, որոնց մասին համարյա ոչինչ հայտնի չէ: Այդ անունները մեզ չհաջողվեց գտնել անգամ Հայաստանի ազգային արխիվում պահվող Ամերկոմի որբանոցների երեխաների ցուցակներում:

Ստորև ներկայացնում ենք մի խումբ մանկավարժների համառոտ կենսագրականները, որպես հարգանքի տուրք նրանց անմար հիշատակին:

ԴԱՆԻԵԼ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԱՎԱԳՅԱՆԸ (1912-1944) ծնվել է Վանում: Երկու տարեկան էր, երբ Ավագյանների ընտանիքը գաղթեց Շահումյանի շրջան, որտեղ էլ անցավ Դանիելի վաղ մանկությունը: 1917 թ. տեղափոխվել են Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղը, որտեղ չորրորդ դասարանն ավարտելուց հետո, 1925 թվականին Դանիել Ավագյանն ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը: 1931 թվականին ավարտելով այն՝ 1931-1932 ուսումնական տարվանից հայոց լեզու և գրականություն է դասավանդել Մեծշեն գյուղի թերի միջնակարգ դպրոցում: 1939-1940 ուսումնական տարում նշանակվել է Մեծշենի լրիվ միջնակարգ դպրոցի ուսմասվար: Ընդունվել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի «Հա-

յոց լեզու և գրականություն» հեռակա բաժինը: Այն դեռ չավարտած՝ գորակոչվել է գործող բանակ: Զոհվել է 1944 թ. փետրվարին²⁹:

ՏՈՆԱԿԱՆ ԳԱԼՈՒՍՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԸ (1909-1942) ծնվել է Արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքում: 1915 թ. ցեղասպանության զոհ են գնացել Տոնական Գալստյանի ծնողներն ու հարազատները: Հարազատներից կարողացել է փրկվել միայն չափահաս քույրը, որն աննկարագրելի տանջանքներով Տոնականին մի կերպ հասցրել է Էջմիածին, այնուհետև մշտական բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) գավառի ներկայիս Ախուրյան գյուղում: Քրոջ խնամքի ներքո Տոնականն այնտեղ ապրել է մինչև 1920 թ. աշունը: Այդ օրերին թուրքական բանակը մոտենում էր Ալեքսանդրապոլին: Քույրը Տոնականին հանձնել է Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցի խնամքին, ուր նա գտնվել է մինչև 1928 թ.: Այստեղ էլ ստացել է միջնակարգ կրթություն: Այս տարիներին Տոնականը դրսևորել է ուսումնառության և գեղարվեստական երկերի արտասանության բացառիկ ունակություններ և տաղանդ: Արտասանել է այնպիսի վարպետությամբ և համոզիչ մեկնաբանությամբ, որ ունկնդիրներին թվում էր, թե գործ ունեն արհեստավարժ կատարողի հետ: Դպրոցի թատերական խմբակի կենտրոնական դեմքը Տոնականն էր: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Տ. Գալստյանը գործուղվել է Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղը, որտեղ ստանձնել է դպրոցի տնօրենի պաշտոնը: Հաթերքում նա աշխատել է 1928-1930 թթ.: 1930 թ. սեպտեմբերի 1-ին նրան նշանակել են Մարտակերտի շրջժողկրթբաժնի դպրոցական տեսուչ: Շուրջ 2 տարի աշխատելով որպես տեսուչ՝ Տոնական Գալստյանը, երիտասարդական եռանդով լեցուն, Մարտակերտի շրջանի ուսուցիչների ստեղծագործական ջանքերն ի սպաս է դրել Արցախի ուսումնաձարավ երեխաներին խոր գիտելիքներով զինելու գործին: 1932-1937 թթ. Տոնական Գալստյանը Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող էր: Նրա դասախոսներն էին հայ անվանի գիտնականներ Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը, Ս. Հակոբյանը, Հ. Գյուլիքնիսյանը և ուրիշներ: 1937 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ գրականագետի որակավորմամբ: Տոնական Գալստյանն իր հետագա կրթությունը շարունակել է նույն համալսարանի բանասիրական ֆակուլտետի

²⁹ Հմմտ.՝ Հուշամատյան, հ. 4-րդ, խմբ. խորհուրդ՝ գեներալ-մայոր Ռ. Մ. Կարապետյան և ուրիշն., էջ 135:

ասպիրանտուրայում՝ գրականագետներ Սիմոն Հակոբյանի և Արսեն Տերտեքյանի ղեկավարությամբ: Փայլուն ապագա էր սպասում Տոնական Գալստյանին, եթե նրան հաջողվեր ասպիրանտուրան ավարտելուց հետո (1940 թ.) պաշտպանել իր դիսերտացիան՝ գերմանական գրող Գերհարդ Հաուպտմանի գրական ստեղծագործության մասին: Տոնական Գալստյանին բախտ չի վիճակվել իրագործելու իր գիտական կարիերան: 1940 թ. վերջերին նա զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, մեկ տարի անց մասնակցել Հայրենական մեծ պատերազմին և զոհվել Կերչում՝ 1942 թ. մայիսին³⁰:

ՄԵՂԻՍԿ ՀԱՎՈՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ (1908-1988) ծնվել է Արևմտյան Հայաստանի Մշո գավառի Վարդենիս (Մարե-Գյուլե) գյուղում: Յոթ տարեկան էր, երբ ծնողները երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության զոհը դարձան: Տասը տարի անցկացրել է որբանոցներում, որտեղ և ստացել է միջնակարգ կրթություն: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1926 թվականից, Լեռնային Ղարաբաղի դպրոցներում: Աշխատել է դպրոցի վարիչ, Մարտակերտի շրջանի Չայլու, Մարտակերտ, Մարաղա գյուղերում: 1937 թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը և աշխատանքի գործուղվել Խանլարի շրջան: Աշխատել է Զազիկ և Կուշչի գյուղերում՝ որպես ուսմասվար: Այստեղ նա ընդունվել է կոմկուսի շարքերը: 1941 թ. Ադրբեջանի լուսժողկոմատը բավարարել է Գասպարյանի խնդրանքը, որից հետո նա նորից տեղափոխվել է Մարտակերտի շրջան և նշանակվել Չայլվի դպրոցի տնօրեն: Երբ սկսվել է Մեծ Հայրենականը, Գասպարյանը գրիչն ու մատյանը կամավոր փոխարինել է զենքով: 1941 թ. զորակոչվել է գործող բանակ: Երկու ամիս ծառայել է որպես շարքային, այնուհետև նշանակվել վաշտի քաղդեկի տեղակալ, իսկ կոմունիստները նրան ընտրել էին կուսկազմակերպության քարտուղար: 1942 թ. մայիսին Կերչի համար մղվող ծանր մարտերում ծանր վիրավորվելուց հետո, երբ Գասպարյանն արդեն ապաքինվել էր, ստացավ 6-ամսյա արձակուրդ, սակայն հայրենասեր մանկավարժը 1 ամսից հետո կամավոր վերադարձավ ռազմաճակատ: 1943 թ. ավարտել է Մախաչկալայի սպայական կարճատև դասընթացները և լեյտենանտի կոչումով մեկնել ռազմաճակատ: Նշանակվել է վաշտի

³⁰Աղասարյան Գ., Հովսեփյան Ռ., Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում (1941-1945), էջ 94-95: Ըստ մանկավարժ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Հարությունյանի՝ Մեծ Հայրենականին մասնակցած Արցախի ուսուցիչների մասին գիրք է գրել նաև Մարտակերտի շրջողկրթաժնի վարիչ Արշակ Անանյանը (1908-1977):

հրամանատար: Նրա հրամանատարությամբ վաշտը պատվով է կատարել հրամանատարության առաջադրանքները և բազմիցս արժանացել գովասանքների: 1943 թ. նոյեմբերին Գասպարյանը նորից ծանր վիրավորվել է և Բաքվի հոսպիտալում ապաքինվելուց հետո, որպես երկրորդ խմբի հաշմանդամ, գորացրվել: Վերադառնալով Մարտակերտի շրջան՝ շարունակել է մանկավարժական գործունեությունը, աշխատել որպես դպրոցի տնօրեն՝ սկզբում Մարաղայի, այնուհետև Թալիշի դպրոցներում: Մանկավարժական բեղմնավոր աշխատանքի համար 1948 թ. նրան շնորհվել է վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում: Բազմավաստակ մանկավարժը հանրապետական կարգի թոշակառու էր, շարունակում էր աշխատել որպես պատմության դասատու Չայլու գյուղի դպրոցում: Մահացել է 1988-ին³¹:

ԿԱՐՈ ՍՏԵՓԱՆԻ ԴԱՎԹԵԱՆԸ (1904-1985) ծնվել է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Ռշտունյաց գավառի Տափ-Մոսկուն գյուղում: Թուրք ցեղասպաններից մազապուրծ՝ 1915-ին մեծ դժվարությամբ հասել է Արևելյան Հայաստան, հանգրվանել Էջմիածնի, Դիլիջանի, Իջևանի, Թբիլիսիի, Կարսի, Լենինականի (այժմ՝ Գյումրի) որբանոցներում: 1924-ին ավարտել է Լենինականի «Պոլիգոնի» մանկատների կից երկրորդ աստիճանի աշխատանքային միասնական դպրոցի տասնամյա դասընթացը՝ մանկավարժական թեքումով: 1922-1925-ին դասավանդել է Լենինականի մանկատների կից տարրական դպրոցում: 1925-1927-ին աշխատել է ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Մեծ շեն, իսկ 1927-1930-ին նույն շրջանի Լյուլասագ (Հակոբ Կամարի, այժմ՝ Վարնկաթաղ) գյուղերի տարրական դպրոցներում՝ որպես ուսուցիչ և վարիչ: 1929-ին դասավանդել է Մարտակերտի միջնակարգ դպրոցում: 1930-1933-ին սովորել և ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետի մանկավարժության բաժինը: 1933-1934-ին աշխատել է Մարտակերտի օրինակելի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար: 1936-ին ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1934-1937-ին ստանձնել է Մարտակերտի օրինակելի միջնակարգ դպրոցի դիրեկտորի պաշտոնը: 1937-1939-ին աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում՝ որպես ուսուցիչ և ուսմասվար: 1939-1953-ին աշխատել է Շուշիի (1944 թ. օգոս-

³¹ *Աղասարյան Գ., Հովսեփյան Ռ., Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում (1941-1945), էջ 97-98:*

տոսից վերանվանված՝ Ստեփանակերտի) պետական ուսուցչական ինստիտուտում՝ որպես մանկավարժության (մինչև 9.09.1942 թ.), այնուհետև հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ (9.09.1942 թ.-31.08.1953 թ.)՝ երբեմն համատեղելով հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Պարբերաբար դասավանդել է նաև Ադրբեջանի հեռակա մանկավարժական ինստիտուտի ամառային դասընթացներում: 1948-ին Երևանի պետական համալսարանում «Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզի բարբառային քարտեզը» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1950-ին ստացել է դոցենտի կոչում: 1953-1958 -ին աշխատել է ԼՂԻՄ մարզօղկորթաժնում՝ որպես մեթոդկաբիներտի վարիչ: 1956-ին ստացել է հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում և պարգևատրվել պատվոգրով: 1958-1959-ին աշխատել է ԼՂԻՄ մարզօղկորթաժնում՝ որպես դպրոցական տեսուչ: 1966-ին տպագրել է «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունը: 1969-1985-ին դասախոսել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ: 1985-ին մայիսի 2-ին, 81 տարեկան հասակում, Կ. Ս. Դավթյանը Ստեփանակերտում հրաժեշտ է տվել երկրային կյանքին³²:

Կարո Դավթյանին հաջողվել է հմտորեն ու ներդաշնակորեն գուգորդել գիտությունն ու մանկավարժությունը: Նա իր հողվածներում արծարծել է գիտությանն ու կրթությանն առնչվող յազմաբնույթ հարցեր: Կ. Դավթյանը բացահայտել է 1950-ականներին տպագրված հայոց լեզվի դասագրքերի անհամապատասխանությունները, անվաբան հայտնել իր կարծիքը, կատարել որոշ ճշգրտումներ:

«Սովետական մանկավարժ»-ի 1955 թ. 7-րդ համարում տպագրված «Հայերենի նորմաների պահպանման և ճիշտ զարգացման համար» հոդվածում նա արձագանքել է Ե. Գալճյանի «Հայերենի լեզվական կանոնների կամայական խախտումների դեմ» հոդվածին, գտնելով, որ հայերենի լեզվական կանոնների ամեն մի խախտում պարբերական մամուլի խմբագրությունների և հրատարակչությունների կողմից առաջին հերթին բացասական ազդեցություն է թողնում դպրոցական ուսուցման վրա՝ ապակողմնորոշելով ուսուցիչներից շատերին, սովորողներին:

³² Հմմտ.՝ Կարո Ստեփանի Դավթյան (կենսամատենագիտություն), էջ 3-5:

Իսկ «Դիտողություններ «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույցի» կապակցությամբ» և «Բարձրացնել մայրենի լեզվի դասավանդման որակը մարզի դպրոցներում» (1965, նոյեմբեր) հոդվածներում Կ. Դավթյանն անդրադարձել է հայերենի ուղղագրության, շարահյուսության, ձևաբանության, ինչպես նաև հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի հետ կապված հարցերի լայն շրջանակին:

1970-ական թվականներին Կ. Դավթյանը հոդվածներ է գրել բնության շնորհները մարդուն ծառայեցնելու մասին, առաջարկել նպատակային օգտագործել Լիսագորի, Քոլատակի, Տումու՝ բուժիչ հատկանիշներով օժտված հանքային ջրերը: Մի ուրիշ հոդվածում («Ու՛ր է հայ կնոջ ամոթխածությունը») բացահայտել է ընտանիքի, ամուսինների փոխհարաբերությունների յուրօրինակ ընկալումը:

ՍԱԼԱԹ ԿԱՐԱՊԵՏԻ ԴԱՎԹՅԱՆ (ԱՅՌԻՖԵԿՑԱՆԸ) (1910-1996) ծնվել է Արևմտյան Հայաստանում: Մեծ եղեռնից մազապուրծ գոյատևել է մանկատներում, որտեղ և ստացել է կրթություն, այնուհետև՝ տարրական դասարանների դասատուի որակավորում: 1924 թվականին Հայկական ԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի որոշմամբ գործուղվել է ԼՂԱՄ-ում աշխատելու որպես ուսուցիչ: Սովորել է Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտում (1939-1941): Այնուհետև ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի պատմության հեռակա բաժինը: Աշխատել է Մեծշենի (1925-1927), Վարնկաթաղի (1927-1930) տարրական, Մարտակերտի օրինակելի միջնակարգ դպրոցներում և Մարտակերտի «Բարեկամություն» թերթի խմբագրատանը, որպես գրաշար, Ուսուցչի տան տնօրեն, Ստեփանակերտի համար 2 միջնակարգ դպրոցում, որպես պատմության ուսուցչուհի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՂԻԱՋԱՐԻ ԵՂԻԱՋԱՐՅԱՆԸ (1905-1977) ծնվել է Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի վիլայեթի Սպարկերտի գավառակի Սև-քար գյուղում, հողագործների ընտանիքում: Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով հայրենի հողից դեպի Անդրկովկաս գաղթելու ժամանակ ծնողները, մնացած բոլոր ազգականների հետ միասին, զոհվել են թուրք հանցագործների ձեռքից, իսկ Հարությունը, վիրավոր ու անօգնական վիճակում մնացել է պատերազմի դաշտում: Երկու օրից հետո այդ վիճակից նրան փրկել են օգնության հասած ռուսական զորքերը և տեղափոխել Երևան, որտեղ բուժվելուց հետո ընդունվել է Դիլիջանի որբանոց, որտեղ և սովորել է

մինչև IV դասարանը: 1917 թ. հոկտեմբերի վերջին գործող ռեժիմի դեմ ըմբոստանալու պատճառով, այդ ժամանակվա Դիլիջանի որբանոցների գլխավոր կառավարիչ Սամսոն քեկի հրամանով նրան, իր երկու ընկերների հետ միասին, հեռացրել են որբանոցից: Նրան օգնության ձեռք է մեկնել Իջևանի հիվանդանոցի բժիշկ Սարգիս Հովսեփյանը և տարել ու պահել իր տանը, որտեղ էլ առաջին անգամ հանդիպել է Ս. Շահումյանի հետ, որը 3 օր նրանց մոտ մնալուց հետո, գիշերով Իջևանի լեռներով անցել է դեպի Գանձակ: 1918 թ. աշնանը, նորից ընդունվելով Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի որբանոցում, տեղափոխվել է Կարս և տեղավորվել Ամերիկյան որբանոցում: Կարսում 1920 թ. մայիսյան ապստամբության ժամանակ կատարել է բոլշևիկ Ղուկաս Ղուկասյանի և բժիշկ Ինջիկյանի հանձնարարությունները: 1920 թ. Թուրքիայի կողմից Կարսը գրավելուց 4 ամիս հետո նրանց տեղափոխել են Ալեքսանդրապոլի մանկատունը և հենց այդ թվին էլ ընդունել կոմերիտիության շարքերը: 1925 թ., ավարտելով 10-ամյա դպրոցը, անմիջապես դուրս է եկել մանկատնից և մեկնել ԼՂԱՄ-ի Ջրաբերդի շրջանում աշխատելու ուսուցչական պաշտոնում: Դպրոցական աշխատանքների հետ միասին եռանդուն աշխատանք է տարել մշակութալուսավորչական և անգրագիտության վերացման ասպարեզներում: 1927-1932 թթ. բանդիտական խմբերի վերացման գործում եղել է առաջավորների շարքերում: 1931 թ. ԼԿԵՄ կենտկոմի հանձնարարությամբ առաջին անգամ Լեոնային Ղարաբաղում կազմակերպել է շրջանային ու մարզային պիոներական ճամբարներ: 1932 թ. ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանում: 1937 թ. այն ավարտելուց հետո Հայկական ԽՍՀ լուսավորության ժողկոմի գործուղմամբ աշխատել է երկամյա ուսուցչական ինստիտուտում և մանկավարժական ուսումնարանում: 1941-1943 թթ. ծառայել է Կարմիր բանակում, որից հետո 1943 թ. հունվարից մինչև 1949 թ. սեպտեմբերն աշխատել է Մարտակերտի ժողկրթության շրջանային բաժնում, որպես դպրոցական տեսուչ, որից հետո աշխատել է Մատաղիս և Մոխրաթաղ գյուղերի դպրոցներում՝ որպես ուսմասավար ու տնօրեն: 1943-ից ԽՍՀՄ անդամ էր: 1943 թ. Ադրբեյջանի Գերագույն խորհրդի կողմից արժանացել է վաստակավոր ուսուցչի կոչման: Պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով: Երկար տարիներ աշխատել է Մոխրաթաղի դպրոցում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹԵՎՈՍԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ (1908-2004) ծնվել է Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Ծնողներին կորցրել է վաղ հասակում, 1914 թ., համաշխարհային պատերազմի հենց առաջին օրե-

րին: Նրանք երկուսն էլ, հազարավոր անմեղ հայերի հետ միասին, դարձել են թուրք ցեղասպանների ու ռազմական հանցագործների զոհը: Ինքնակենսագրականում Հ. Մինասյանը գրել է. «Ինձ համար մինչև այսօր էլ անհայտ է, թե ճակատագրական ինչպիսի բերումով եմ ես կոտորածից ազատվել, ապա փոխադրվել Էջմիածին, ուր հանձնվել եմ Կովկասի հայոց բարեգործական ընկերության նորաբաց որբանոցի խնամքին³³»:

Մի առ ժամանակ անց այդ որբանոցը տեղափոխվել է Թբիլիսի: Որբանոցի գլխավոր տնօրենը մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էր: «Ահա թե ինչու 1905 թվականի սկզբից մինչև 1920 թվականի ամռան վերջն ապրելով Հայ բարեգործական ընկերության Թիֆլիսի Աբասաբաթսկայա հրապարակի շենքերից մեկում տեղավորված որբանոցում, մենք՝ որբերս, շրջապատված էինք իդեալական հոգատարությամբ: Ամեն կիրակի օր անմահ Թումանյանն իր կնոջ հետ միասին իրենց օրն անցկացնում էին մեզ մոտ՝ որբանոցում: Իմ հիշողությունից երբեք չեն ջնջվի այն երանելի օրերն ու ժամերը, երբ Թումանյանը երեխա դառած՝ մեզ հետ միասին խաղում էր որբանոցի շենքի դիմաց ձգվող հիանալի այգում»³⁴, - ինքնակենսագրականում գրել է Հ. Մինասյանը:

Հայաստանի առաջին հանրապետության կառավարության որոշումով Թբիլիսիի բոլոր որբանոցները տեղափոխվում են մայր Հայաստան: Հարյուրավոր որբերի հետ Կարս է տեղափոխվում նաև Հ. Մինասյանը: Կարսի որբանոցներում նա ականատես է լինում որբանոցի կառավարիչների ծեծին ու անասելի բռնություններին: Սովն ու համաճարակն էլ մյուս կողմից էին հաշվեհարդար տեսնում խեղճ ու անճարակ որբերի հետ: Թերևս այս ամենը կարելի էր տանել, բայց պատերազմի բոցերից պատահականորեն ազատված խեղճ որբերի գլխին մի նոր կրակ թափվեց: Քեմալական Թուրքիան, բոլշևիկյան Ռուսաստանի հետ դաշնակցած, զավթողական պատերազմ սանձազերծեց Հայաստանի դեմ:

Այդ դժնդակ օրերն այսպես են տպավորվել Հ. Մինասյանի հիշողության մեջ. «Անգոր լինելով ոչ միայն պաշտպան կանգնելու սնապարծորեն տեր դառած անպաշտպան մանուկներին, այլև մայր հողին, դաշնակցական բանակը պատերազմի հենց առաջին օրերին

³³Տե՛ս «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), ֆ. 41 (Սուրեն Աղաբեկի Կարապետյանի ֆոնդ), գ. 12, թ. 73:

³⁴Նույն տեղում:

լքում է Կարս քաղաքը, թողնելով հարյուրավոր որբերին գերության մեջ: Այստեղ՝ Կարսում, լինելով արդեն 12-ամյա պատանի՝ տեսնում և գիտակցում եմ, թե թուրք ջարդարարներն ինչ ահեղ դատաստան են տեսնում գերության մեջ մնացած հայերի հետ՝ չինայելով նույնիսկ ծերերին, կանանց ու երեխաներին»³⁵: Պատանի Հովհաննեսին անհայտ մնաց, թե այդ օրերին որտեղի՞ց Կարսում երևացին ամերիկացի միսիոներներն ու տեր կանգնեցին որբերին: 1921 թ. սկզբներին որբերին, որոնց թվում և Հ. Մինասյանին, ամերիկացիները տեղափոխել են Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) և տեղավորել «Պոլիգոնի» որբանոցներում: Այնուհետև, 1921 թվականի սկզբից մինչև 1924 թվականի հունիս Հ. Մինասյանի կյանքն անցել է «Պոլիգոնի» ամերիկյան որբանոցներում: 1924 թվականի ամռանը ավարտել է «Պոլիգոնի» միջնակարգ մանկավարժական ուսումնարանը՝ ստանալով կյանքի ուղեգիր տարրական դպրոցի ուսուցչի իրավունքով: 1924 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած, իր կյանքի ավելի քան 40 տարիները նվիրել է մանուկների դաստիարակությանը՝ անընդհատ աշխատելով Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում: Առաջաձորում է անցել ցեղասպանությունից մազապուրծ Հ. Մինասյանի կյանքի ամենաերջանիկ շրջանը՝ պատանեկությունն ու երիտասարդությունը: Ինքնակենսագրականում նա խոստովանել է, որ կոլտնտեսային գյուղի աճի ու վերելքի հետ էլ աճել ու առնականացել է նրա, որպես քաղաքացու և մանկավարժի, քաղաքական կերպարն ու հասարակական գիտակցությունը: 1942 թվականին, բարձր գնահատելով Հ. Մինասյանի հասարակական-մանկավարժական գործունեությունը, կառավարությունը նրան շնորհել է վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին, 1942 թվականի օգոստոսի սկզբներից մինչև պատերազմի հաղթական ավարտը, մասնակցել է գերմանական ֆաշիստների դեմ խորհրդային ժողովրդի մղած հերոսական մարտերին և պարգևատրվել Կարմիր աստղի, Փառքի երրորդ աստիճանի շքանշաններով ու մեդալներով: Մանկավարժական գործունեության համար արժանացել է «Պատվո նշան» շքանշանի: ԽՍՀՄ անդամ էր 1942 թվականի փետրվարից: 1965 թ. տեղափոխվել է Հայկական ԽՍՀ, նշանակվել Հրազդանի շրջանի Բջնիի միջնակարգ դպրոցի տնօրեն: 1970-ին տեղափոխվել և մինչև 1978 թ. աշխատել է նույն շրջանի Գյումուշի 8-ամյա դպրոցում: 1978-ին տնօրենի պաշտոնից թողնել է անցել և մինչև 1992 թ. աշխատել որպես

³⁵ Նույն տեղում, թ. 73-ի շրջերեսը:

ուսուցիչ: Հեղինակ է «Ինչպես զարգացնել սովորողների գրագիտական հմտությունները» (1956) գրքուկի³⁶:

ՄՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ (1915/16-2000) ծնվել է Արևմտյան Հայաստանում: Մինչև կյանքի վերջն այդպես էլ չիմացավ, թե հատկապես որ բնակավայրում է ծնվել, որտեղ են թուրքերը տանջամահ արել ծնողներին, ինչպես է ընկել Ալեքսանդրապոլի մանկատուն, ինչպես է որդեգրվել և մշտական բնակություն հաստատել Բաքվում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթություն: 1936թ. գորակոչվել է Կարմիր բանակի շարքերը: 1938-ին գորացրվելուց հետո ավարտել է հատուկ մանկավարժական դասընթացները և գործուղվել ուսուցչական աշխատանքի Մարտակերտի շրջանի դպրոցներում: 1940 թվականին նշանակվել է Մարտակերտի ժողկրթբաժնի տեսուչ, գլխավորել դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման մեթոդափափորումը: Այնուհետև երիտասարդ մանկավարժը նշանակվել է Լևոնարխի ռուսական դպրոցի տնօրեն: Մեկ տարի աշխատելուց հետո գորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, մասնակցել խորհրդաֆինանսական պատերազմին: Համապատասխան դասընթացներ անցնելուց հետո նրան շնորհվել է լեյտենանտի կոչում: Հայրենական մեծ պատերազմի սկզբին նա արդեն հայկական 409-րդ դիվիզիայի կապի դասակներից մեկի հրամանատարն էր: Կապավորի մեծ հմտությամբ է կատարել հրամանատարության մարտական առաջադրանքները, ապահովել անխափան կապ: Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով: Մի առ ժամանակ անց նշանակվել է 1216-րդ հատուկ հրանոթային գնդի հետախուզական դասակի հրամանատար: Հրամանատարության մարտական առաջադրանքները գերազանց կատարելու համար կապի դասակի հրամանատարը պարգևատրվել է Կարմիր աստղի երկրորդ շքանշանով: Մասնակցել է Կովկասի պաշտպանությանը, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Գերմանիայի ազատագրման համար մղված մարտերին: Ա. Մնացականյանը ռազմաճակատի առաջին գծում միշտ բարձր է պահել հայ սպայի կոչումը, ինչի վկայությունն են նրա կուրծքը զարդարած երեք մարտական շքանշանները, 15 մարտական ու հորեյանական մեդալները: Զորացրվելուց հետո Ա. Մնացականյանն ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը և շարունակել մանկավարժական աշխատանքը Մարտակերտի շրջանի դպրոցներում, մասնավորապես ռուսաց լեզու դասավանդել Լևոնարխի և Չայլու

³⁶Նույն տեղում, թ. 74-ի շրջերեսը:

բնակավայրերի դպրոցներում: 1988-ին Ա. Մնացականյանը մշտական բնակություն է հաստատել Երևանում³⁷:

ՆՇԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ (1908-1989) ծնվել է Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Իլիջա գյուղում: 1915-ին, երբ Նշանը յոթ տարեկան էր, նրա աչքի առաջ կոտորել են ծնողներին և հարազատներին: Նրան գտել են ռուս զինվորները, ուղարկել Մոսկվա հայկական ազգային կոմիտեի որբանոց: Որոշ ժամանակ անց ուղարկվել է Ալեքսանդրապոլ՝ Ամերկումի մանկատուն: 1917-1927 թթ. ապրել ու սովորել է այնտեղ: 1927-ին ավարտել է որբանոցի մանկավարժական թեքումով միջնակարգ դպրոցը, գործուղվել Լեռնային Ղարաբաղ՝ մանկավարժական աշխատանքի: Աշխատանքային գործունեությունը սկսել է Մարտունու շրջծողկրթաժնում՝ որպես դպրոցական տեսուչ, իսկ հետագայում՝ բաժնի վարիչ: 1941 թ. սեպտեմբերին զորակոչվել է Կարմիր բանակ, որպես քաղդել մասնակցել Հյուսիսային Կովկասի պաշտպանությանը, Կրասնոդարի երկրամասի ազատագրման մարտերին, որոնցից մեկում էլ վիրավորվել է: Ապաքինվելուց հետո նորից մեկնել է ռազմաճակատ: Մասնակցել է Բեսարաբիայի, Հարավ-սլավիայի, Հունգարիայի ազատագրական մարտերին: Զորացրվել է 1946-ին և վերադարձել Մարտունու շրջան, շարունակել մանկավարժական աշխատանքը Ծովատեղ, ինչպես նաև Կարմիր շուկա, Թաղավարդ, Հերիեր, Խերիսան գյուղերում: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, մի շարք մարտական ու հորեյանական մեդալներով³⁸:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանից եղեռնագարկ մեր հայրենակիցները ոչ միայն ուժ գտան դիմագրավելու որբանոցների և տարագրության փորձություններին, Հայրենական մեծ պատերազմի դժվարություններին, այլ նաև անձնական օրինակով դաստիարակեցին հայրենանվեր սերունդներ, որոնց ներկայացուցիչներից շատերն ակտիվորեն մասնակցեցին հայրենի Արցախի հայաշունչ ու հայկական պահելու, հայրենի եզերքի պաշտպանությանն ու ազատագրմանը, պետականության կերտմանը: Իսկ նրանց արժանի հետևորդները դեռ առաքելություն ունեն Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը վերականգնելու և անարգ թշնամուն արժանի հակահարված հասցնելու հիրավի համագրային գործում:

³⁷ **Աղասարյան Գ., Հովսեփյան Ռ.,** *Արցախի հայ ուսուցիչները Մեծ Հայրենականում (1941-1945)*, էջ 231-232:

³⁸ *Նույն տեղում*, էջ 251:

РЕЗЮМЕ

НАЧИНАТЕЛИ ДЕЛА ЗАЩИТЫ РОДИНЫ

МГЕР АРУТЮНЯН

Некоторые из западных армян-сирот, переживших геноцид, стали организаторами образовательной деятельности в Арцахе, были удостоены государственных наград и уважения общества. Они были преданны великому делу сохранения армянства в Арцахе, с огромной ответственностью занимались педагогической деятельностью и великолепно выполнили миссию по воспитанию и обучению молодого поколения, свой патриотический и гражданский долг. Принимая участие в Великой Отечественной войне, они на своем примере преподавали, вероятно, самый важный урок своим воспитанникам - быть всегда готовым к благородному делу защиты родины.

Ключевые слова: арменоцид, Западная Армения, сироты, детский дом, учитель, Великая Отечественная война, защита Родины, Арцах.

SUMMARY

THE PIONEERS OF THE MOTHERLAND DEFENSE

MHER HAROUTUNYAN

Some of the Western Armenian orphans, who survived the genocide, became the organizers of educational activities in Artsakh and were awarded state awards and the respect of society. They were loyal to the great work of the Armenian identity preserving in Artsakh engaged in teaching activities with a huge responsibility and executed their mission on education and training of young generation, their Patriotic and civic duty superbly. Taking part in the Great Patriotic War, they by their own example have taught probably the most important lesson to their pupils – always be ready for the noble task of protecting the Motherland.

Key words: Armenocide, Western Armenia, orphans, orphanage, teacher, Great Patriotic War, defense of motherland, Artsakh.

ԳԵՂԱՄ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՂԵՌՆԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Հոգվածում լուսաբանվում են արևմտահայ գրողների մտահոգությունները 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ծանր վիճակը և ջարդերը, ինչո՞ւ տեղի ունեցավ 1915 թվականի հայոց մեծ եղեռնը և եղեռնից հետո արևմտահայ գրողների մտահոգությունները սփյուռքահայությանը ամենակույ՝ ձուլման վտանգից փրկելու համար: Հոգվածում անդրադարձ է կատարվում հայ գրողների հայապահպանությանն ուղղված աֆորիզմներին և բանաստեղծություններին:

Բանալի բառեր՝ արևմտահայ, սփյուռք, գեղագիտական միտք, աշխարհընկալում, ռեալիզմ, թատրերկ, երգիծաբան, ընծա, ցեղասպանություն, ջարդ:

Հայ գրականությունը՝ Խորենացուց մինչև մեր օրերը, ունեցել է իր գոյության տարբեր ժամանակահատվածների աշխարհընկալումներին համապատասխանող գեղագիտական ըմբռումները, ինքնաճանաչման մղումներն ու առաջխաղացման միտումները, որոնցով արգասավորվել է մեր գեղարվեստական խոսքը:

Հայ գեղագիտական միտքը առավել բուռն զարգացում ունեցավ 19-րդ դարում, հատկապես այն շրջանից, երբ պայքար մղվեց ռեալիզմի հաստատման համար: Արևմտահայ գրականության մեջ ռեալիզմի պահանջը առաջինը արտահայտեց հանճարեղ պատանին՝ Պետրոս Դուրյանը, իր «Թատրոն կամ թշվառներ» թատրերկի մեջ, ապա, տեսական ավելի լայն հիմքով և խորությամբ՝ գեղագիտական ավելի մշակված ըմբռումներով, մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը, այնուհետև՝ ութսունական թվականների գրական-ռեալիստական շարժման գրեթե բոլոր մասնակիցները, Արփիարյանը, Գրիգոր Զոհրապը և Արշակ Զոպանյանը: Գրիգոր Զոհրապը 80-ական թվականների գրական շարժման ամենագործուն մասնակիցներից մեկն էր և գտնվում էր ռեալիզմի համար պայքարողների առաջին շարքում:

Օրինակ, նրա «Գիտությունն ու արվեստը ամեն վայրկյան կնորոգեն ու կվերաշինեն այս աշխարհը» ասված դիպուկ խոսքը համամարդկային արժեք ու նշանակություն ունի:

Կամ նրա՝ «Մեր նախնիքը տառերուն գյուտին մեջ հրաշք մը տեսած են, առիկա նկատած են ընծա մը, միակ ընծան այն ազգին, որուն այնքան աղետներ տված է:

...Երբ ուշադրությամբ հետևինք հայ պատմության, կը տեսնենք, որ իր գիրի գյուտը հայուն գոյության ամենամեծ ազդակ եղած է» խոսքերը անգնահատելի ու ազգապահապան մեծ արժեք կարող է ունենալ հայ մարդու համար:

Ցեղասպանությունը իր արնոտ կնիքը դրեց հայ ժողովրդի ողջ կյանքի և մշակույթի վրա: Ըստ էության ընդհատվեց հայկական մշակույթի մի թևի՝ արևմտահայ մշակույթի զարգացումը: Բնքը՝ արևմտահայությունը, փաստորեն վերացավ: Նրա այն հատվածները, որոնք կարողացան փրկվել ջարդերից և ապաստան գտնել Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում, այլևս ոտքի տակ չունեին այն ավանդույթները, որոնք ձևավորվել էին դարերի ընթացքում սեփական հողի վրա: Այդ խլյակները պետք է ապրեին օտար միջավայրերում, հարմարվեին դրանց՝ անխուսափելիորեն կորցնելով իրենց ազգային ազատագրական ավանդույթները, ի վերջո իրենց ազգային դեմքը:

Սկզբում հայության կենդանի մնացորդները դեռ հույս ունեին վերադառնալու հայրենի երկիր: Եղեռնից հետո առաջին երկու տասնամյակներում սփյուռքն ապրում էր բուռն մշակութային կյանքով: Ստեղծվում էին դպրոցներ, հիմնադրվում թերթեր, հանդեսներ, գրվում էին գեղարվեստական գործեր, որոնք պատվավոր տեղ գրավեցին հայ գրականության մեջ: Մի պահ իսկական վերածննդի իսկական տպավորություն կարելի էր ստանալ այդ աշխուժությունից:

Այդ տարիներին դեռ կենդանի էին արևմտահայ գրականության ավանդները, արևմտահայ գրողներից մի քանիսը (Վահան Թեքեյան, Երվանդ Օտյան, Հակոբ Օշական և ուրիշներ) ողջ էին մնացել ու շարունակում էին ստեղծագործել: Ասպարեզ եկավ երիտասարդ գրողների մի ողջ սերունդ, որը հիմնվելով առաջին հերթին արևմտահայ գրականության հարուստ ավանդույթների վրա, նոր գրականություն էր ստեղծում: Այդ գրականությունը այլևս դժվար էր իսկական իմաստով արևմտահայ համարել, որովհետև այլևս արևմտահայություն չկար, Արևմտյան Հայաստան չկար: Նա ոչնչացվել էր, արևմտահայության մնացորդները դարձել էին սփյուռքահայեր, ցրվել տարբեր երկրներում: Նոր պայմաններ էին, նոր հոգեբանություն:

Այդ նոր գրականության մեջ հստակորեն զանազանվում էր երկու ուղղություն: Առաջինի նպատակը կորցրած հայրենիքի պատկերի վերաստեղծումն էր, իսկ երկրորդը սփյուռքահայությանը՝ հատկապես երիտասարդ սերնդին, հայ պահելու, ձուլվելու ամենակուլ վտանգից հնարավորինս հեռու պահելու: Դա մի կողմից կարող էր ժամանակավորեպ թվալ, այդ երկիրը այլևս չկար, մարդկային այդ հարաբերություններն արդեն քայքայվել էին, ուրեմն ի՞նչ իմաստ ունեւր վերակենդանացնել դրանք գրականության մեջ: Բայց իրականում այդ գրականությանը շատ կարևոր դեր էր վիճակված: Արևմտյան Հայաստանն ու արևմտահայությունը վերացան՝ չնայած Արևմտյան Հայաստանը մնում էր իբրև աշխարհագրական միավոր, թեև թուրքերը անում էին և անում են ամեն ինչ՝ այդ անունը մոռանալ տալու համար, բայց նրանք գոյություն էին ունեցել հազարավոր տարիներ, մասն էին կազմել հայության կյանքի և պատմության, և արևմտահայության այժմ արդեն գուտ հոգևոր պատկերը պետք է պահպանվեր իբրև մեր ազգային դեմքի մի կարևորագույն մաս: Ահա այս իմաստով արևմտահայ և սփյուռքահայ գրողները, որոնք պատկերում էին գյուղը և առհասարակ անհետացած արևմտահայ կյանքը, շատ կարևոր գործ էին անում հայկական ազգային ինքնությունը պահպանելու համար:

Այս ուղղությունը սովորաբար անվանում են **Կարոտի գրականություն**: Անվանման մեջ մեծ ճշմարտություն կա: Հայրենիքը կորցրած մարդիկ չէին կարող մոռանալ այն արժեքները, որոնցով ապրել էին իրենց հայրերն ու պապերը: Նրանք պահպանում էին անցած կյանքի այդ բարձր հիշատակները: Կարոտի գրականությունը տվեց մի շարք տաղանդավոր հեղինակներ: Այդ գրողներից ամեն մեկը մի գավառի ծնունդ էր և ստեղծում էր իր հայրենի գավառի սովորույթների պատկերը, մարդկանց կերպարները: Այդ գրողներից էին, օրինակ՝ Համաստեղը, Հակոբ Մնձուրին, Հրաչ Զարդարյանը, Վազգեն Շուշանյանը, Հակոբ Օշականը, Հակոբ Կարապենցը, Կոստան Զարյանը, Վահան Թեքեյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Մուշեղ Իշխանը, Նիկողոս Սարաֆյանը, Զահրատը և շատ ուրիշներ: Այս գրողները ծնված լինելով կամ Արևմտյան Հայաստանում կամ որևէ այլ երկրում, իրենց գործերը նվիրել են գաղթականությանը, սփյուռքահայ լինելու ողբերգությանը, կորսված հայրենիքի պատկերմանը: Օրինակ, Վազգեն Շուշանյանն իր «Երկիր հիշատակաց» քնարական պոեմում կարծես պատասխանում է Կարոտի գրականության քննադատներին՝ իր բախտակիցներին ասելով. «Հիշատակը մեր միակ ապավենն է, հիշեցեք»: Հուսահատության ու հիասթափության ծանր օրերին իրենց

բնօրրանից գրկված մարդիկ պետք է դիմեն հուշերի օգնությանը: Բայց այդ հուշերն իրենք ողբերգական էին:

Այստեղ, կարծում եմ, տեղին է մեջբերել մարգարեական Պարույր Սևակի հզոր խոսքը. «Ամենահզոր բանը հիշողությունն է. պետք է ժողովել մեր փշուր-փշուր հուշերը և գործել դրանց պարտադրող օրենքներով»: Իսկ ազգի հիշողությունը մեծամասամբ պայմանավորված է նրա գրավոր հիշատակարաններով, որպիսին են գրողների ստեղծած լավագույն գործերը, հատկապես նրանց ազգապահպանության ուղղությունը:

Սփյուռքահայության առաջին սերունդների մեջ կարոտը հայրենի երկրի, Հայաստանի նկատմամբ շատ ուժեղ էր: Օրինակ, Մուշեղ Իշխանի «Հայաստան» վերնագրով պոեմը հայրենասիրության ամենաուժեղ արտահայտություններից մեկն է հայ գրականության մեջ: Նրա «Քաղցր է երդիք մ'ունենալ» բանաստեղծության մեջ շատ հուզիչ քառատող կա.

*«Ըլլաս գիտուն, թե տգետ, մեծահարուստ, թե աղքատ,
Ամենուրեք, ամեն ժամ, բայց օրհասիդ մանավանդ
Երբ տենչաս ձեռք մը ընտանի, լուռ աղոթող մը քու տեղ
Եվ աչքիդ մեջ մահաստվեր՝ աչքեր տամուկ ու բոցեղ՝
Քաղցր է երդիք մ'ունենալ»:*

Հայրենի տուն ունենալը համամարդկային երազանք է, բայց Ցեղասպանությունը վերապրած, հայրենիքից գրկված հայ մարդկանց այդ երազանքը շատ ավելի բնորոշ էր:

Այսօր սփյուռքում հայերեն գրող բանաստեղծները և ընթերցողները պակասում են: Այսպիսին է իրերի բնական ընթացքը՝ սփյուռքում հայությունը կորցնում է իր լեզուն և, ուրեմն՝ նաև գրականությունը: Հայ մարդիկ սկսում են գրել իրենց ապրած երկրի լեզվով:

Եղեռնին զոհ գնացին հանճարեղ գրողներ Գրիգոր Զոհրապը, Միամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը, Արտաշես Հարությունյանը և շատ ու շատ ուրիշները: Աստված նրանց հոգին լուսավորե:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յափունջյան Ա., Արիստակեսյան Ռ., Արևմտահայ բանաստեղծներ, Երևան, «Լույս», 1982, 272 էջ:
2. Անանյան Գ., Հովհաննիսյան Ա., Հայ գրականության քրեստոմատիա, Երևան, «Լույս», 1992, 703 էջ:

3. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և ցեղասպանության պատմություն, հատոր երկրորդ, գիրք առաջին, Երևան, 2001, 566 էջ:
4. Հովհաննիսյան Ն., Հայրենիքի գաղափարաբանությունը և ցեղասպանությունը խորհրդահայ գրականության մեջ, Ստեփանակերտ, 2018, 320 էջ:
5. Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, 401 էջ:

РЕЗЮМЕ
ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ ЗАПАДНОАРМЯН
ДО И ПОСЛЕ ГЕНОЦИДА
ГЕГАМ МИКАЕЛЯН

Статья иллюстрирует озабоченность западно-армянских писателей тяжелыми условиями, в которых оказались армяне в Османской империи в конце 19-го века, погромами, имевшими место в 1915 г., обеспокоенность западно-армянских писателей о спасении армянской диаспоры от всепожирающей ассимиляционной опасности до и после геноцида.

В статье приводятся афоризмы и стихи армянских писателей, направленные на сохранение армянского народа.

Ключевые слова: *западноармянский, диаспора, геноцидная задумка, мировосприятие, реализм, театральное представление, сатирик, подарок, останки, геноцид.*

SUMMARY
WESTERN ARMENIAN LITERARY LIFE BEFORE
AND AFTER THE GENOCIDE
GEGAM MIKAYELYAN

The article illustrates` the western- armenian writers concerns about the difficult conditions that were facing armenians in Ottoman Empire at the end of the 19th century ,the pogroms that took place in 1915,the Western- armenian writers concerns about the saving of the armenian diaspora from the most devouring danger of assimilation before and after the genocide.

The article references the aphorisms and poems of Armenian writers directed to the preservation of Armenian Nation.

Key words: *Western Armenian, diaspora, aesthetic thought, worldview, realism, performance, satirist, donative, genocide, massacre.*

ԱՅԼԱԴԱՎԱՆ ԵՎ ԾՊՏՅԱԼ
ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ծպտյալ և այլադավան հայերի թեման նախորդ տասնամյակում եղել է թուրքական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Նրանք ներկայացվում էին որպես սպառնալիք՝ ուղղված Թուրքիայի ամբողջականությանը, բայց և այնպես թուրքական որոշ պարբերականներ դրական վերաբերմունք են արտահայտում նման հայերի նկատմամբ՝ ներկայացնելով նրանց պատմությունների ողջ ողբերգականությունը:

Նշենք, որ իսլամացված կամ ծպտյալ հայերը թուրքական բռնապետական քաղաքականության արդյունք են: Մարդկանց պարտադրվել է ուրանալ իրենց կրոնը, ազգությունը, լեզուն: Մրանք լուռ և շարունակվող վկայություններն են օսմանյան բռնապետության: Միննույն ժամանակ, այս մարդիկ և նրանց սերունդներն անվիճելի ապացույցն են Հայոց ցեղասպանության, քանի որ ցեղասպանության կանխարգելման ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 5-րդ կետը հստակ փաստում է, որ ցեղասպանություն է համարվում էթնիկ կրոնական մի խմբի երեխաներին մեկ այլ էթնիկ կրոնական խումբ տեղափոխելը: Բսկ ցեղասպանության տարիներին տասնյակ հազարավոր հայ որբ երեխաներ բռնությամբ իսլամացվել են, և այսօր մենք գործ ունենք նրանց սերունդների հետ:

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, այլադավան հայեր, ծպտյալ հայեր, ուժացում, միգրանտներ, իսլամ, հայատյացություն, բռնի կրոնափոխություն, էթնիկ ինքնություն:

Թուրքական պատմագրությունը և քարոզչությունը՝ ձգտելով մերժել Հայոց ցեղասպանության իրողությունը, ամենից առաջ շահարկում են ժողովրդագրական տվյալները: Խնդիրը մեկն է՝ ապացուցել, որ Օսմանյան կայսրությունում 1,5 մլն. հայ ոչնչացվել չէր կարող, քանի որ այդքան հայ Թուրքիայում չէր բնակվում: Է. Քարալը, մերժելով Օսմանյան տարածքներում Հայաստանի գոյությունը, նշում է, որ «Կայսրությունում ձևավորված էին հայերի մի քանի կուտակումներ

Ստամբուլում և Անատոլիայի արևելյան և հարավային մասում, որտեղ նրանք մեծամասնություն չէին»: Դեռ հնուց Օսմանյան կառավարողները ձգտել են կայսրությունում մահմեդականություն դավանող և թուրքալեզու բոլոր ազգերին ներկայացնել իբրև թուրք: Օսմանյան կայսրությունում ստեղծվել էր վիճակագրական մի այնպիսի շփոթ, որ անհնարին էր դարձնում երկրի ազգային կազմի վերաբերյալ նույնիսկ մոտավոր թվեր իմանալը: Մինչ օրս էլ Թուրքիայում գործածվում են քրիստոնյաներ և մահմեդականներ հասկացությունները¹:

Հայերի ուծացում տեղի է ունեցել Օսմանյան կայսրության ամբողջ ընթացքում: Ճիշտ է, զարգացման մակարդակի տարբերությունները դանդաղեցնում էին այդ գործընթացը, սակայն թուրքերի հետ սերտ շփումները, խառնամուսնությունները, բռնի կրոնափոխությունը, կրոնափոխվելու միջոցով պատիժներից կամ այլևայլ դժվարություններից ազատվելն ու արտոնություն ստանալը և այլն նպաստում էին հայերի ուծացմանը: Եվ քանի որ հպատակ ժողովուրդների թուրքացումը հարյուրամյակների պատմություն ունեցող պետական քաղաքականություն էր, ինչպես նկատում էր Կոլլուբակինը, «Թուրքերի զգալի մասը, գուցե կեսից ավելին, ունի այլ ծագում»:

Ստորև ներկայացնում ենք Մարդաբանական գիտությունների թեկնածու (Օքսֆորդի համալսարան) Հրակ Փափազյանի զեկույցից կարևոր փաստեր «Հայերն ու այլ հայերը Թուրքիայում» թեմայից:

Զեկույցը ներկայացվել է «Հրանտ Դինք» հիմնադրամի և Համազգային հայ կրթական և մշակութային միության ջանքերով՝ 2016թ. հոկտեմբերի 7-8-ին Ստամբուլում կազմակերպված «Հայկական ինքնության քննական մոտեցումները 21-րդ դարում. խոցելիություն, առաձգականություն, փոխակերպություն» խորագրով գիտաժողովի ընթացքում:²

Հրակ Փափազյանի կարծիքով՝ Թուրքիան և հատկապես Ստամբուլը, ժամանակակից հայ ինքնության ուսումնասիրության համար եզակի վայր է, հաշվի առնելով «հայկականության պատկերի» աճող բազմազանությունը՝ հատկապես վերջին տասնամյակների ընթացքում: Այդպիսով, նա փորձում է ներկայացնել, իր բնութագրամբ՝ «ներկայում Թուրքիայում բնակվող երեք «տեսակի» հայերին», Թուրքիայի ավանդական հայ քրիստոնյա փոքրամասնության ներկայացուցիչներին հայտնի Համայնքին, Թուրքիայի մահմեդական

¹ Պողոսյան Ս., *Հայոց ցեղասպանության պատմություն 1*, Երևան, 2008:

² CIVILNET 22 Հունիս, 2017:

հայ քաղաքացիներին (իրենց ներքին ճյուղավորումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային միգրանտներին: Հրակ Փափազյանն այնուհետև վերլուծում է գաղափարական, խորհրդանշական և զգացմունքային այն հիմնական սյուները, որոնց վրա հիմնվում է յուրաքանչյուրի հայկական ինքնությունը: Վերջում նա քննարկում է այս երեք խմբերի միջև առկա հարաբերությունները, որոնք միմյանց հետ շփվելով՝ երբեմն իրար հետ հակասության մեջ են մտնում:

Քրիստոնյա հայ համայնքը

Թուրքիայի քրիստոնյա հայ քաղաքացիների թիվն այսօր, տարբեր տվյալներով, 60-70 հազար է գնահատվում: Նրանց ավելի քան 90 տոկոսը բնակվում է Ստամբուլում, որտեղ ունեն բազմաթիվ գործող եկեղեցիներ, տարրական և միջնակարգ դպրոցներ, մի քանի թերթեր ու պարբերականներ: Այս խմբի անդամների հայկական ինքնության կարևորագույն տարրերից մեկը թերևս քրիստոնեության հանդեպ հավատարմությունն է՝ հատկապես Հայ Առաքելական եկեղեցուն: Ըստ էության, կարող ենք նույնիսկ պնդել, որ այս խմբի անդամների համար հայկականությունը էթնոկրոնական ինքնություն է, այլ ոչ թե զուտ էթնիկական:

Շատերի համար, ում հետ ես հանդիպել ու զրուցել եմ, հայ լինելը ինքնըստինքյան ենթադրում է քրիստոնյա լինել: Շատերն այդ երկու եզրերը նույն իմաստով են օգտագործում: Այն հարցին, թե «Նա մուսուլման է», ոմանք պատասխանում էին՝ «Ոչ, նա հայ է»: Այն հարցին, թե ի՞նչ կրոնի են պատկանում, ուրիշները պատասխանում էին՝ «Ես հայ եմ»: Ոմանք, բայց քչերը, նույնիսկ չվարանեցին հայկականությունը դասել կրոնի շարքին, իսկ շատ ուրիշներ, որոնք կարծում էին, թե այն պետք է դասել ազգային կամ էթնիկական կատեգորիային, այնուամենայնիվ, հայտնեցին, որ «մեր դեպքում դժվար է և նույնիսկ սխալ է տարանջատել այդ երկու հասկացությունները»:

Լոզանի պայմանագրի համաձայն՝ Թուրքիայի Հանրապետությունը երկրի ներսում ճանաչում է միայն կրոնական և ոչ թե էթնիկ կամ ազգային փոքրամասնություններին, հայերը պաշտոնապես ընկալվում էին նաև որպես կրոնական համայնք, որը սահմանափակվում է հայկական եկեղեցու անդամ լինելով: Այսպիսով, բացի այն բանից, որ մինչև որոշակի շրջան հայերի ինքնությունը հաստատող փաստաթղթի, կրոնի բաժնում «Ermeni» (հայ) բառն էր նշվում, ավելի գործնական առումով՝ եկեղեցին ևս դարձել էր հայկականության երաշխավորը:

Այն դարձել էր մի կազմակերպություն, որի հովանու ներքո հնարավոր էր կազմակերպել մշակութային և հասարակական միջոցառումներ: Ընդհանուր վախի և զգուշավորության մթնոլորտում եկեղեցին «այն վայրն է, ուր հայերը կարող են անվտանգ հանդիպել և խոսել միմյանց հետ»:

Միգրանտները

1991 թ. Հայաստանի անկախացումից հետո հայերը շարունակաբար տնտեսական պատճառներով գաղթել են Թուրքիա, նրանցից շատերն այստեղ ապօրինի են ապրում և աշխատում: Նրանց հայկական ինքնությունն ամեն ինչից առաջ խարսխված է իրենց հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության վրա՝ նյութական, էմոցիոնալ և գաղափարական կապերով հանդերձ: Այդ իրողությունն ընկալելու համար բավական է տեսնել միգրանտների երեխաներին ընդունող ոչ պաշտոնական դպրոցը կամ նույնիսկ դրա ֆեյսբուքյան էջը: Դպրոցում աշակերտները կրթություն են ստանում ըստ Հայաստանի պաշտոնական կրթական ծրագրի, որովհետև ծնողներն ուզում են, որ նրանք հետագայում կարողանան շարունակել ուսումը Հայաստանում: Հայկական ազգային դրոշը զարդարում է դպրոցի պատերը, իսկ Հայաստանի Անկախության օրը և Հայոց բանակի օրը նշվում են թատերական ներկայացումներով:

Ուսուցիչները հետևում են հայաստանյան լուրերին, դասամիջոցներին խոսում են Հայաստանի քաղաքականությունից կամ պարզապես այնտեղ սպասվող եղանակի մասին: Ադրբեջանի և դե ֆակտո անկախ Լեռնային Ղարաբաղի հայկական պետության միջև 2016 թ. տեղի ունեցած ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին հայկական հայրենասիրական երգեր էին նվագում դպրոցում, ուսուցիչներն էլ իրենց մտահոգությունն էին հայտնում իրավիճակի վերաբերյալ: Այդ օրերին մեկ այլ ծանոթ ասաց, որ այլևս չէր կարող Թուրքիայում ապրել, որովհետև արդեն զգում էր, որ պետք է գնա Հայաստան և իր հարազատների, ընկերների, հայրենակիցների հետ լինի: Իմ հանդիպած միգրանտներից շատերը հայտնեցին, որ պատրաստ են հայրենիք վերադառնալ, եթե բավարար ֆինանսական միջոցներ ունենան:

Թուրքիայի մահմեդական հայ քաղաքացիները

Մինչ որոշ հետազոտողներ, լրագրողներ կամ քաղաքական գործիչներ խոսում են հարյուր հազարավոր կամ միլիոնավոր մահմեդական հայերի մասին, ես նախընտրում եմ նման թվեր չնշել, մտածելով, որ «իսլամացած հայերի ժառանգների» և «մահմեդական

հայերի» միջև էական տարբերություն կա: Երբ ես խոսում եմ մահմեդական հայերի մասին, նկատի չունեմ բոլոր իսլամացած հայերի ժառանգներին, այլ ավելի շուտ միայն նրանց, ովքեր իրենց հայ են ներկայացնում, միայն նրանց, ովքեր գիտակցաբար և սոցիալապես հայ են:

Իմ հանդիպած մահմեդական հայերը տարբեր պատմական և սոցիալ-մշակութային միջավայրերից են գալիս. ոմանք սուննի միջավայրից են գալիս, ուրիշներ մեծացել և ապրել են ալեքիական միջավայրում, օրինակ՝ Դերսիմից եկողները, որոնք սովորաբար իսլամի հետ ոչ մի կապ չունեն՝ բացի նրանից, որ իրենց անձնագրերում նշված է մահմեդական լինելու մասին, ոմանք քրդական, ոմանք թուրքական մշակույթներում են մեծացել, ոմանց նախնիները մահմեդականություն են ընդունել 1915 թ. Ցեղասպանության ընթացքում, ուրիշների նախնիները կրոնափոխվել են ավելի վաղ՝ ինչպես համշենցիները:

Ի տարբերություն վերոհիշյալ մյուս երկու խմբերին՝ մահմեդական հայերն իրենց հայ են զգում, չնայած հայ ինքնությունը սահմանող ու ձևավորող պետական կամ կրոնական համակարգերի անմիջական ազդեցության տակ չեն գտնվում: Ինստիտուցիոնալ կառույցների բացակայության պայմաններում, ինչպիսիք են հայ եկեղեցին կամ հայկական պետությունը, այս խմբի համար հայ լինելը հետահայաց՝ դեպի անցյալ գործընթաց է: Սա նշանակում է, որ նախ պետք է որպես իրողություն ընդունել, որ մեկը կարող է հայ լինել, որովհետև նրա նախնիները հայ են եղել, և որ նա փորձում է հետ բերել բնաջնջման և ուժացման շարունակական քաղաքականության արդյունքում կորցրած ինքնությունը:

Քրիստոնյա հայերն ու միգրանտները, ինստիտուցիոնալ մարմիններ ունեն, որոնք նրանց համար ստեղծում են որպես հայ ապրելու և մտածելու գործնական ու խորհրդանշական-գաղափարա-խոսական միջոցներ, մինչդեռ Թուրքիայի այս ոչ քրիստոնյա հայերը միայն կորցրած անցյալ ունեն, որի վրա ուզում են հիմնել ու կառուցել իրենց հայկականությունը>>:

Վաշինգտոնի «Ուլիթման» համալսարանի պատմության դասախոս, պատմաբան Էլիզ Սեմերջյանը «Ամերիկայի ձայն»-ին տված հարցազրույցում նշում է, որ Թուրքիայում բնակվող, իրենց ինքնությունը թաքցնող շատ հայերի համար կարևոր դեր է խաղացել Հրանտ Դինքի կերպարը: «Նրանց պատմությունները շատ հետաքրքիր են, այս մարդիկ, վախենալով իրենց ինքնությունը բացահայտել, այդու-

հանդերձ, փորձել են պահպանել իրենց նախնիներից եկած ավանդույթները, խոհանոցը, նրանցից ոմանք նույնիսկ կնքվելու որոշում են կայացրել»³:

Արևելագետ Ռուբեն Մելքոնյանը իր ուսումնասիրությունում ներկայացնում է տվյալներ Թուրքիայում արաբացած և ծպտյալ հայերի վերաբերյալ, ստորև ներկայացնում ենք նրա վերլուծությունը⁴: Ըստ նրա. «Այլադավան եւ ծպտյալ հայերի թեմայի ուսումնասիրությունն ի հայտ է բերում մինչ օրս շատ քիչ հայտնի եւ միեւնոյն ժամանակ հետաքրքիր մանրամասներ: Հանրահայտ փաստ է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ որոշ հայեր ընդունել են իսլամ՝ կոտորածից եւ աքսորից փրկվելու համար, եւ ներկայումս Թուրքիայում կան քրդացած, թուրքացած հայեր, որոնց մի մասն իրեն արտաքուստ է միայն այդպէս ներկայացնում: Սակայն ծպտյալ եւ իսլամացած հայերի թեմայի շրջանակներում գրեթէ չի լուսաբանվել եւ շատերի համար անհայտ է այն իրողությունը, որ ներկայիս Թուրքիայում ապրում են նաեւ հազարավոր արաբացած հայեր»:

Թուրք պատմաբան Սալիմ Ջյոհջեն նշել է, որ հայերը ոչ միայն քրդացել կամ թուրքացել են, այլև արաբացել: «Սղերթում, Հաթայում (Ալեքսանդրետ), Ուրֆայում, Մարդինում բնակվող հայերն արաբացել են եւ այսօր արաբախոս են»,– հայտարարել է նա: Միննոյն ժամանակ Ջյոհջեն նշում է, թե Թուրքիայում կան նաև ասորացած հայեր: Ակնհայտ է, որ թուրքական պետական տարբեր օղակներ, վերլուծական, հետազոտական կենտրոններ զբաղված են ծպտյալ և իսլամացած հայերի մասին նոր տվյալներ ձեռք բերելու գործով: «Աքսիոն» հանդեսում հրապարակվել են ներկայումս Թուրքիայում բնակվող ծպտյալ հայերի բնակության վայրերի, թվաքանակի մասին տվյալներ, ինչպէս նաև նշվում է, թե նրանք պաշտոնապէս որ ազգի կամ կրոնական համայնքի ներկայացուցիչներ են համարվում: Հետաքրքրական է, որ հենց թուրքական հանդեսի տեղեկության համաձայն՝ այդ տվյալներն անընդհատ փոփոխվում են, քանի որ աշխատանքները ներկայումս էլ շարունակվում են: Ստորև ներկայացվող ցուցակում, որը վերցված է «Աքսիոն» հանդեսից, հանդիպում են նաև տվյալներ, որոնք ցույց են տալիս, թե որ շրջաններում կան արաբացած հայեր:

³ Մխիթարյան Բ., Մարտ 20, 2015, «Ամերիկայի Շայն» <https://www.azatutyun.am/>:

⁴ Մելքոնյան Ռ. /<http://www.noravank.am> 27.09.2007:

ՔԱՂԱՔԸ	ԾՊՏՅԱԼ ԹԻՎԸ	ՀԱՅԵՐԻ «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
Դիարբեքիր	1000 ընտանիք	քուրդ, ասորի, ալեւի
Մալաթիա	3655 ընտանիք	քուրդ-ալեւի
Կեսարիա	5000 ընտանիք	թուրք
Էյլազիզ	1000 ընտանիք	քուրդ, ալեւի
Վան	4000 ընտանիք	քուրդ
Թունջելի	2000 ընտանիք	քուրդ-ալեւի
Շանլուրֆա	3500 ընտանիք	քուրդ, արաբ
Սղերթ	1200 ընտանիք	արաբ, քուրդ
Հաթայ (Ալեքսանդրետ)	1100 ընտանիք	արաբ
Բիթլիս	200 ընտանիք	քուրդ
Էրզրում	3000 ընտանիք	քուրդ, ալեւի, թուրք
Երզնկա	1300 ընտանիք	ալեւի, քուրդ
Մեքաստիա	2000 ընտանիք	քուրդ, ալեւի
Մարդին	1500 ընտանիք	արաբ
Քահրաման		
Մարաշ	3000 ընտանիք	քուրդ, ալեւի
Ադրյաման	1600 ընտանիք	քուրդ
Ադանա	2000 ընտանիք	քուրդ, արաբ, ալեւի

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, արաբացած հայերը, ըստ թուրքական աղբյուրների, բնակվում են Սղերթի, Հաթայի, Շանլուրֆայի, Մարդինի և Ադանայի շրջաններում: Մակայն, այնուամենայնիվ, հետաքրքրական է այն հարցը, թե ինչու պետք է հայերը իրենց կյանքը փրկելու համար, իսլամ ընդունելուց հետո հանդես գային որպես արաբներ և ոչ թե քրդեր կամ թուրքեր: Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներին սահմանակից շրջաններում հայերի արաբանալը թերևս կարելի է պայմանավորել արաբական ցեղերի հետ սերտ շփումներով, ինչն էլ ստիպել է այդ տարածքների հայերին կոտորվելուց խուսափելու համար արաբանալ: Մակայն այս խնդրի վերաբերյալ այլ հավաստի աղբյուրների և անձնական դիտարկումների արդյունքում ձեռք բերված փաստերը որոշակի հարցեր են առաջացնում: Մասնավորապես, արաբացած հայեր կան ոչ միայն նշված վայրերում, այլև, որքան էլ զարմանալի է, Սասունի, Մուշի գյուղերում, և այս մասին թուրքական աղբյուրները

լռում են: Ի տարբերություն այլ շրջանների, այս վայրերում «ոյնմե» (հավատափոխ) ասելով՝ նկատի են ունենում ոչ միայն քրդացած հայերին, այլև արաբացածներին: Տեղի բնակիչները շատ լավ են ճանաչում միմյանց, և գրեթե բոլորը գիտեն արաբացած և արաբախոս հայերի իրական էթնիկ պատկանելության մասին, ինչպես նաև գիտեն, թե ովքեր են իրականում քրդացած հայեր, ովքեր՝ թուրքացած և այլն: Ի վերջո, հենց արաբացած հայերը չեն ժխտում իրենց հայկական ծագումը, չնայած չի էլ կարելի ասել, թե շատ բացահայտ են դա ընդունում: Հետաքրքիր է, որ արաբացած հայերը բնակվում են նախկին հայկական գյուղերում, օրինակ՝ Սասունի Մճկեղ գյուղը ներկայումս արաբացած հայերով է բնակեցված, բացի այդ, նրանք գիտեն բոլոր հայկական եկեղեցիների, սրբավայրերի, գերեզմանատների տեղերը: Հենց արաբացած հայերի խոստովանությամբ՝ իրենք այդ վայրերի բնիկների ժառանգներն են: Եթե սա հիմք ենք ընդունում ու հաշվի առնում, որ դրանք նախկին հայկական գյուղեր են, ապա պարզ է դառնում, որ արաբացած հայերին կարելի է համարել այդ գյուղերի նախկին հայ բնակչության սերունդներ:

Սակայն արաբացած հայերը Թուրքիայում ապրող այլ կրոնափոխ հայերի խմբերից՝ մասնավորապես քրդացածներից, ունեն էական տարբերություններ. այսպես, օրինակ՝ արաբացած հայերը, ի տարբերություն քրդացածների, վայելում են թուրքական պետության որոշակի վստահությունը: Այս հանգամանքը, կարծում ենք, կարող է օգնել՝ հասկանալու համար Թուրքիայում արաբացած հայերի գոյության հանելուկը: Արաբացած հայերն իրենց մի աստիճան բարձր են համարում քրդացած հայերից, քանի որ նրանք ոչ թե դեմ են թուրքական պետությանը, այլ ընդհակառակը՝ թուրքական պետությունը հովանավորում է իրենց: Ավելին, թուրքական պետությունն արաբացած հայերին տալիս է զենք, զինամթերք, նույնիսկ աշխատավարձ, որպեսզի նրանք պայքարեն PKK-ական քրդերի դեմ և պահեն իրենց գյուղերը: Իսկ գաղտնիք չէ, որ հենց վերոնշյալ շրջաններում են, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա, տեղի ունենում քրդական հուզումները: Գաղտնիք չէ նաև, որ արդեն տևական ժամանակ այդ վայրերում ընթանում է չհայտարարված պատերազմ քրդական զինյալների և թուրքական կանոնավոր բանակի միջև: Եվ ահա այս պատերազմում արաբացած հայերը թուրքական պետության կողմից դիտվում են որպես լրացուցիչ պատնեշ քրդերի դեմ:

Չափազանց հետաքրքիր է քրդացած և արաբացած հայերի փոխհարաբերությունների հարցը, որի մասին նույնպես չկան

տվյալներ, բայց կարելի է արձանագրել, որ Թուրքիայում դավանափոխ հայերի երկու խմբեր կամա թե ակամա հայտնվել են հակադիր ճամբարներում:

Ինչպես պարզորոշ ցույց են տալիս փաստերը, ծպտյալ հայերի թեման ունի շատ ենթաշերտեր, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է յուրովի մոտեցում, և կարծում ենք՝ հետևողական աշխատանքները լույս կսփռեն այս խնդրի վրա, որը մեզ համար ունի ոչ միայն քաղաքական, այլև բարոյական և հոգեբանական նշանակություն»:

Թուրքիայում ապրող այլադավան հայերի խնդիրը Էթնիկ ինքնության հիմնախնդրի մի կարևոր մասն է կազմում, և բնական է, որ թուրքական պետական քարոզչամեքենան շահարկում է թեման՝ փորձելով այն օգտագործել հօգուտ իրեն: Այդ նույն համատեքստում կարելի է տեղավորել Հալաչօղլուի բազմիցս հնչեցրած այն պնդումները, թե 1915-ին հայերը չեն կոտորվել, այլ կրոնափոխ լինելով շարունակել են ապրել: Ի դեպ, այլադավան հայերի թեմայի այսօրինակ շահարկումը, փաստերի խեղաթուրումը և նման անտրամաբանական եզրակացության հանգեղը սպասելի էին շատերի, համենայնդեպս՝ մասնագետների համար: Սակայն կարևոր է դիտարկել, որ Հալաչօղլուի պնդումները լուրջ չեն ընկալվում նաև որոշ թուրք պատմաբանների կողմից: Կարծում ենք՝ այստեղ ավելորդ չէ մեջբերել նրանց մտքերը: Այսպես, հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամը, անդրադառնալով 1915-ին հայերի իսլամ ընդունելու խնդրին, նշում է. «1915 թվականին իրենց կյանքը փրկելու համար որոշ հայեր ընդունել են մուսուլմանություն: Սրան սկզբնապես թույլտվություն է տրվել, սակայն հետո, երբ գնալով ավելի մեծ թվով հայեր են սկսել իսլամ ընդունել, հատուկ հրամանով արգելվել է կրոնափոխությունը»: Խնդրին անդրադառնում են նաև Թուրքիայի մտավորական շրջանակների որոշ ներկայացուցիչներ: Այսպես, Թուրքիայի «Փերի» հրատարակչության սեփականատեր Ահմեթ Օնալը, ով ծնվել է Բինգյուլի Քիդրի գավառի ներկայումս Դոշլուջե անվանված նախկին հայկական Սըղանք գյուղում և որի տատը հայուհի է, հաստատելով այն փաստը, որ Հայոց ցեղասպանության ժամանակ, իրոք, որոշ հայեր իսլամ ընդունելու միջոցով փրկել են իրենց կյանքը, ասում է. «Իհարկե, որոշ հայեր փրկվել են ներկայանալով քուրդ ալևի: Օրինակ, Դերսիմի Մալագգիթթ գավառի Գարսանլար աշիրեթում կան հայեր, որոնք ողջ են մնացել, քանի որ ներկայացել են որպես քուրդ ալևի, սակայն այս փաստը հնարավոր չէ ընդհանրացնել»: Իսկ Թուրքիայում մեծ ճանաչում ունեցող «Թոփլումսալ թարիի» ամսագրի նախկին խմբագիր Օսման

Քոքերը նշում է, որ հայերն իսլամացվել են ոչ միայն 1915-ին, այլև սկսած այն ժամանակվանից, երբ թուրքերը հայտնվել են Անատոլիայում: Քոքերը նույնպես անհիմն է համարում Հալաչօղլուի պնդումները և կարծիք հայտնում, որ առնվազն անլուրջ է կարծել, թե հայերը կարող էին փրկվել այդպիսի պարզունակ միջոցով, այն է՝ հայտարարելով, թե քուրդ են կամ ալևի: Ըստ նրա՝ պետությունը մանրամասն գիտեր, թե որ գյուղերն են հայկական, որոնք՝ քրդական: Քոքերը պնդում է նաև, որ հայ կանանց և որբերի իսլամացումն այն ժամանակվա պետական քաղաքականության մի մասնիկն է եղել:

Հետաքրքիր է և կարևոր դիտարկել Թուրքիայի այլադավան հայերի խնդրի հրապարակայնացման՝ արդեն նկատվող ու հնարավոր արձագանքները հենց հավատափոխ հայերի շրջանակներում: Տասնամյակներ շարունակ իրենց իրական ինքնությունը թաքցրած կրոնափոխ հայերը կամ ավելի են ինքնամեկուսանում, կամ էլ հակառակը՝ գոտեպնդվում են այս ընդհանուր ալիքից, և նրանց գիտակցության մեջ որոշակի գործընթաց է սկսվում: Հենց դա են վկայում կրոնափոխ հայերի շրջանում վերջերս նկատվող որոշ երևույթներ: Արդեն բավական վաղուց է, որ Ստամբուլում տպագրվող «Ակոս» շաբաթաթերթում հանդիպում են տարբեր հայտարարություններ, պատմություններ, որոնք կապված են կրոնափոխ հայերի հետ: Նրանցից շատերը համարձակություն են ունենում հրապարակել իրենց ընտանիքների պատմությունները և փնտրել ազգականներին: Սակայն կրոնափոխ հայերի ինքնախոստովանական պատմությունները դարձել են նաև թուրքական մամուլի հետաքրքրության առարկան, օրինակ, «Յենի Աքթուել» հանդեսի 116-րդ համարում տեղ է գտել մի նյութ, որը վերնագրված է «Պատումն էն մուսուլման հայերը»: Հռոկվածում ներկայացված են կոնկրետ մարդիկ, ովքեր համարձակություն են ունենում խոստովանել իրենց հայկական ծագման մասին, և քանի որ նրանց խոսքերը փաստացի հաստատումն են մեր ներկայացրած տեսական պնդումների, ուստի հարմար ենք գտնում մեջբերել դրանցից մեկը: Այսպես, համշենցի Քամիլ Մուրիին, ով 25 տարի զբաղվում է փաստաբանությամբ, ասում է. «Ոմանք պնդում են, թե համշենցիները Միջին Ասիայից եկած թյուրքական ցեղերից են, սակայն ես կարծում եմ, որ դա այդպես չէ»: Եվ շարունակելով միտքը՝ որպես հայկական ծագում ունենալու ամենացայտուն գործոն է ներկայացնում լեզուն, այսինքն՝ Համշենի բարբառը, որը դեռ օգտագործվում է: Ըստ նրա՝ համշենցիների մեծ մասը, զոնե արտաքուստ, մերժում է իր հայ լինելու մասին պնդումները, և դա կապված է

այն հանգամանքի հետ, որ Թուրքիայում հայ լինելը կամ հայկական ծագում ունենալն ընկալվում է որպես վիրավորանք: «Մինչ այժմ շարունակ ուրիշներն են մեր անունից խոսել: Պետք է ի հայտ հանել համշենցիների հայկական ծագում ունենալու մասին իրականությունը և տեր կանգնել այդ իրականությանը: Սակայն մեր ժողովուրդը վախենում է հասարակության կողմից օտարացվելուց, և մեր հայկական ծագում ունենալը չպետք է պատճառ դառնա, որ մեզ մեկուսացնեն», - գտնում է համշենցի փաստաբան Քամիլ Մուրթին: Նա շրջանառության մեջ է դնում նաև մի փաստ, որը բոլորովին վերջերս է իմացել իր ընտանիքի ավագներից. «Պապերս 1914-1917 թվականների ընթացքում ժամանակավորապես Հոփայից գաղթել են Օրդու, և միգրացե սա արվել է նրա համար, որ հայերի տեղահանությունից իրենք էլ չտուժեն»:

Հարկ է նշել որ 2000-ականներից սկսած թուրքական մամուլում ակտիվացել են քննարկումները Թուրքիայում կրոնափոխ և ծպտյալ հայերի խնդրի շուրջ: Նման թեմաներից մեկն էլ թուրքական ցեղապաշտությամբ տառապող հայտնի իսլամացված հայերն են: Հարկ է նշել, որ նման որոշ հայեր էլ պատմության ընթացքում և ներկայումս էլ աչքի են ընկնում իրենց արտահայտված հայատյացությամբ և թուրք ազգայնամոլությամբ: Կա նաև տեսակետ, որ նրանցից շատերը հոգեբանորեն իրենց թշնամի են համարում հայության այն հատվածին, որն ի տարբերություն իրենց, կարողացել է հավատարիմ մնալ իր արմատներին:

Նման հայտնի իսլամացված հայերի ցանկ է ներկայացնում Իբրահիմ Աքսոյը «Հայ թուրքերը» հոդվածում, որը տպագրվել է 2006 թ. Օգ. «Navkurd» քրդական կայքէջում: Հոդվածագիրը բերում է նման հայերի մի քանի օրինակ, որոնց շարքում են նաև Աթաթուրքի հոգեդուստրը՝ Սաբիհա Գյոքչենը, Թուրքուր Օզալի մայրը՝ Հաֆիզե Օզալը, Դևլեթ Բահչելին, Մեսուր Յըլմազը և այլք⁵:

Ծպտյալ և այլադավան հայերի խնդիրը թուրք լրագրողների կողմից քննարկվել է նաև կրթական համակարգում նման հայերի առկայության համատեքստում: Այսպես, 2008 թ. Մեհմեդ Շևքերեզզը «Միլլի գազեթե» օրաթերթում գրելով, թե դեռևս 2005 թ. Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ 2-րդը Փարիզում հրատարակվող «Լա Քոուս» պարբերականին տված հարցազրույցում հայտարարել է, թե ներկայիս

⁵Անուրյան Մ., Ծպտյալ և իսլամացված հայերի հարցի արծարծումը ժամանակակից թուրքական մամուլում, Ցեղասպանական հանդես 2/1/, 2014:

Թուրքիայում գոյություն ունեն 1,5 մլն. հայկական ծագմամբ թուրքեր և մուսուլմաններ, և որ հայոց պատրիարքարանի տվյալներով՝ ամեն տարի հայկական արմատներով շուրջ 60 մահմեդականներ են դիմում պատրիարքություն, որպեսզի վերադառնան իրենց կրոնին, նա ավելացնում է, որ Թուրքիայում պաշտոնավարում են քրիստոնյա ծագում ունեցող մոտ 21 դեկաններ ու ռեկտորներ, որոնց տների գետնահարկերում զանգակատներ կան:

Մեկ այլ ազգայնամոլ հոդվածագիր Արսլան Բուլուբը 2008 թ. ապրիլի 6-ի հրապարակած՝ «Ծպտյալ հայ ազգային կրթական համակարգում» հոդվածում ընթերցողների ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ ազգային կրթության նախարարության կողմից հրատարակված՝ 11-րդ դասարանի աշխարհագրության դասագրքերում տպագրված քարտեզում Արարատ լեռը նշվել է հենց Արարատ ձևով, Թուրքական «Ադրըի» փոխարեն, և շեշտում. «Հայոց ցեղասպանության պնդման խորհրդանիշ հանդիսացող Արարատը թուրքական դասագրքերում հայերեն կարող էր գրել երակներում հայկական արյուն ունեցող մեկը»:

РЕЗЮМЕ

ИНОВАЕРНЫЕ И КРИПТОАРМЯНЕ В ТУРЦИИ

АЛИК САРГСЯН

Тема криптоармян и иноверных армян в предыдущих десятилетиях была в центре внимания турецких СМИ. Они были представлены как угроза, направленная на целостность Турции, но некоторые турецкие периодические издания выражают положительное отношение к таким армянам, представляя всю трагедию их историй.

Исламизированные или криптоармяне – результат турецкой диктаторской политики. Людей заставляли отречься от своей религии, национальности и языка. Это безмолвные и продолжительные свидетельства османской диктатуры. В тоже время эти люди и их потомки – бесспорное доказательство армянского геноцида, поскольку предотвращение геноцида четко аргументирует конвенция ООН, в 5-ом пункте 2-ой статьи, где геноцидом считается перевод одной этническо-религиозной группы детей в другую. А в годы геноцида десятки тысяч армянских сирот насильно исламизировали, и сегодня мы имеем дело с их потомками.

Ключевые слова: геноцид, иноверные армяне, криптоармяне, ассимиляция, мигранты, ислам, арменофобия, вероотступничество, этническая идентичность.

SUMMARY

OTHER RELIGIOUS AND HIDDEN ARMENIANS

ALIK SARGSYAN

In the last decade, the topic of hidden and other religious Armenians has been in the center of attention of the Turkish media. They were presented as a threat to the integrity of Turkey, but even so, some Turkish periodicals express a positive attitude towards such Armenians, presenting all the tragedy of their stories.

Islamized or hidden Armenians are the result of Turkish dictatorial policy. People were forced to deny their religion, nationality, language. These are silent and ongoing testimonies of the Ottoman dictatorship. At the same time, these people and their descendants are indisputable evidence of the Armenian Genocide, because Article 2, Clause 5 of the UN Convention on the Prevention of Genocide clearly states that converting the children of one ethnic-religious group to another ethnic-religious group is considered genocide. And during the years of the Genocide, tens of thousands of Armenian orphans were forcibly converted to Islam, and today we are dealing with their descendants.

Key words: *Genocide, (crypto) hidden Armenians, other religious Armenians, migrants, Christian Armenians, Muslim, Armenophobia, forcibly converted, ethnic identity.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ԷԴՈՒԱՐԴ Մկրտչյան – Արևմտահայ իրականությունը անցյալ դարի սկզբներին: Բացահայտումներ գրականագիտության լույսի ներքո</i>	<i>3</i>
<i>ՎԱՐԴԱՆ Հակոբյան – Եղեռնի կանխագագաթում ու գոյաբանական պայքարը արևմտահայ դասականների գործերում</i>	<i>13</i>
<i>ԶԻՆԱԲԴԱ Բալայան – Հայոց Մեծ ցեղասպանության կոնցեպցիան և Հակոբ Օշականի <Մնացորդաց> երկը</i>	<i>24</i>
<i>ՄՀԵՐ Քոմունց – Բուրդուր. Ղարաբաղ-Շամախիի միջբարբառային խմբի բարբառը Արևմտյան Անատոլիայում</i>	<i>34</i>
<i>ԿԻՄ Գաբրիելյան – Հայոց ցեղասպանության էքզիստենցիալ ընկալման առանձնահատկությունները խորհրդահայ արձակում</i>	<i>50</i>
<i>ՏԱԹԵՎ Սողոմոնյան – Կորուսյալ տան թեման Մուշեղ Բշխանի պոեզիայում</i>	<i>56</i>
<i>ՎԼԱԴԻՄԻՐ Հովսեփյան – Ցեղասպանության հանցակազմը երիտթուրքերի արարքներում (եղեռնագոհ հայ գրողներ) ...</i>	<i>64</i>
<i>ՄՀԵՐ Հարությունյան – Հայրենիքի պաշտպանության գործի տառիկները</i>	<i>74</i>
<i>ԳԵՂԱՄ Միքայելյան – Արևմտահայ գրական կյանքը Եղեռնից առաջ և հետո</i>	<i>99</i>
<i>ԱԼԻԿ Սարգսյան – Այլադավան և ծպտյալ հայերը Թուրքիայում</i>	<i>104</i>

Ստեփանակերտի
«Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված
համալսարան

**ԵՂԵՌՆԻ ԿԱՆԽԱԶԳԱՅՄԱՆ ԵՎ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՉԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Խմբագիրներ՝

**Չ. Վ. ԲԱԼԱՅԱՆ
Կ. Հ. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Համակարգչային էջադրումը՝ Գ. Մնացականյանի

*Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16
Ծավալը՝ 12.25 տպ. մասնույ: Տպաքանակը՝ 200:*

